Սյունյաց երկիր
ՍԱՎԿՈՒՄԱՅԻՆ

ԵՌԱՄՍՅԱ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

www.syuniacyerkir.am
syuniacyerkir@mail.ru

№20,
16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
2025Թ.

Մեղրի կամ պայծառանուն գավառ Արևյաց տուն

I
ՄԱՍ



ISSN 2738-2540

Մեղրի քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆԵՐԳԸ

Խոսք՝
Միքայել Նալբանդյանի,
երաժշտությունը՝
Բարսեղ Կանաչյանի

Մեր հայրենիք

Մեր Հայրենիք, ազատ, անկախ,
Որ ապրել է դարեդար,
Իր որդիքը արդ կանչում է
Ազատ, անկախ Հայաստան:

Ահա եղբայր, քեզ մի դրոշ,
Զոր իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղա,
Արտասուքով լվացի:

Նայիր նրան՝ երեք գույնով
Նվիրական մեկ նշան,
Թող փողփողի թշնամու դեմ,
Թող միշտ պանծա Հայաստան:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ յուր ազգի
Ազատության կզոհվի:

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՀԻՄՆԸ

Հեղինակ՝
Ռոբերտ Ամիրխանյան

Երազի իմ երկիր հայրենի

Երազի իմ երկիր հայրենի,
Հոգսերդ շատ, հույսդ մեծ,
Քարքարոտ երկիր:

Ես մի բուռն եմ քո հողի,
Ես մի ծիլն եմ քո արտի,
Ես մի թերթն եմ քո ծաղկի,
Հայրենի երկիր,
Հայաստան:

Երազի իմ երկիր հայրենի,
Հոգսերդ շատ, հույսդ մեծ,
Արծվաբուն երկիր:

Իմ պապերն են քեզ շահել,
Իմ եղբայրքն են քեզ պահել,
Քոնն են որդիքն իմ ջահել,
Հայրենի երկիր,
Հայաստան:

Համարի աջակիցը և հովանավորը

«Սյունյաց երկիր. մշակութային» եռամսյա հանդեսը տպագրվում է 2021 թվականից:

Հանդեսի սույն համարը տպագրվում է «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊ ընկերության հովանավորությամբ, ինչի համար երախտագիտություն ենք հայտնում Արևիք աշխարհի նվիրյալ, ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանին:



Մեղրի, համայնապատկեր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

...ՏԱՃԱՐ Է ՄԵՐ ԵՐԿԻՐԸ, ՍՈՒՐԲ Է ԱՄԵՆ ՔԱՐ

2 Հայաստանի Հանրապետության պետական օրհներգը՝ «Մեր հայրենիք»

2 Հայոց բանակի հիմնը՝ «Երազի իմ երկիր հայրենի»

3 Համարի աջակիցը և հովանավորը՝ Ազատ Գասպարյան

6 Օրհնության խոսք՝ «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի՝ Մեղրիի սրբավայրերին նվիրված համարի առիթով (Մակար եպիսկոպոս Հակոբյան, Սյունյաց թեմի առաջնորդ)

7 «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի խմբագրակազմին (Խաչատուր Անդրեասյան, Մեղրի համայնքի ղեկավար)

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

8 Արևիք-Մեղրիի գեղանիստ վանքերն ու եկեղեցիները՝ դարերի փորձություններին դիմակայած և մեր ինքնությունն անխաթար պահած (Սամվել Ալեքսանյան)

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԵՂՐԻ

9 Մեղրին՝ աստվածաշնչյան դրախտի կամ եդեմի մաս, որի հարավային եզերքով հոսում է Փիսոն կամ Գեհոն գետը (ներկայումս՝ Արաքս)

10 Թե ինչպես Սյունիքում տարածվեցին արդար արեգակի հոգեղեն ճառագայթները (հատված Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» երկից)

15 Թեմական առաջնորդներ

Մեղրիից (Տաթևի վանքում, Նորավանքում, Արցախի թեմում և Կոստանդնուպոլսի պատրիարքարանում)

16 Վանք մի պատվական և հաճոյական (Մեղրու Սբ Հովհաննես եկեղեցին (Անապաստանաց վանքը) կամ Մեղրո վանքը) (Մարո Նալբանդյան)

18 Անապաստանաց վանքի մասին՝ դարերի խորքից եկող հիշողություններ (Լիլիկ Պողոսյան)

20 Տասնամյակներ հետո դռները բացեց Մեղրու Սուրբ Հովհաննես եկեղեցին (Անապաստանաց վանք) (Վահրամ Օրբելյան)

21 Մեղրիի Սբ Հովհաննես (Անապաստանաց) վանքի 2016-20 թթ. պեղումներով հայտնաբերված մետաղական առարկաները (Արման Նալբանդյան)

25 Մեղրու Փոքր թաղի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (Մերի Դանիելյան)

26 Մեղրիի Փոքր թաղի եկեղեցին նորովի բացեց դռները (Վահրամ Օրբելյան)

28 Մեղրի քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցին

29 Մեղրեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին Շուշիում

30 Կարճևանի Սուրբ Ուխտը կամ Սուրբ Հովհաննեսը, որ նաև Նուխուդա Սուրբ Հովհաննես է կոչվում (Նաիրա Հայրապետյան)

31 Նյուվադի-Նռնաձորի սրբավայրերը

33 Թոսի եկեղեցին

34 Վերին կամ Հին Մալևու Ամենափրկիչ անապատ կամ Մալևու Ամենափրկիչ կուսանաց անապատը

35 Մալև ներքին կամ Մալև նոր

36 Քուջերթի եկեղեցին

37 Ափկեսի (Աբկեսի, Աբկեզի) եկեղեցին

38 Աղվանակ կամ Աղվո վանքը

39 Երկաստան, հանգած եկեղեցի լքված գյուղատեղիում

40 Կալերի Սուրբ Աստվածածին եկեղեցին

41 Մեղրի քաղաքի հյուսիս-արևելյան թաղամասի եկեղեցին

42 Նուշանցի Սուրբ Սարգիս եկեղեցին

43 Սրբացված բլուր Մեղրիում՝ Սուրբ Սարգիս անվամբ

44 Վանքի Սուրբ Աստվածածին եկեղեցին

45 Թխկուտի Սուրբ Հակոբ եկեղեցին

46 Նորաշենք գյուղի եկեղեցին

46 Մեղրի քաղաքի Մկաց աղբյուր սրբավայրը

47 Շվանիձորի Սուրբ Աստվածածին եկեղեցին

48 Շվանիձորի գյուղամիջի խաչքարերը (երեք խաչքար) Կարեն Առաքելյանի տան մոտ

48 Շվանիձորի Սուրբ Սարգիս մատուռը

49 Գոմերանցի եկեղեցին

50 Բերդին քար ամրոցի գագաթի խաչը

51 Վերին շենի եկեղեցին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

52 Վահրավարի Սուրբ Գևորգ եկեղեցին

53 Կարմրավանքի եկեղեցին

54 Գուդեմնիսի Սուրբ Աստվածածին եկեղեցին

55 Կարճևանի Սուրբ Աստվածածին եկեղեցին

56 Հըզերակի կամ Ագարակի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին

57 Կուրիսի Սուրբ Սարգիս կամ Սուրբ Ստեփանոս եկեղեցին

58 Զվարավանք

59 Լիճքի Սուրբ Կարապետ եկեղեցին

60 Տաշտունի Սուրբ Ստեփանոս եկեղեցին

61 Արդյո՞ք Լուսկա վանքը կամ Լուսկե վանքը Լիճքվազ լքյալ գյուղում է եղել

62 Կնցավերի հանգած եկեղեցի կամ Կնցավերի խաչ (գ. Կարճևան)

ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

63 Ճարտարապետական հայացք Մեղրու եկեղեցիներին և վանքերին (Մուրադ Հասրաթյան)

67 Եվս մի քանի դրվագ Մեղրու հոգևոր-մշակութային կյանքից (Սերգեյ Ջհանգիրյան)

71 Վահան Տեր-Գրիգորյան՝ Մեղրիից Արցախ (Նաիրա Հայրապետյան)

77 Ստեփանոս Մեղրեցի (Ռոբերտ Էջանանցի)

78 Մեղրի, օրհնյալ եզերք՝ նվիրագործված ձայնապետ ու ձայների արքա Կոմիտասի հուշով (Լիլիկ Պողոսյան)

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

80 Վահրավարի ավետարանը (Արսեն Հարությունյան)

81 Տաշտունի ավետարանը (Սերգեյ Ջհանգիրյան)

82 Քուջերթի ավետարանը

ՈՐՄՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

83 Մեղրու եկեղեցիների նկարազարդման առանձնահատկությունները (Քնարիկ Ավետիսյան)

85 Մեղրիի Փոքր թաղի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու «Ահեղ դատաստան» որմնանկարի պատկերագրական առանձնահատկությունները (Գայանե Պողոսյան)

88 Մեղրիի Անապաստանաց վանքի որմնանկարները (Ավետիս Ավետիսյան)

92 Մեղրու Փոքր թաղի Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարների շերտերը, ժամանակաշրջանն ու հեղինակների խնդիրը (Ավետիս Ավետիսյան)

97 Կարճևանի Սուրբ Աստվածածին եկեղեցու որմնանկարները, որոնց հեղինակն է Աստվածատուր Աստապատցին (Ավետիս Ավետիսյան)

99 Մեղրու Սուրբ Հովհաննես եկեղեցու (Անապաստանաց վանք) կամ Մեղրո վանքի որմնանկարները

100 Մեղրո Փոքր թաղի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարները

101 Մեղրի քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու որմնանկարները

102 Կարճևանի Սուրբ Աստվածածին եկեղեցու որմնանկարները

2001 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵՂՐԻՈՒՄ ԿԱՆԳՆԵՑՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ ՈՐ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՍՐԲԱՎԱՅՐ Է ԴԱՐՁԵԼ

103 «Կեցցե՛ Հայաստան, կեցցե՛ Հայաստան». Մեղրու մեծ զավակ Փարամազի վերջին խոսքն էր 1915 թ. հունիսի 2-ին Կոստանդնուպոլսի սուլթան Բայազետի հրապարակում՝ կախաղահանության պահին

103 Միջնադարյան Հայաստանի նշանավոր ամրոցներից մեկը՝ Մեղրու բերդը

104 Հիմն Մեղրիի (խոսք և երաժշտություն՝ Աստղիկ Գրիգորյանի)

Սյունյաց երկիր Մշակութային

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2021Թ. ՄԱՐՏԻ 30-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Հղումը «Սյունյաց երկիր. մշակութային» պարբերականին պարտադիր է: Հրատարակվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ»

հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 13 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1000:
Ստորագրված է տպագրության 10.12.2025թ.:

Օրհնության խոսք՝ «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի՝ Մեղրիի սրբավայրերին նվիրված համարի առիթով

ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱԿՈԲՅԱՆ
Սյունյաց թեմի առաջնորդ

Սիրելի՛ եղբայրներ և քույրեր

Աստծո շնորհով ու խաղաղությամբ ողջունում եմ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմին և ընթերցող հասարակությանը՝ Մեղրիի սրբավայրերին նվիրված այս հատուկ թողարկման լույս ընծայման առթիվ:

Մեղրին՝ Սյունյաց աշխարհի արևաշող և օրհնված համայնքը, մեր հայրենիքի այն անկյուններից է, որտեղ յուրաքանչյուր բարձունք ու քար խոսում է հավատքի ու տոկունության մասին: Դարերի փորձությամբ զտված սրբավայրերը մեր ժողովրդի անսասան ոգու, Աստծո հանդեպ սիրո և Սյունյաց հողի վրա Տիրոջ անքակտելի օրհնության կենդանի վկաներն են:

Այսօր, երբ մեր հայրենիքի սահմաններն ու հոգևոր արժեքները կրկին կանգնած են մարտահրավերների առաջ, առավել կարևոր է հիշել ու ճանաչել այն սրբավայրերը, որոնք պահպանում են մեր հավատքի կրակը և ամրացնում մեր ոգին:

Թող այս թողարկումը մեր հավատացյալ ժողովրդի համար լինի ոչ միայն պատմական ու մշակութային արժեքների ճանաչման միջոց, այլև հոգևոր վերազարթոնքի առիթ:

Աղոթում եմ, որ Ամենակալ Տերը օրհնի «Սյունյաց երկիր» թերթի բարի ծառայությունը՝ ի փառս Աստծո և ի շահ մեր ազգի:

Թող Սուրբ Հոգին զորացնի ձեր գիրը՝ լուսավորելու մարդկանց միտքն ու սրտերը դեպի ճշմարիտ լույսը՝ Քրիստոս:

Քրիստոսի սիրով և հայրական օրհնությամբ՝

ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱԿՈԲՅԱՆ
ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

«Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի խմբագրակազմին

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
Մեղրի համայնքի ղեկավար

Հարգելի բարեկամներ

Ողջունում եմ «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի հերթական համարի թողարկումը, որը նվիրված է Մեղրու տարածաշրջանի քրիստոնեական սրբավայրերին:

Տեսնում եմ՝ համակ ուշադրությամբ եք հետևում տարածաշրջանում կատարվող աշխատանքներին ու զարգացումներին և հետևողականորեն լուսաբանում, ինչը գնահատելի է ու երախտագիտության արժանի:

Տեղյակ եմ նաև՝ դեռևս տարիներ առաջ եք սկսել ուսումնասիրություններ կատարել և նյութեր հավաքել տարածաշրջանի վերաբերյալ՝ մեկ առ մեկ այցելելով համայնքի բնակավայրեր, այդ թվում՝ լքյալ բնակավայրեր, ինչն էլ վկայում է ներկայացվող նյութերի արժանահավատության և սկզբնաղբյուրային նշանակության մասին:

Մեղրուն վերաբերյալ թողարկումների առաջին մասը նվիրելով տարածաշրջանի քրիստոնեական սրբավայրերին՝ դուք նախադեպը չունեցող քայլ եք կատարում, որի շնորհիվ մենք նորովի և առավել հանգամանալից ենք ծանոթանում համայնքի տարածքում գտնվող տասնյակ եկեղեցիներին, վանքերին ու մատուռներին, որոնք գալիս են առաքյալների ժամանակներից:

Նոր և ամբողջական տեղեկություններ ենք ստանում մեր գրչության միջնադարյան կենտրոնների, որմնանկարչական արվեստի անզուգական դրսևորումների և ընդհանրապես հայոց հոգևոր-մշակութային կյանքում Մեղրու ունեցած դերակատարության մասին:

Հարգանք ձեզ՝ մեծ ու նվիրական աշխատանքի համար:

Ակնկալում ենք, որ հանդեսի 1-ին մասին կհաջորդեն 2-րդ և 3-րդ հատորները:

ԱՌԱՋՆԱԿԱՆ

Արևիք-Մեղրիի գեղանիստ վանքերն ու եկեղեցիները՝ դարերի փորձություններին դիմակայած և մեր ինքնությունն անխաթար պահած

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Սյունյաց աշխարհի 12 գավառից իններորդին՝ Արևիքին, հատուկ համար նվիրելը տարիների մեր երազանքն է եղել: Եվ վերջին 10-15 տարում հաջողվել է այդ թեմայի շուրջ մեծ քանակությամբ ու բազմաբովանդակ նյութեր հավաքել կամ պատրաստել: Հիմա ժամանակն է՝ դրանք ընթերցողի սեղանին դնել...

Սակայն թերթի ձևաչափը, ցավոք, հնարավորություն չի ընձեռում՝ Մեղրու վերաբերյալ առկա նյութերն ամբողջապես զետեղել մեկ համարում:

Ուստի և Մեղրու մասին կունենանք առնվազն երեք թողարկում:

Առաջին մասը կամ առաջին թողարկումը, ինչպես տեսնում եք, նվիրում ենք Արևիք-Մեղրիի քրիստոնեական սրբավայրերին կամ փորձում ենք Մեղրին նախ և առաջ ներկայացնել իբրև հոգևոր տարածք, ինչպես որ կա իրականում:

Իսկ թե ինչո՞ւ նախապատվությունը տվեցինք այդ թեմային՝ կպարզաբանենք ստորև:

Նախ՝ մեծ ցավով ու ափսոսանքով ենք նկատում, որ թուրք-ադրբեջանական քարոզիչները (լրատվամիջոցներ, պատմաբաններ) հետևողականորեն (հատկապես 2025 թ. օգոստոսի 8-ի վաշինգտոնյան պայմանավորվածություններից հետո) հայոց Սյունիքի Արևիք գավառը կամ Մեղրու տարածաշրջանը դիտարկում են իբրև ադրբեջանական տարածք:

Ցավով ու ափսոսանքով նկատում ենք նաև, թե հայագիտական մեր շրջանակներն ինչպիսի լռությամբ են հետևում այդ կեղծարարություններին:

Իրականում, մինչդեռ, Մեղրու տարածքը հայոց աշխարհի ամենաքրիստոնեական միջավայրերից է եղել ու կա:

Ավելին՝ Մեղրին աստվածաշնչյան դրախտի կամ եդեմի մաս է եղել ու կա, որի հարավային եզերքով հոսում է Սուրբ գրքի Փիսոն կամ Գեհոն գետը (ներկայումս՝ Արաքս):

Այնուհետև՝ ինչպես Սյունիքի մեծահռչակ և ստուգապատում տարեգիր Ստեփանոս Օրբելյանն է փոխանցում՝ **«... Հայերից նախ հավատացյալ դարձան սյունեցիները, որոնք սուրբ Ավետարանին հնազանդվեցին Բարդուղիմեոս սուրբ առաքյալի միջոցով»:**

Բարդուղիմեոսը՝ իր աշակերտներով, գալիս է Ատրպատականով և անցնելով Երասխը՝ մտնում է Սիսականի սահմանները և առաջինը սկսում քարոզել Արևիքում, Գողթնում, Բաղքում...

Ասել է թե՝ Հայոց աշխարհում արդար արեգակի հոգեղեն ճառագայթները նախ և առաջ ծագեցին Սյունիքի մի քանի գավառում, այդ թվում՝ Արևիքում:

Պատմական այդ իրողությունը, կարծեք, անդրադարձներ է ունեցել Արևիք-Մեղրու հետագա ամբողջ ընթացքի վրա:

Անդրադարձներից մեկն այն է, որ քրիստոնեության վաղ շրջանում նաև Արևիքում ասպարեզ եկան բազմաթիվ նշանավոր վանքեր ու եկեղեցիներ, որոնց մասին հիշատակում են մեր պատմիչները՝ **Մեղրո վանք, Լուսկեվանք, Լիեվանք, Զվարավանք, Կալերո վանք, Կարճևանի սուրբ ուխտ...**

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 12

Մեղրին՝ աստվածաշնչյան դրախտի կամ եդեմի մաս, որի հարավային եզերքով հոսում է Փիսոն կամ Գեհոն գետը (ներկայումս՝ Արաքս)

ԲՐԻՍՏՈԼԵԱԿԱՆ ՄԵՌՈՒ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԵՂՐԻ

Թե ինչպես Սյունիքում տարածվեցին արդար արեգակի հոգեղեն ճառագայթները

Հատված Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» երկից

ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԶՐՈՒՅՑՆԵՐ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ՍՈՒՐԲ ԱՌԱՔՅԱԼԻ՝ ՄԵՐ ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԸ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ...

Ամենից առաջ ինձ համար կարևոր ու չափազանց անհրաժեշտ էր ցույց տալ հենց այս, թե հայերից նախ հավատացյալ դարձան սյունեցիները, որոնք սուրբ Ավետարանին հնազանդեցվեցին Բարդուղիմեոս սուրբ առաքյալի միջոցով. և անտեղի չէ այժմ դա շարադրել: Բարդուղիմեոսը Պարսկաստանից վերադառնալիս իր աշակերտների հետ գալիս է Ատրպատականով[99] և անցնելով Երասխ գետը՝ մտնում է Սիսականի սահմանները, սկսում է քարոզել Որդվատ գյուղում[100], Արևիք գավառում[101], Բաղքում[102] և Գողթնում[103]: Սրանք, ընդունելով Ավետարանի քարոզությունը, լուսավորվեցին ավազանի մկրտությամբ՝ Բարդուղիմեոս սուրբ առաքյալի շնորհիվ: Ապա սուրբ առաքյալը կառուցում

ԹԱԴԵՎՈՍԻ ՈՒ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍԻ ՄՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ. ԴՈՒԲԱՅ, ՇԱՐԺԱ. կտավ, յուղաներկ, ակրիլ, 200x160 սմ, 1998 թ.

է եկեղեցի Գողթնի արևմտյան ծայրամասում, մի ժայռի վրա, իրենց կացարանի գրաված տեղում: Նրա անունը կոչեցին Տյառնընդառաջ և այնտեղ մեծամեծ հրաշքներ գործեցին: Քանի որ Որդվատ գյուղում վնասակար էր ջուրը, որ ամեն տարի ոռոգում էր բոլոր դաշտերն ու այգիները, աղոթեցին ու հանկարծակի խափանեցին այդ ջուրը, որի տեղը դեռ մինչև այսօր էլ երևում է:

Գավառի իշխանն էր Շարը, որ ուներ որդի՝ Խոսրով, թոռ՝ Վահան և կին՝ Նշնա: [Բարդուղիմեոսը] նրանց համար վերակացու է նշանակում, որպեսզի նորից չմոլորվեն կռապաշտությամբ: Իր աշակերտներից մեկին՝ Կումսի անունով, ձեռնադրելով եպիսկոպոս ու նրան հանձնելով սուրբ հոգուն՝ ինքը գալիս է Վանանդ գյուղը[104]: Այնտեղ նրա աշակերտներից մեկը՝ Լուսիկ անունով, վախճանվեց, որին թաղեցին նույն տեղում ու գերեզմանի վրա շինեցին մի փոքրիկ մատուռ: Եվ մինչև այսօր [այնտեղ] կատարվում են մեծ հրաշքներ, բժշկություններ. գերեզմանի հողը կատաղիներին խիստ հնազանդության է բերում: Այնտեղ կար և մի կռատուն, այն էլ կործանեց և տեղում կառուցեց անշուք մի եկեղեցի ու կոչեց սուրբ Թովմայի անունով, որտեղ բազմաթիվ հրաշքներ են տեղի ունենում: Ապա սուրբ առաքյալը այնտեղից դուրս գալով գնաց Հայաստանի մայրաքաղաքը՝ Դվին: Այնուհետև վախճանվեց Կումսին, և տեղացի այն հավատացյալները չկամեցան առանց առաջնորդի մնալ, բայց ոչ մի տեղից ակնկալություն չունեին: Ապա իրենց առաջնորդ դարձրին մի օտարականի[105] Բաբելաս անունով: Սրանից հետո քաջալերվելով սուրբ հոգուց՝ ուղարկեցին սուրբ Թադեի մոտ Մուշե անունով մի մարդու, որը չկարողացավ այնտեղից վերադառնալ: Եվ այսպես կրոնասերները մնացին առանց առաջնորդի՝ բնակվելով այս ու այնտեղ: Ոմանք, պատսպարվելով Դարու[106] լեռան վրա, իրենց կյանքն անցկացնում էին մենավորությամբ և երկար ժամանակ քարոզում էին շատերին՝ մինչև մեծ Լուսավորչի Հայաստան գալը և մեր ամբողջ Հայոց երկիրը լուսավորելը: Ապա սրանք գնացին ու իրենց առաջնորդ խնդրեցին, և [Լուսավորիչը] տվեց մի տարոնացի մարդու՝ Մովսես անունով[107]: Սրան հաջորդեց տարոնացի Սահակը, ապա՝ Ստեփանոսը, ապա՝ Զրվանդատը, ապա՝ Հովհաննեսը: Եվ այսպես կարգի են ընկնում՝ մեկը մյուսին փոխանորդելով մինչև այժմ: Բայց իմացիր, որ գողթնեցիները Սյունիքից մեկուսացած չէին, այլ առաջ ժամանակ, երբ մեր Հայոց երկրում եպիսկոպոսներ նշանակված չէին և հավատացյալ չէին, սրանք տեսուչներ ունեին առանձին: Իսկ երբ սուրբ Գրիգորը լուսավորեց Հայաստանը և սահմանեց եպիսկոպոսների պաշտոնն ու աստիճանը, սրանց հանձնեց Սյունիքի եպիսկոպոսներին, որպեսզի հնազանդությամբ նրանց հրամանին ենթարկվեն: Սրա մասին վկայում են առաջին կաթողիկոսների շրջաբերական թղթերը, գավառների եկեղեցական հին հարկացուցակը, որը իր մեջ լրիվ ընդգրկում է նաև ամբողջ Գողթան գավառը: Նույնպես և Գողթան իշխանները ոչ թե ուրիշ տոհմից էին, այլ՝ նույն Սիսական ցեղից, ինչպես ցույց է տալիս Մովսես Խորենացին

Ծանոթագրություն

99. Երկրամաս Պարսկաստանի հյուսիսային մասում՝ ընկած Ուրմիա լճի և Կասպից ծովի միջև: Այժմյան իրանական Ադրբեջանն է: (էջ 76):
100. Այս տեղանունը մինչև մեր ժամանակները պահպանված է Օրդուբադ ձևով, որն այժմ էլ կրում է համապատասխան բնակավայրը Նախիջևանում:
104. Գյուղ Երնջակ գավառում: (էջ 77):
105. Բնագրում գործածված է խուժիկ: Այս բառը մեր լեզվում իրանյան փոխառություն է և բուն նշանակում է «խուժաստանցի» (տե՛ս Հ. Աճառյան, «Հայերէն արմատական բառարան», համապատասխան բառահոդվածը): Մ. Բրոսեն թարգմանել է etranger «օտարական» (ֆրանս. թարգմ., էջ 12): Սա հավանական է, որպես և թարգմանեցինք մենք: (էջ 77):
106. Փարիզյան հրատարակության մեջ այս լեռան անունը Գարու ձևով է (ի լերինն Գարուայ), մոսկովյան հրատարակությունն ունի Դարու (Դարուայ): Բրոսեն իր ֆրանսերեն թարգմանության մեջ տվել է Daron ձևով (անդ, էջ 12): Ալիշանը, հենվելով իր ժամանակի ճնշման, ինչպես և այլ վկայությունների վրա, ընդունել է Դարու ձևը (տե՛ս «Սիսական», էջ 448): Ճիշտը վերջինս է, դա հաստատվում է նաև N 6271 լավագույն ձեռագրով, որն ունի Դարուայ (էջ 19 բ): Ուստի մենք արտահայտեցինք Դարու ձևով: (էջ 77):
107. Ինչպես նկատել է Կ. Շահնազարյանը (փարիզյան հրատ., հ. 1-ին, էջ 318), սա հակասում է Օրբելյանի երկի Ե գլխում արված այն հիշատակությանը, թե Գրիգոր Լուսավորիչը Սյունիքին տալիս է առաջին եպիսկոպոսը Գրիգորիոս անունով, որը հիշվում է նաև պատմիչի երկի ՀԲ գլխում: Է գլխում ևս նշվում է, որ Սյունյաց եպիսկոպոսությունը սկզբնավորվել է Գրիգորից:

ՀՈՒՇԱՐԱՆ

Արևիք-Մեղրիի գեղանիստ վանքերն ու եկեղեցիները՝ դարերի փորձություններին դիմակայած և մեր ինքնությունը անխաթար պահած

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 8

Վանական մի շարք հաստատություններ այնպիսի նշանակություն ձեռք բերեցին, որ նրանց գտնվելու վայրերը (բնակավայրերը) կոչվեցին տվյալ սրբավայրերի անվամբ՝ **Աղվո վանք, Աբկավանք, Մեղրո վանք, Որդիշո վանք, Խոլավանք, Լոհավանք, Լուսկավանք (հավանաբար՝ առաքյալի Լուսիկ կոչված աշակերտի անունով), Զվարկի վանք, Կուրավանք...** Մինչև հիմա էլ տարածաշրջանում կան վանք բաղադրիչով գյուղանուններ՝ Վանք, Ալվանք...

Այս հարցում ուրույն կարծիք ունի Ղևոնդ Ալիշանը. **«Սրանց մեջ, ինչպես տեսնում ենք, աչքի են ընկնում «վանք» բառով կազմված բարդությունները, և պատշաճ եմ նկատում հասկանալ ընդհանուր նշանակությամբ, այսինքն՝ մենակեցական բնակարանների իմաստով, քանզի այս գավառը որքան անծանոթ և անհիշատակ է քաղաքական պատմության տեսակետից, նույնքան քաջածանոթ է թվում համաձայն քրիստոնեական կրոնի՝ Բարդուղիմեոսի և նրա աշակերտների քարոզությամբ...»:**

Երբ փորձում էինք շատ թե քիչ ճշտել Մեղրու քրիստոնեական սրբավայրերի ցանկը, անվանումները և տեղագրությունը՝ երիցս ակնհայտ դարձավ՝ **տարածաշրջանում չի եղել գոնե մեկ բնակավայր, որտեղ վանք կամ եկեղեցի չլիներ ու չգործեր: Որոշ բնակավայրերում նույնիսկ մի քանի եկեղեցի է գործել:**

Այդ փաստը ևս մեկ ապացույց է առ այն, որ Մեղրու տարածաշրջանում այլադավաններ ու այլազգիներ ամբողջ միջնադարում չեն բնակվել (ճիշտ է՝ եկել ու ժամանակավորապես տիրացել են, բայց հետո դուրս են մղվել: Տարածաշրջանն այլադավաններով բնակեցվեց հատկապես Բաղքի (Կապանի) թագավորության անկումից, ինչպես և Դավիթ Բեկի գլխավորած ազատագրական պայքարի մարումից հետո): **Անգամ Նռնաձոր-Նյուվադիում երբեք թուրքական ծագումով բնակիչներ չեն եղել: Նշանավոր ճանապարհորդ, բնագետ և հնէաբան Դյուբուա դե Մոմպերրեն՝ 1843 թ. ապրիլին լինելով այդ գյուղում, հանդիպելով տեղի բնակիչների հետ, արձանագրում է, որ Նյուվադիի կամ Նյուղադիի բնակիչները ծագումով հայեր էին:**

Այդ փաստը հիշատակում է նաև Ղևոնդ Ալիշանը «Սիսական» կոթողային գործում:

Ավելին, Ըռնաձոր կամ Էռնաձոր անվամբ այդ ձորը մինչև այսօր բազմաթիվ վկայություններ է պարփակում իր մեջ, որոնք մեր ինքնությունը հավաստող հավելյալ վկայություններ են՝ դարերի խորքից եկող:

Ցավոք, Մեղրու տարածաշրջանի վանքերից ու եկեղեցիներից շատերն այսօր ավերված են, խոնարհված, ամայի ու թափուր՝ շենությունից: Մի խոսքով՝ քչերն են դրանցից լուսավորության մեջ:

Նման վիճակը հետևանք է այն փորձությունների, որի միջով դարեր շարունակ անցել է Մեղրու տարածաշրջանը:

Ուշագրավ մի հանգամանք, որ պատմիչները վաղուց են նկատել. **սրբազան մեր երկրի վրա եկած բոլոր զավթիչները սոսկ տարածք նվաճելու խնդիր չեն ունեցել, այլ մեր ինքնությունն ու հավատը պահպանող սրբավայրերը ոչնչացնելու գերնպատակ:** Դրա օրինակներից մեկը Մեղրու տարածաշրջանում ավերված բազմաթիվ եկեղեցիներն ու վանքերն են:

Աստծո այդ տաճարների ավերումներն այնքան հետևողական են իրագործվել, որ բազմաթիվ վանքերի ու եկեղեցիների տեղն առ այսօր հնարավոր չէ ճշտել, քանզի ավերել են հիմնովին ու հողին հավասարեցրել:

Այսօր՝ մեր ինքնության դեմ պայքարողները, ինչպես տեսնում ենք, նույն կերպ թիրախավորում են Հայ առաքելական եկեղեցին՝ իր տաճարներով ու իր հոգևոր բովանդակությամբ:

Այդ բոլորով հանդերձ՝ ներկայացնում ենք 40 սրբավայր (կանգուն կամ խոնարհված)՝ համառոտ տեղեկություններով:

* * *

Մենք արդեն առիթ ենք ունեցել ասել՝ 1300 տարի շարունակ՝ 6-7-րդ դարերից մինչև 19-րդ դարասկիզբ, Սյունիքը եղել է նկարազարդ ձեռագրերի կամ մանրանկարչության արարման կարևոր տարածաշրջան: Պատկերազարդվել են գրքեր, Ավետարաններ, կրոնական-ծիսական ժողովածուներ, մատյաններ...

Այսօր արդեն կարող ենք փաստել՝ ձեռագրական մշակույթի միջավայր է եղել նաև Արևիք գավառը՝ վանքերով ու եկեղեցիներով:

Համարում ներկայացնում ենք Քուջերթի ավետարանը (1678 թ.), Վահրավարի ավետարանը (1323 թ.), Տաշտունի ավետարաններից մեկը (1661 թ.):

Այդ ուղղությամբ կատարվող աշխատանքները, ցավոք, չկարողացանք ավարտին հասցնել, թեև Մատենադարանի մեր բարեկամների հետ բավականին ջանքեր գործադրեցինք:

Մասնավորապես չհաջողվեց գտնել՝

- 14-րդ դարում՝ ենթադրաբար Գլաձորում կերտված ու Թորոս Տարոնացու կողմից ծաղկած ավետարանը, որը 1493 թ. Կալեր գյուղում ենթարկվել է վերանորոգության,
- մինչև 1930-ականների սկիզբը Մանլևի եկեղեցում պահված՝ Գլաձորում 1313 թ. արտագրված մի ավետարան, որի ծաղկողը մեծահամբավ Մոմիկն էր, այն 1930-ականների սկզբին ձեռք է բերվել Պատմության թանգարանի արշավախմբի կողմից,
- պատմության թանգարանի արշավախմբի կողմից Շվանիձորի Սուրբ Աստվածածին եկեղեցում գտնվել է (1930-ականների սկիզբ) Եղեգիսում 1297 թ. արտագրված մի ավետարան, որը 1378 թ. նկարազարդվել է Գրիգոր Տաթևացու կողմից. գիտական շրջանակներում այդ մատյանը ստացել է նաև «Շվանիձորի կարմիր ավետարան» անվանումը,
- Տաշտունի մյուս ավետարանը,
- Վանքի ավետարանը (1678 թ.),
- Մանլևի ճաշոցը (1664 թ.),
- Մեղրիի՝ 1505 թվականով թվագրված ժողովածուն,
- 2019 թ. Մեղրիիում գտնված հմայիլը՝ 7 մ երկարությամբ, որը տեղափոխել են Երևան:

Վերոգրյալ ձեռագրերի, մատյանների փնտրտուքը, կարծում ենք, պետք է շարունակվի, որովհետև (ամեն ին-

չից զատ) դրանք բացառիկ վկայություններ են այն մասին, որ Մեղրիի վանքերն ու եկեղեցիները միջնադարում եղել են նաև գրչության կենտրոններ:

* * *

Առանձնահատուկ են Մեղրու վանքերի ու եկեղեցիների որմնանկարները:

Ավելին՝ Արևիքի սրբավայրերի ներքին հարդարանքի լուծումները՝ թեմատիկ տեսարանների ընտրություն և տեղաբաշխում, ծաղկանկարների առատ գործածում և այլն՝ նոր մոտեցումներ էին որմնանկարչության մեջ:

Այդ հարցերին պատշաճ ուշադրություն է դարձվում. **դրանում մեզ օգնել են արվեստագիտության թեկնածու, դոցենտ Քնարիկ Ավետիսյանը, արվեստագիտության թեկնածու Գայանե Պողոսյանը, Որմնանկարների վերականգնման գիտահետազոտական կենտրոնի ներկայացուցիչ Ավետիս Ավետիսյանը:**

Համարում քննարկվում է նաև որմնանկարների հեղինակների հարցը:

Մեղրու Փոքր թաղի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու 1793 թ. որմնանկարների, ինչպես և Կարճևանի Սուրբ Աստվածածին եկեղեցու որմնանկարների հեղինակից՝ Աստվածատուր Աստապատցուց բացի մյուս հեղինակները, որքան գիտենք, հայտնի չեն:

Որմնանկարների հեղինակների հարցը դիտարկվում է համեմատությունների մեջ՝ նկատի ունենալով Արևիքի եկեղեցաշինական ավանդույթների նմանությունը Երնջակի, Գողթանի եկեղեցաշինությանը:

Ուստիև որոշ որմնանկարներ վերագրվում են հռչակավոր Հովնաթանյան տոհմի նշանավոր ներկայացուցիչներին, անգամ նույն տոհմի հիմնադիր՝ բանաստեղծ, տաղերգու, նկարիչ Նաղաշ Հովնաթանին:

Ներկայացվում է որմնանկարների թեմատիկ բազմազանությունը: Օրինակ, Մեղրու Փոքր թաղի եկեղեցում տեսնում ենք քրիստոնեական արվեստի ամենաբարդ և նշանակալի պատկերներից մեկը՝ **«Ահեղ դատաստանը»՝ կատարողական բարձր մակարդակով ներկայացված:**

Ըստ սյուժեի՝ Քրիստոսն իր դատաստանով բաժանելու է արդարներին մեղավորներից՝ հատուցելով յուրաքանչյուրին ըստ իր գործի, վարձատրելով ճշմարիտ հավատացյալներին, պատժելով չհավատացողներին, ապստամբներին, փարիսեցիներին, մեր սրբությունները պղծողներին:

Ինչևէ, համարը հանգամանալից տեղեկություններ է պարունակում Մեղրու Սուրբ Հովհաննես եկեղեցու (Անապաստանաց վանքի), Մեղրու Սուրբ Աստվածածին եկեղեցու, Մեղրու Փոքր թաղի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու, Կարճևանի Սուրբ Աստվածածին եկեղեցու նկարազարդումների մասին: Դրանք, առանց չափազանցության, հայ կերպարվեստի այդ ժամանակաշրջանի լավագույն ստեղծագործություններից են և աչքի են ընկնում կատարման բարձր վարպետությամբ:

* * *

Համարում, շնորհիվ Մուրադ Հասրաթյանի ուսումնասիրության, ճարտարապետական հայացք ենք ձգում Մեղրու եկեղեցիներին ու վանքերին:

Ըստ Մուրադ Հասրաթյանի՝ հայ ճարտարապետության համար մեծ արժեք են ներկայացնում գմբեթավոր եկեղեցիները, որովհետև Սյունիքի 17-րդ դարի նույնատիպ տաճարները կառուցված են որպես թաղածածկ դահլիճներ կամ եռանավ բազիլիկներ:

Մեղրու գմբեթավոր երեք եկեղեցիներն են՝ Մեղրու վանքի, Մեղրու Մեծ թաղի և Տաշտունի եկեղեցիները:

Մեղրիի եկեղեցական ճարտարապետության մեջ տարածված են եղել Т-աձև մույթով եռանավ բազիլիկները (Լիճքի Սուրբ Կարապետ ու Մալևի Ամենափրկիչ անապատի եկեղեցիներ):

Մեղրու տարածաշրջանում 17-րդ դարում կիրառվել է պաշտամունքային կառուցվածքների մի հետաքրքիր ենթատիպ՝ որմնախորշերով թաղածածկ դահլիճի հորինվածք, որն այդ ժամանակաշրջանում հայոց մեջ հանդիպում ենք միայն Մեղրիում:

Այդ տիպի լավագույն օրինակներ են Վահրավարի Կարմրավանքը և Զվարավանքը:

– Այսպիսով, 17-րդ դարում հարավային Սյունիքում՝ վերցնելով գմբեթավոր սրահի հորինվածքը (հատակագծային լուծումը լրիվ, իսկ ծավալայինը՝ մասամբ), ստացան թաղածածկ դահլիճի մի նոր ենթատիպ՝ որմնամույթերով դահլիճ, – գրում է Մուրադ Հասրաթյանը: **- Եվ պաշտամունքային կառուցվածքներ այս հորինվածքով հանդիպում են միայն Սյունիքում, իսկ իր ավարտուն ձևով՝ Մեղրու շրջանում:**

* * *

Ամբողջ միջնադարում (և ոչ միայն) հանդիպում ենք հոգևոր դասի բազմաթիվ նշանավոր գործիչների:

12-13-րդ դարերում՝ մոտ 130 տարի, Սյունյաց թեմը գլխավորել են ծագումով մեղրեցի եպիսկոպոսները՝ Տեր-Բարսեղ եպիսկոպոս (1143-48 թթ.), Տեր-Գրիգոր Ե եպիսկոպոս (1148-68 թթ.), Ստեփանոս Գ եպիսկոպոս (1168-1216 թթ.), Տեր-Հովհաննես եպիսկոպոս կամ Հովհաննես 8-րդ (1216-51 թթ.), Տեր-Հայրապետ (1252-72/74 թթ.), Տեր-Սողոմոն 3-րդ (պաշտոնավարել է Տեր-Հայրապետի հետ միաժամանակ):

Պատմագրությունը հետաքրքիր տեղեկություններ է պահպանել Տեր-Բարսեղ եպիսկոպոսի մասին (1143-48 թթ.): Ստեփանոս Օրբելյանը գրում է. «**... Տեր Բարսեղը... կարճ ժամանակ ապրելով, մի պատահմունքով Աստապատ գյուղի մոտ Երասխ գետն է ընկնում՝ իր հեծած ջորու հետ միասին: Լողորդները մտնելով հանում են, և ջրի վրա մեծ լույս է ճառագում: Նրան տանում, թաղում են Մաղարթա վանքում, որը կառուցվել էր սուրբ Բարդուղիմեոսի կողմից: Եվ պահվեց եկեղեցու պատի մեջ՝ իսրայելցիների երեք հատ մանանայի նման, որը հաստատում է Միխայել պատմագիրը: Այնուհետև աթոռը ամայացել էր բնակիչներից, և տեր կամ իշխող չկար, որ հոգ տաներ եկեղեցու կամ հավատացյալ համայնքի մնացորդների մասին ու առաջնորդի համար որոնումներ կատարեր:**

Մեղրի մեծ ավանում կար մի ավագ քահանա՝ Գրիգոր անունով, ճշմարտասեր մի լավ մարդ, որը Տեր-Բարսեղի եղբայրն էր: Սրան հորդորեց Ծամամ կոչված իր սրբասեր ու խորահավատ տիրուհին՝ ասելով. «Ո՛վ քահանա, Սյունյաց աթոռն ամայացավ, փութա՛ և եղի՛ր քահանայապետ, որ մեր որդյակն էլ քահանայապետի որդի դառնա. հիշի՛ր սուրբ Գրիգորին և նրա որդիներին ու թոռներին, որ բոլորն էլ ամուսնացած էին և կին ունեին»: Դրանից համարձակություն ստանալով՝ այս ավագ քահանան գնում է Ներսեսի եղբայր Հայոց կաթողիկոս Տեր-Գրիգորիսի մոտ և այնտեղ եպիսկոպոս ձեռնադրվելով՝ գալիս է Սյունյաց վիճակը. քսան տարի աթոռակալելով մեռնում է Վայոց ձորի Խարձա գյուղում, հավատացյալ համայնքի մեջ շրջելիս, վեց հարյուր տասնյոթ թվականին: Նրան տանելով Նորավանքի սուրբ ուխտը՝ թաղում են Տեր-Հովհաննես Կապանեցի Սուրբ եպիսկոպոսի մոտ: Նրա տեղն հաջորդում է իր որդի Ստեփանոսը մանուկ հասակում՝ լի բազում շնորհներով, սիրված ու մեծարված ժամանակի իշխող ավագների

աչքում..., որոնք փաղաքշական անվամբ նրան կոչում էին Ֆախր էլ Մսեի, այսինքն՝ «սիրող Քրիստոսի», նրան պատվում տուղրագրով, ֆարմանով ու մանշուրով, որ մենք սիգել ենք անվանում: ...Սա նորոգեց Տաթևի սուրբ Առաքելոց խարխլված եկեղեցին և վրան գմբեթ դնել տվեց...: Եպիսկոպոսության պաշտոնին մնալով քառասունվեց տարի՝ մեռավ Վայոց ձորի Արփա գյուղում, տարվեց, դրվեց իր հոր մոտ, նույն Նորավանքում, վեց հարյուր վաթսունհինգ թվականին»:

Սյունյաց թեմի վերոնշյալ առաջնորդներից Ստեփանոս Մեղրեցու մասին ուշագրավ հոդված է հեղինակել երջանկահիշատակ Ռոբերտ Էջանանցին՝ նշելով. **«Հպարտանալու է, որ Ստեփանոս Մեղրեցին Սյունիքի պատմության երևելիների ոսկե բազումքի մեջ է»:**

Ցավոք, հենց այդ շրջանում է Սյունյաց թեմը բաժանվել երկու մասի:

Մեղրեցի Տեր-Սարգիսը (Տեր-Ստեփանոս 3-րդի քրոջ որդին) 1216 թ. Աղվանքի կաթողիկոսի կողմից ձեռնադրվում և Վայոց ձորի Նորավանքում եպիսկոպոս է նստում՝ այդկերպ Վայոց ձորը հանելով Տաթևի վանքի ենթակայությունից՝ ստեղծելով առանձին թեմ:

«Քահանայապետ Վայոց ձորի» անվամբ հորջորջվող Տեր-Սարգիսը վախճանվել է 1298-ին, թաղված է Նորավանքում, շիրիմը պահպանվում է:

Ծագումով մեղրեցի Վահան Տեր-Գրիգորյանն էլ Արցախի թեմի առաջնորդն էր 1920 թվականի զուլումի օրերին:

Չափազանց ծանր ժամանակ էր. այդ տարվա մարտին թուրքերը Շուշիում կազմակերպեցին հայ բնակչության կոտորած, իսկ Վահան եպիսկոպոսին գլխատեցին:

Վահան Տեր-Գրիգորյանի կյանքի ու գործունեության մասին հետաքրքիր հոդված է հեղինակել Մեղրու տարածաշրջանի պատմության բացառիկ գիտակ, Սյունյաց աշխարհի մեր օրերի մտավորական փաղանգի երևելի ներկայացուցիչ Նաիրա Հայրապետյանը:

Արևիք աշխարհի զավակ Ստեփանոս Մեղրեցին էլ 1670-74 թթ. Հայ Առաքելական եկեղեցու Կոստանդնուպոլսի պատրիարքն էր:

Մեղրու հոգևոր անցյալի մասին խոսելիս հնարավոր չէ չհիշել **կորովաբան և հանճարեղ այրերից Երեմիա վարդապետին**, ով ստեղծողն է մի Բառարանի կամ Աստվածաշնչի բառերի բացատրության (նրա մասին հաջորդ թողարկումներում ծավալուն խոսք կներկայացնենք):

Այսօր հնարավոր չէ չհիշել Մովսես Խոտանանցի կաթողիկոսի աշակերտ Իսրայել վարդապետին:

Անհնար է չհիշել Աբրահամ Գ կաթողիկոսին, ով իր շրջագայության ժամանակ 1735-ին գալով այստեղ, գրեց. «Եկանք Մեղրի, որտեղ կար պատվական ու հաճոյական մի փոքր վանք, ուր մնացի երեք օր՝ սփոփելով նաև նրանց»:

Կարճևանից էր Մովսես կաթողիկոսի աշակերտ Եսայի վարդապետը, ով կառուցեց և առաջնորդը եղավ Երնջակի Սուրբ Կարապետ վանքի:

Մի հիշարժան հանգամանք էլ. 18-րդ դարասկզբին (ռազմաքաղաքական բարդ իրավիճակով պայմանավորված) Գողթան աշխարհի Շահկերտ կամ Ղազանչի գյուղից, ինչպես և Հին Ջուղայի հարևանությամբ գտնվող Ագուլիսից, ավելի ուշ՝ 1752-ին, Մեղրիից Շուշի է տեղափոխվում հայության մի հոծ զանգված:

Այդ ժամանակ էլ Շուշիում հիմք է դրվում Մեղրեցոց թաղամասին (1840 թ. տվյալներով Շուշիում բնակվում էր 458 մեղրեցի):

Այդտեղ էլ մեղրեցիք 1833-ին կառուցում են Մեղրեցոց Սուրբ Աստվածածին (որոշ աղբյուրներում՝ Սուրբ Ամենափրկիչ) եկեղեցին:

Այդ ընթացքում էլ՝ հայոց Արցախի մեծ զավակ Ավան հարյուրապետի կողմից կառուցված Շուշիի բերդի (հետագայում ինքնակոչ Փանահ խանի կողմից զավթված) մերձակայքում (1868-87 թթ.) իրենց եկեղեցին կառուցեցին Սյունյաց Գողթանի Շահկերտի կամ Ղազանչիի հայերը (Շուշիի Սուրբ Ամենափրկիչ կամ Ղազանչեցոց եկեղեցի), ինչպես և Ագուլիսի հայերը (Ագուլեցոց եկեղեցի):

Մեղրու հոգևոր անցյալի մասին ուշագրավ հետազոտություններ է կատարել և կատարում մեր երևելի հայրենակից, Կապանի նշանավոր զավակ Սերգեյ Ջհանգիրյանը: Նրա հեղինակած հոդվածով՝ **«Եվս մի քանի դրվագ Մեղրու հոգևոր-մշակութային կյանքից»,** ընթերցողը նոր տեղեկություններ կստանա Մեղրու մասին:

* * *

Կուզենայինք կարևոր մի հանգամանքի վրա էլ ուշադրություն հրավիրել:

Սյունիքում, այդ թվում՝ Մեղրիում, դարեր շարունակ հանդուրժական և հարգալից վերաբերմունք է եղել այլադավանների ու նրանց սրբությունների հանդեպ:

Օրինակ, մինչև հիմա Մեղրու տարածաշրջանի Շվանիձորում և Բուղաքարում պահպանվում են իրանական սրբավայրերը:

Կամ՝ Կապանում 1865-ին Կոնդուրովները կառուցեցին հունական Սուրբ Կատարինե եկեղեցին, որը մինչև հիմա (թեև խոնարհված) կա:

Կամ՝ 1897 թվականին Գորիսում կառուցվեց Ռուս ուղղափառ եկեղեցու մի տաճար՝ Սուրբ Նիկողայոս Հրաշագործի անվամբ, որը, ցավոք, 1920-ականներին ավերվեց՝ քաղաքական նկատառումներով:

Այդ ամենը հիշելով՝ մեզ ավելի է զարմացնում բռնազավթված Արցախում հայկական եկեղեցիների ու մյուս սրբավայրերի պղծման՝ պետականորեն կազմակերպված արշավը, որը վանդալիզմի դասական օրինակ է, այն էլ՝ իբր քաղաքակիրթ 21-րդ դարում:

* * *

Անշուշտ, Մեղրու մասին մեր զրույցը կշարունակենք 2026 թվականին: Ինչպես արդեն նշեցինք՝ հավաքված կամ պատրաստված նյութերն ընթերցողին ներկայացնելու համար անհրաժեշտ կլինի հանդեսի ևս երկու (եթե ոչ ավելի) համարի հրատարակում:

Որքան էլ դժվար լինի նման նախագծի իրականացումը (ֆինանսական պատճառով), այն կյանքի կկոչենք անպայման. **հայ մարդը պետք է լիովին ճանաչի Սյունյաց աշխարհի բացառիկ այդ տարածաշրջանը, որն իմ մեծ և անզուգական հայրենակից Սերո Խանզադյանի խոսքով՝ Արաքսի հովտի մարգարիտն է:**

Միևնույն ժամանակ՝ մենք հույս ենք փայփայում, որ Մեղրու քրիստոնեական սրբավայրերի թեման նոր ուսումնասիրողներ կունենա: Եվ այն, ինչ մենք չենք հաջողել, կլրացնեն ուրիշները:

Իսկ վերջում՝ մեր խմբագրակազմի սրտաբուխ երախտագիտությունը Արևիք-Մեղրիի նվիրյալներ Ազատ Գասպարյանին՝ համարը հովանավորելու, Նաիրա Հայրապետյանին՝ անշահախնդիր համագործակցության, Մարատ Օհանյանին՝ Մեղրու հանդեպ մեր սերն ամեն օր նորոգ պահելու համար:

Թեմական առաջնորդներ Մեղրիից

Տաթևի վանք, Սբ Պողոս-Պետրոս տաճար, Տաթև, 1929 թ.

Տաթևի վանքում

1. Տեր-Բարսեղ եպիսկոպոս (1143-1148 թթ.)
2. Տեր-Գրիգոր Ե եպիսկոպոս (1148-1168 թթ.)
3. Ստեփանոս Գ եպիսկոպոս (1168-1216 թթ.)
4. Տեր-Հովհաննես (1216-1251 թթ.) կամ Հովհաննես 8-րդ, ապստամբել է Նորավանքի եպիսկոպոս Տեր-Սարգսի դեմ, Աղթամարում ձեռնադրվել եպիսկոպոս և գլխավորել Սյունյաց թեմը՝ նստելով Տաթևում:
5. Տեր-Հայրապետ (1252- 1274 թթ.), Տեր-Հովհաննես 8-րդին հաջորդել է 1252 թ. և աթոռակալել մինչև 1272 կամ 1274 թվականը:
6. Տեր-Սողոմոն 3-րդ (1272(74) թթ.), պաշտոնավարել է Տեր-Հայրապետի հետ միաժամանակ:

Նորավանքում

1. Տեր-Սարգիս՝ Նորավանքում (1216-.. թթ.), Տեր-Ստեփանոս 3-րդ եպիսկոպոսի քրոջորդի այս Տեր-Սարգիսը Աղվանքի կաթողիկոսի կողմից ձեռնադրվում և Վայոց ձորի Նորավանքում եպիսկոպոս է նստում՝ 1216 թվականին հիմք դնելով այստեղի եպիսկոպոսությանը, ստեղծելով առանձին թեմ:
2. Տեր-Սարգիս (նախորդ Տեր-Սարգսի քրոջ թոռն էր, որ կոչվել է «քահանայապետ Վայոց ձորի»): Վախճանվել է 1298 թվականին, թաղված է նույն Նորավանքում, պահպանվում է շիրիմը:

Արցախի թեմում

Վահան Տեր-Գրիգորյան (1917-1920 թթ.)

Կոստանդնուպոլսի պատրիարքարանում

Ստեփանոս Մեղրեցի, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք (1670-1674 թթ.)

Ամաղու Նորավանք

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն

Գանձասարի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի

Վանք մի պատվական և հաճոյական

Մեղրու Սբ Հովհաննես եկեղեցին (Անապաստանաց վանքը) կամ Մեղրո վանքը

Ներկայիս Մեղրի քաղաքի հյուսիսարևմտյան բարձրադիր վայրում գտնվում է Մեղրու վանքը (հայտնի նաև՝ Սբ Հովհաննես, Անապաստանաց վանք անուններով): Վանքից կանգուն է միայն եկեղեցին, իսկ գավիթ-նախասրահը և տնտեսական սենյակները հիմնովին ավերված են: Եկեղեցին կառուցված է տեղական գրանիտ և բազալտ քարերով, գմբեթը աղյուսաշեն է: Սա ամբողջ ուշմիջնադարյան Սյունիքի երեք գմբեթավոր եկեղեցիներից մեկն է: Պետք է հաշվի առնել, որ Մեղրիի Սբ Հովհաննես վանքի եկեղեցին հագեցած է բավականին բարդ և անսովոր ճարտարապետական հնարքներով: Եկեղեցին ունի ուղղանկյուն ծավալ, երկթեք տանիք, որի վրա ուղղակի բարձրանում է գմբեթը՝ ստեղծելով գմբեթավոր դահլիճի արհեստական նմանակում:

Ներքուստ հարդարված է աղյուսե գեղազարդային որմնակամարներով, որմնախորշերով, որոնց գագաթներն ունեն շեշտված սրություն, կաղապարի մեջ ձուլված հրեշտակների պատկերներով և, իհարկե, ԺԸ դ. որմնանկարներով: Արտաքին միակ հարդարանքը հարավային պատի մեջ ագուցված խոյի գլխաքանդակն է: Ժամանակին եկեղեցին արտաքուստ զարդարել են արևմտյան ճակատի փոքրաչափ խաչքարերը, որոնք հետագայում ընկել են և բեկոտվել:

Վանքի մասին պատմական տեղեկությունները սկզբնաղբյուրներում խիստ կցկտուր են: Սբ Հովհաննես վանքը հիշատակվում է դեռևս ԺԳ դ. պատմիչ Ստեփանոս Օրբելյանի աշխատությունում, որտեղ թվարկվում են թեմի վանքերն ու անապատները. «Արդ՝ սրբոյ աթոռոյս ի բոլոր թէմի եղեալ վանք և անապատք են սոքա. Մեղրոյ սուրբ Յովհաննէս անուն վանքն. Մեծ անապատն արանց. Հարանց անապատն արանց. Ծնհէրու Աստուածածին անապատն կուսանաց. Հալիձորու անապատն կուսանաց. Մանլևու ամենափրկիչ անապատն կուսանաց. Գանձափարախու վանքն. Կարճևանու սուրբ ուխտն Յովհաննու և Ծիծեռնակու սուրբ վանքն»: Ընդ որում՝ Մեղրիի վանքը բավականին խոշոր վանք է եղել, ինչը երևում է հարկատու գյուղերի ցանկից, ըստ որի՝ Մեղրիի վանքը վճարում էր 20 միավոր հարկ: Նման մի հակիրճ տեղեկություն հաղորդում է ԺԸ դ. կաթողիկոս Աբրահամ Կրետացին. «և ապա եկինք ի Մեղրի, որում կայր փոքրիկ վանք մի պատուական և հաճոյական»:

Սբ Հովհաննես վանքին անդրադարձել է նաև ԺԹ դ. հեղինակ Ղևոնդ Ալիշանը իր «Սիսական» աշխատությունում: Մեջբերվող միտքը պարզում է վանքի տեղորոշման հարցը. «Մի մի եկեղեցիք են թաղիցն՝ Մեծի և Փոքուն, և բարեշէնք, ըստ վկայութեան յետին յիշեալ ԵՒրոպացի ուղևորին, այլ ոչ թուին և բարեխնամք. որպէս և ոչ Մեղրոյ վանքն Ս. Յովհաննէս, որ կայ յարևելակողմանն, սակաւուք հեռի ի շինէն. յորում բաց յառաջնորդէն թուի թե չգուցեն միաբանք, այլ պահապանք ոմանք, թէպէտ և կալուածս ոչ սակաւ ունի մենաստանն»:

* * *

2015 թ. Երկիր և մշակույթ կազմակերպությունը (նախագահ՝ Գ. Գևոնյան) հանդես եկավ Սբ Հովհաննես եկեղեցու վերականգնման նախաձեռնությամբ, որին պետք է նախորդեին հնագիտական ուսումնասիրությունները: Աշխատանքների ողջ ծախսն իրենց վրա վերցրեցին ամերիկահայ բարերարներ Հայկ և Հիլդա Մանջիկյանները: 2016 և 2018 թթ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի (տնօրեն՝ Պ. Ավետիսյան) արշավախումբն իրականացրեց պեղումներ վանքի տարածքում, որի նպատակն էր եկեղեցու և մյուս կառույցների հիմքերի բացումը, մշակութային շերտերի ուսումնասիրությունը և այլն: Պեղումները ղեկավարում էին ինստիտուտի հնագետներ Ա. Նալբանդյանը, Հ. Բադալյանը և Տ. Ալեքսանյանը: Աշխատանքներին մասնակ-

ցում էին, ինչպես մեղրեցիներից կազմված բանվորական ջոկատը, այնպես էլ կամավորներ՝ Հայաստանից ու արտասահմանից:

* * *

Եկեղեցու սրահին առանձնահատուկ գրավչություն են հաղորդում որմնանկարները: Դրանք ավելի վաղ են ստեղծվել քան Մեղրիի Մեծ և Փոքր թաղերի եկեղեցիների որմնանկարների մեծ մասը: Հավանական է, որ Սբ Հովհաննես վանքի որմնանկարների հեղինակը Աստվածատուր Աստապատցին է, ում վրձնին են պատկանում նաև Փոքր թաղի եկեղեցու մի քանի որմնանկարներ: Որմնանկարված են եղել վեց պատկեր, որոնցից մեկը գրեթե ամբողջովին ոչնչացված է, և մեկ զարդագոտի: Դրանցից երկուսում արձանագրությունները պահպանվել են գրեթե ամբողջական: Առաջինը հոգևորականի պատկերի տակ է և ունի հետևյալ բովանդակությունը. (ՅԻՇԱՏԱ)Կ Է ՊԱՏԿԵՐՍ Տ(Է)Ր ՄԿՐՏԻ (Չ) ԱԲԵ(ՂԱՅԻՆ)/ (Ռ)ՃՂԴ (1745)? ԹՎԻՆ ՄԱՅԻՍԻՆ..., իսկ երկրորդը Միքայել հրեշտակապետի պատկերի տակ է՝ հետևյալ բովանդակությամբ. (ՅԻ)ՇԱ(Տ)ԱԿ Է (Պ)ԱՏԿԵՐՍ ՓՕՔՐ ԹԱՂՑԻ/(ՀԱՆԳՈՒ)ՑԵԱԼ Տ(Է)Ր ՅՈՀԱՆՆԷՍԻ ՈՐԴԻ ՅՈՀԱՆՆԷՍ (ԻՆ) Թ(ՎԻՆ) ՌՄԽԲ (1793):

2019 թ. կատարվեցին նաև որմնանկարների մասնակի վերականգնման աշխատանքներ, որոնք իրականացրեց Ֆրանսիայից ժամանած մասնագետ Մ. Միգուիրդիչյանը՝ իր թիմի հետ միասին:

* * *

Նախագծային և գիտամեթոդական ուսումնասիրությունների աշխատանքները սկսվեցին 2016 թ-ին (վերականգնման նախագծի գլխավոր ճարտարապետ՝ Ս. Նալբանդյան, վերականգնող ճարտարապետներ՝ Տ. Բաղիշյան և Գ. Գյուլամիրյան):

Նախագիծը համաձայնեցվեց և հաստատվեց ՀՀ մշակույթի նախարարության կողմից՝ 2017 թ-ին:

Վերականգնման շին. աշխատանքների ղեկավար և պատասխանատու՝ Ա. Հովհաննիսյան:

Վերականգնման շին. աշխատանքների տեխնիկական հսկիչ՝ Ս. Ավետիսյան:

Վերականգնման հիմնական աշխատանքներն սկսվեցին 2017 թ-ին և ավարտվեցին 2019 թ-ին:

Այսօր Մեղրիի Սբ Հովհաննես վանքը վերականգնված է, տարածքը՝ բարեկարգված: Հնագիտական բոլոր իրերը մշակվել, վերականգնվել և բերվել են թանգարանային տեսքի: Մի քանի տարի տևած հնագիտական և վերականգնողական աշխատանքներում իրենց ուրույն ներդրումն ունեցան տարբեր ոլորտների մեծ թվով մասնագետներ, կամավորներ, միջնադարյան մշակույթի սիրահարներ: 2019 թ. հուլիսի 27-ին մեծ շուքով տեղի ունեցավ եկեղեցու վերաօծման արարողությունը, որն ուղեկցվեց զանազան միջոցառումներով: Այդ օրը ոչ միայն Մեղրի քաղաքն ունեցավ ևս մեկ գործող եկեղեցի, այլև մենք բոլորս ունեցանք քայքայվող վիճակից վեր հառած ևս մեկ պատմական հուշարձան, որն ամուր և կանգուն վիճակում պատրաստ է շարունակել իր ընթացքը դարերին ընդառաջ:

* * *

ՍԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ եկեղեցու (Մեղրու վանքի) աղոթասրահի (10x12մ) գմբեթակիր չորս մույթերը (հատակագծում քառակուսի) դահլիճը բաժանում են միջին (3.8մ) և կողմնային (2մ) նավերի և կամարներով միացված են միմյանց՝ կազմելով 3.8x3.8մ կողմերով գմբեթատակ քառակուսին, որի վրա, աղոթասրահի կենտրոնում, բարձրանում է ներսից գլանաձև, դրսից 12 նիստանի աղյուսաշեն թմբուկը՝ պսակվելով ներսից ու դրսից կիսագնդաձև գմբեթով:

Եկեղեցու երկայնական պատերը նույնպես երեք որմնակամարներով մասնատված են (յուրաքանչյուրում մեկական լուսամուտով), սակայն կամարները սլաքաձև են, պարսկաոճ: Որոշ տարբերություն կա նաև ավանդատներում (որոնք համարյա քառակուսի են՝ 2x2.5մ չափերի) ու ավագ խորանում, որի կիսաշրջան պատերում պատուհանախորշերը երկշարք դասավորություն ունեն, (4-ական երկայնական առանցքի ամեն կողմում), իսկ կամարային պսակը, ինչպես և աղոթասրահի որմնակամարները՝ սլաքաձև են և պահպանում են ոճական միասնություն:

ՄԱՐՈ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
«ԵՐԿԻՐ ԵՎ ՄՇԱԿՈՅԹ» ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԵՂՐԻ

Անապաստանաց վանքի մասին՝ դարերի խորքից եկող հիշողություններ

ԼԻԼԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայոց աշխարհի գողտրիկ վայրերից է Մեղրին: Այն պատմության մեջ հիշատակվում է Ք.ա. 7-6-րդ դարերում: Հեթանոս ժամանակներից այստեղ պահպանվել են հետաքրքիր տոներ ու տոնակատարություններ: Ապրելով պատմական Գողթնի հարևանությամբ՝ մեղրեցիներն այստեղ երգել են գողթան երգերը, պահպանել հեթանոսական ժամանակաշրջանի ավանդույթները:

Մեղրու լեռներին բազմած բերդերը, լեռնալանջերին ձգվող պարիսպներն անխոս վկայում են, որ այս լեռնաշխարհին անաղարտ է պահել իր ազգագրական կերպարանքը: Չորս հազար տարվա պատմություն ունեն նաև այս լեռնաշխարհի տեղանունները: Հեթանոս շրջանի Արև աստծո՝ Միերի(Միհրի) անվան տառափոխված ձևն է Մեղրին, Շիվինի (Արև) աստծո կնոջ՝ Տաշտունայի անվան ծագումնաբանական իմաստն է արտահայտում Տաշտուն գյուղի անունը: Վահրավարն ըստ ավանդության եղել է Արև աստծո զոհարանը: Այդ անունից են ծագել Վահե, Վահրամ, Վահրիճ անունները:

Ուշագրավ են հնուց պահպանված կամարաձև ու ճաղազարդ դարպասներն ու լուսամուտները, քարակապ կամուրջներն և երկնասլաց եկեղեցիները՝ գույների հրաշք ու ներդաշնակ որմնանկարներով:

Մեղրու եկեղեցիների մեջ ուրույն և հետաքրքիր պատմություն ունի Սբ Հովհաննես կամ ինչպես ժողովուրդն է ասում՝ Անապաստանաց վանքը: Ճարտարապետական և հնագիտական ուսումնասիրություններով այն ավելի հին է, քան հիշատակվում է պատմության մեջ՝ որպես 17-րդ դարի կառույց:

Վանքն ունեցել է բակային մեծ տարածք. մրգատու այգի, իջևանատուն, թեյարան, ձիանոց, գետնափոր գաղտնի ճանապարհ դեպի մայր առուն, որն ըստ տարեցների վկայության եղել է մաքուր, խմելու համար պիտանի:

Վանքն իր հարմարություններով ծառայել է որպես իջևանատուն հյուրերի համար, ուստի և կոչվել է Անապաստանաց վանք, այսինքն՝ ապաստան չունեցողների համար որպես հյուրատեղի, հյուրանոց:

Սբ Հովհաննես վանքում մեղրեցիները մեծ շուքով են նշել «Հոռօրհնեքի տոնը»: Հավաքվել են Անապաստանաց վանքի բակում՝ իրենց հետ տանելով նորաբողբոջ մատղաշ ուռենիների ճյուղերը: Ջահել աղջիկներն ուռենու ճյուղերից պսակներ են գործել և գլխներին դրած՝ գնացել վանքի բակ: Քահանան օրհնել է այդ պսակներն ու ճյուղերը, որից հետո աղջիկներն իրավունք են ստացել շարքով կանգնելու և սպասելու իրենց փեսացուներին: Ջահել տղաները կանաչ գլխաշորերով փակել են իրենց աչքերը և մոտեցել աղջիկներին: Ով փակ աչքերով և շոշափելով կարողացել է գտնել իր սիրած աղջկան, նվիրել է նրան կանաչ գլխաշորը՝ որպես սիրո և գարնան

խորհրդանիշ: Քահանան խոստացել է առաջիկայում կատարել նրանց պսակադրությունը:

Թույլատրվել է միայն երեք պսակադրություն կատարել առաջիկայում: Հարսնացու աղջիկներն էլ եկեղեցում իրենց փեսացուներին նվիրել են ուռենու օրհնված ճյուղերից երեքը՝ որպես սուրբ երրորդության խորհրդանիշ: Օրհնված պսակներն ու ճյուղերը պետք է պահեին մինչև հաջորդ «Հոռօրհնեքի տոնը»:

Մեղրեցիներն Անապաստանաց վանքի բակում են նշել «Կանաչ-կարմիր կիրակի»-ի տոնը: Այն նշվել է աշնան վերջին շաբաթվա օրը, որն առնչվել է բերքահավաքին: Ցղնայից, Ազայից, Ագուլիսից, Վորդվարից, Մեղրու տարբեր գյուղերից բազմաթիվ հյուրեր էին գալիս Մեղրի: Գալիս էին ձիերին, ջորիներին բարձած գինու կարասներով, գառ ու ոչխարով, բլիթներով, անուշահամ թեյով ու շաքարով, զուռնա-դհոլով: Այդ օրը բոլորը կանաչ-կարմիր գույների շորեր պետք է հագնեին, կամ այդ գույներից պատրաստած ժապավեններ, ծաղիկներ կրեին իրենց հագուստների վրա: Շատերը նռան ծառի ճյուղեր էին բերում՝ կարմիր նռները վրան (հավանաբար բնության կանաչ-կարմիր ներդաշնակցությունն ընդգծելու):

Հին Ջուղայից խոյի քանդակներ էին բերում և դնում վանքի բակում՝ ի նշան թշնամուն չենթարկվելու, արիության, կամքի, ռազմական հնարամտության: Խոյի քանդակների վրա մի քիչ գինի էին թափում (որ նշանակում էր՝ արյուն կթափենք, բայց չենք ենթարկվի թշնամուն): Հետո մորթում էին կենդանիներ և մատաղ անում՝ ի նշան այն բանի, որ շնորհակալ են Աստծուն՝ առատ բերքի համար: Առևտրական հարուստ ագուլիսցիները գեղեցիկ խալիներ էին բերում և նվիրում վանքին: Տարեց մեղրեցիների վկայությամբ Ագուլիսի հարուստ խոջաները փոքրիկ կարասներով ոսկի էին նվիրում վանքին: Նրանց առջև՝ տոնակատարության օրը, խալիչաներ էին փռում մինչև վանքի բակի ծայրը: Լսվում էր զուռնա-դհոլի ձայնը, ու սկսում էին պարել բոլորը: Պարում էին կանաչ-կարմիր ժապավեններով, գլխաշորերով: Վերջում «սուրբ» ծառերի վրա կապում էին ժապավենները՝ ի նշան իրենց իղձերի, թաքուն խնդրանքների կատարման:

Անապաստանաց վանքը պատմականորեն նշանավոր է նաև նրանով, որ շատ մեծավորներ են հյուրընկալվել այդտեղ: 1881 թվականին պատմավիպասան Ռաֆֆին, երբ Արցախից Սյունիքով Գողթն գավառ էր գնում, իջևանում է Մեղրիում: Մեծ տոնակատարություն են կազմակերպում նրա պատվին Սբ Հովհաննես վանքի բակում: Մեղրու երեք մասնավոր դպրոցների տնօրենները՝ Մաթևոս Շահյանի գլխավորությամբ, հեղինակավոր մի քանի ուսուցիչների և աշակերտների հետ դիմում են Ռաֆֆուն՝ օգնել իրենց միասնական դպրոց և դպրոցի կանոնադրություն ունենալու խնդրում:

Ռաֆֆին ծանոթանում է կանոնադրությանը, հավանություն տալիս և տանում իր հետ՝ Վեհափառի հաստատմանը ներկայացնելու:

1844 թվականի հունիսին խաչատուր Աբովյանն եկել է Մեղրի: Ահա թե ինչ է գրել նա «Արևմտյան երեք իմաստուններ» հոդվածում. «1844 թվականի հունիսի կեսերին պարոն Աբիխի հետ գիտական նպատակով անցնելով մեր սահմանամերձ լեռների՝ Կորդոնի (զինափակ) ամբողջ գիծը, որ ձգվում է Կողբից մինչև Մեղրու գեղեցիկ հովիտը, մենք նպատակ ունեինք ուսումնասիրել Արարատից այն կողմ գտնվող Մակուի խանությունը»:

Հասկանալի է, Աբովյանը Մակուի խանությունն ուսումնասիրելու նպատակով էր եկել Մեղրի, սակայն լինելով Մեղրիում, հիացել է այս գեղեցիկ լեռնաշխարհով,



հետաքրքիր բերդերով, ուսումնասիրել է պղնձի հանքերը և հիացմունքով խոսել մեղրեցու առանձնահատուկ կուլտուրայի, կենցաղավարության մասին: Աբովյանը Մեղրու պատմական հուշարձաններն ուսումնասիրելիս Սբ Հովհաննես եկեղեցին համարել է առանձնահատուկ և իր նմանը չունեցող կառույց:

Աբովյանի Մեղրի կատարած այցելությունների մասին մանրամասը տեղեկություններ է հայտնում աբովյանագետ Երվանդ Շահազիզը:

Մանուկ Աբեղյանը, ով ծագումով Սյունիքից էր, իր հուշերում նշել է, որ 1908 թվականին գողթեցիներն ու արևները (մեղրեցիները) մեծ ջերմեռանդությամբ են ընդունել Կոմիտաս վարդապետին, ով Վեհափառի հանձնարարականով Գողթնից Մեղրիով Տաթև պիտի գնար:

-Չեք պատկերացնի, թե ինչպիսի հուզմունքով են ընդունել Կոմիտաս վարդապետին մեղրեցիները Սբ Հովհաննես եկեղեցու բակում, - պատմել է տարեց մեղրեցիներից մեկը՝ Դավիթ Իսրայելյան:

Տիկին Խաթունը, ով Գողթնի Ցղնա գյուղից էր, մոտեցել է Կոմիտասին, համբուրել նրա փեշը և նվիրել նրան ձեռագիր մի գիրք, որ բերել էր Ցղնա գյուղից:

Բազմաթիվ փաստեր կարելի է բերել Անապաստանաց վանքի մասին: Շատերը չգիտեն վանքի հրաշագործությունների մասին: Այն սրբատեղի է եղել տարիներ շարունակ: Բակում սուրբ ծառեր են եղել, որոնք ըստ ավանդության բուժիչ դեր են կատարել հիվանդների համար, իսկ հիվանդներն իրենց շորերից ու իրերից մասունքներ են թողել այդ ծառերի վրա, աղոթել և բուժվել են: Խոյաքանդակ խաչքարեր են եղել, որոնց հետքն անգամ չկա: Չկա նաև «Սուրբ ջուրը»... ●

Տասնամյակներ հետո դռները բացեց Մեղրու Սուրբ Հովհաննես եկեղեցին (Անապաստանաց վանք)

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԵՂՐԻ

Հուլիսի 27-ին Մեղրին ունեցավ մի գործող եկեղեցի ևս: Քայքայված վիճակից վեր հառնեց ևս մեկ պատմական հուշարձան՝ Սուրբ Հովհաննես եկեղեցին կամ Անապաստանաց վանքը:

2015 թվականից «Երկիր և մշակույթ» համազգային կազմակերպության նախաձեռնությամբ սկսվել էր եկեղեցու վերականգնումը, նախ կատարվել էին հնագիտական ուսումնասիրություններ, իրականացվել պեղումներ:

Վերականգնման աշխատանքներին մասնակցել են ինչպես մեղրեցիներից կազմված բանվորական ջոկատը, այնպես և կամավորներ՝ Հայաստանից և արտասահմանից: Այսօր արդեն վանքը վերականգնված է, տարածքը՝ բարեկարգված:

Վանքի վերականգնման շինաշխատանքների ղեկավարը և պատասխանատուն Արշավիր Հովհաննիսյանն է, տեխնիկական հսկիչը՝ Սամվել Ավետիսյանը:

Հիշարժան արարողությանը մասնակցում էին Սյունյաց թեմի եկեղեցական դասը՝ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Մակար վարդապետ Հակոբյանի գլխավորությամբ, «Երկիր և մշակույթ» համազգային կազմակերպության նախագահ Գեղամ

Գևոնյանը, ամերիկահայ գործարարներ Հայկ և Հիլդա Մանջիկյանները, գիտաշխատողներ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտից, վանքի վերականգնման նախագծի գլխավոր ճարտարապետ Ստեփան Նալբանդյանը, հնագետներ, շինարարներ, մեղրեցիներ և հյուրեր:

Տևական ընդմիջումից հետո տաճարի կամարների ներքո հնչեց տերունական աղոթքը, մատուցվեց սուրբ պատարագ:

Եկեղեցու վերաբացման առիթով օրհնանքի խոսքում տեր Մակար վարդապետ Հակոբյանն անդրադարձ կատարեց Մեղրու վանքի՝ տարածաշրջանի կյանքում կատարած դերին, մասնավորապես նշելով. **«Վանքի անունը ժողովուրդն անվանել է Անապաստանաց, այսինքն՝ անապահով մարդկանց բերել է իր օթևանի տակ, պահել-պահպանել է և մտցրել առողջ կյանք»:**

Սուրբ Հովհաննես եկեղեցու վերաօծման առթիվ Ամենայն հայոց վեհափառի՝ Տեր տեր Գարեգին երկրորդ կաթողիկոսի օրհնության գիրը հրապարակեց Արարատ եպիսկոպոս Գալթակչյանը՝ Մայր աթոռ սուրբ Էջմիածնից:

Ուշագրավ է, որ եկեղեցու սրահին առանձին գրավչություն են հաղորդում որմնանկարները, որոնք ավելի հին են, քան Մեղրու Մեծ և Փոքր թաղերի եկեղեցիների որմնանկարների մեծ մասը: Կատարվել են այդ որմնանկարների մասնակի նորոգումներ, որ իրականացրել է Ֆրանսիայից հրավիրված մասնագետը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
30 ՀՈՒԼԻՍԻ 2017 Թ.

Մեղրիի Սբ Հովհաննես (Անապաստանաց) վանքի 2016-20 թթ. պեղումներով հայտնաբերված մետաղական առարկաները

Ներածություն

ԱՐՄԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ

Մեղրու Սբ Հովհաննես վանքը, որ հայտնի է նաև Անապաստանաց վանք անունով գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի հյուսիսարևմտյան բարձրադիր վայրում: Թեև վանքը հիշատակվում է XIII դարից[1], սակայն այժմյան կանգուն եկեղեցին և մյուս կառույցների՝ գավթի, տնտեսական շինությունների մնացորդները պատկանում են ուշ միջնադարին:

2015 թ. «Երկիր և մշակույթ» համազգային բարեգործական կազմակերպությունը (նախագահ՝ Գ. Գևոնյան) հանդես եկավ վանքի հնագիտական ուսումնասիրությունների, սեյսմիկ և երկրաբանական հետազոտությունների, չափագրման, նախագծման և ի վերջո վերականգնման աշխատանքների ծրագրով: Ողջ աշխատանքային գործընթացի և հուշարձանը վերականգնելու ծախսերը ստանձնեցին ամերիկահայ բարերարներ Հայկ և Հիլդա Մանջիկյանները: Պեղումներն իրականացրեց 2016 և 2018-2020 թթ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (ղեկ.՝ Ա. Նալբանդյան, հնագետներ՝ Հ. Բադալյան, Տ. Ալեքսանյան)[2]:

Կատարված աշխատանքները

Վերականգնման ծրագրի շրջանակում իրականացված հնագիտական ուսումնասիրությունները և պեղումները Մեղրու Սբ Հովհաննես վանքում տվեցին կարևոր արդյունքներ թե՛ ճարտարապետության և թե՛ հնագիտության տեսանկյունից: Բացվեցին եկեղեցու, գավիթ-նախասրահի, տնտեսական կառույցների ու կացարանների հիմքերը, հայտնաբերվեցին մեծաքանակ գտածոներ, որոնց թվում՝ տապանաքարերի և խաչքարերի բեկորներ[3], եկեղեցական ծիսական անոթների մասեր, ջնարակված խեցեղեն, զարդանախշ և վարպետաց նշաններով կարասներ, ծխամորճեր, ապակե սրվակներ, ուլունքներ և այլն: Հատկապես ուշագրավ էին ավանդատան գաղտնարանից գտնված ձեռագիր մատյանների ու հնատիպ գրքերի բազմաթիվ պատառիկները[4], իսկ 2020 թ. վանքի տնտեսական կառույցներից մեկի հատակին հայտնաբերվեց այրված Շարակնոց[5]: Գտածոների նման առատությունը խոսում է վանքի երբեմնի փառահեղ անցյալի, ակտիվ գործունեության, ընդարձակ համայնքի և մշակութային զարգացած կյանքի մասին:

Սբ Հովհաննես վանքի պեղումներով հայտնաբերված մետաղական գտածոներն իրենց քանակով զիջում էին միայն խեցեղենին: Մետաղական իրեր (հիմնականում արույր, պղինձ և բրոնզ) գտնվեցին թե՛ եկեղեցու ներսում կատարված աշխատանքների շնորհիվ, թե՛ հարակից տնտեսական կառույցների պեղումներով և թե՛ վանքի ներքին բակի տարածքից: Որոշ դեպքերում դրանք դուրս էին գալիս որոշակի խմբաքանակներով, և կարելի է ենթադրել, որ այդ իրերը միտումնավոր թաքցվել են: Չենք բացառում, որ խորհրդային աստվածամերժության տարիներին, երբ եկեղեցին վերածվել էր պահեստի, եկեղեցական սպասքը պարզապես լցվել է կառույցների պատերի տակ և ծածկվել հողով: Իրերի գերակշիռ մեծամասնությունը խիստ կոռոզացված էր և ձևախեղված, ուստի դրանք թանգարանային տեսքի բերելու համար մեծ ճիգեր պահանջվեցին[6]: Վանքի գրեթե բոլոր մետաղական գտածոները ուշմիջնադարյան շրջանի են, որը ցույց է տալիս, որ վանքը թեև չուներ այն ազդեցիկ դիրքը, ինչ զարգացած միջնադարում էր, այնուամենայնիվ, ուշ միջնադարում (XVII-XVIII դդ.) վանքը մշակութային զարթոնք է ապրել և ակտիվ դերակատարում ունեցել համայնքի, մասնավորապես ապաստան չունեցող հանրության կյանքում, ինչից ելնելով էլ Սբ Հովհաննես վանքը ժողովրդի մեջ սկսել է կոչվել Անապաստանաց վանք: Այս ժամանակաշրջանին առնչվող հակիրճ տեղեկություն հաղորդում է XVIII դ. կաթողիկոս Աբրահամ Կրետացին. «և ապա եկինք ի Մեղրի, որում կայր փոքրիկ վանք մի պատուական և հաճոյական»[7]: Ավելի ուշ՝ XIX դ., վանքին անդրադարձել է նաև Ղևոնդ Ալիշանը. «Մի մի եկեղեցիք են թաղիցն՝ Մեծի և Փոքուն, և բարեշէնք, ըստ վկայութեան յետին յիշեալ Արոպացի ուղևորին, այլ ոչ թուին և բարեխնամք. որպէս և ոչ **Մեղրոյ վանքն Ս. Յովհաննէս**, որ կայ յարևելակողմանն, սակաւուք հեռի ի շինէն. յորում բաց յառաջնորդէ թուի թե չգուցեն միաբանք, այլ պահապանք ոմանք, թէպէտ և կալուածս ոչ սակաւ ունի մենաստանն»[8]:

Մետաղական գտածոները

Հայտնաբերված տասնյակ մետաղյա առարկաները պատկանում են միջնադարյան հոգևոր և նյութական մշակույթի զանազան բնագավառներին: Դրանց մեջ մեծ թիվ են կազմում ինչպես եկեղեցական-ծիսական բազմապիսի առարկաների մասերը, այնպես էլ կենցաղային, առևտրական, արհեստագործական նշանակության իրերը:

Մետաղական գտածոների գերակշիռ մեծամասնությունը կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ ա) ջահերի մասեր, բ) աշտանակ-մոմակալների մասեր: Չնայած որ դրանք մեզ են հասել բավականին խաթարված վիճակում, սակայն հնարավորություն են տալիս վերակազմել եկեղեցու լուսավորության միջոցների մոտավոր տեսքը: Ինչպես խեցեղենի պարագայում է, այնպես էլ մետաղական առարկաների մեջ կան ներմուծված օրինակներ: Սակայն պետք է նկատի առնենք, որ վանքի օժանդակ շինությունների պեղումներով գտնված վառարանների մոտ տեղ-տեղ առկա ծծմբաքարի (պիրիտի) կուտակումները օքսիդացման հետևանքով դարչնագույն տեսք են ընդունել և արագ քայքայվում են: Հավանական է, որ դրանք տեղում մշակվել են որպես պղնձի կամ այլ մետաղի հումք, ինչից էլ կարելի է ենթադրել, որ

պեղումներից հայտնաբերված մեծ թվով մետաղական առարկաները պատրաստվել են տեղում: Այլ կերպ ասած՝ այս սենյակները գոնե ինչ-որ ժամանակ եղել են մետաղամշակման արհեստանոցներ:

Առարկաների մեծ մասը պատրաստված է կռելու, սակավաթիվ՝ զոդման եղանակով: Դրանք հիմնականում բարակ թիթեղներ են, որոնց մի մասը պատված է դրվագման եղանակով արված բուսական զարդանախշերով:

Ջահերի մասեր - Գտնվեցին մեծ թվով պղնձե բարակ և ձևախեղված, շատ դեպքերում բեկոտված առարկաներ: Լաբորատոր մշակման և վերականգնման աշխատանքներից հետո միայն հնարավոր եղավ որոշակիորեն ստանալ դրանց նախնական տեսքը: Դրանք հիմնականում ջահերի՝ դրվագված զարդերով բաժակաձև մասեր են, որոնք միմյանց հետ կապված են եղել մետաղական օղակներով: Միայն մի դեպքում մի քանի մասերը ամրացված էին միմյանց, որի շնորհիվ հնարավոր է պատկերացում կազմել գտնված բազմաթիվ առարկաների նախնական տեսքի մասին: Այն կորացող, հաստ ձողի վրա ամրացված փոքր թասիկների շարք է, որոնցից մեկի վրա դրվագված են մեծ և փոքր շրջաններ, իսկ ամենավերևում մոմակալն է:

Մեղրիի ջահերի տեսքն ավելի հստակ պատկերացնելու համար մեզ կարող է օգնել Անիում հայտնաբերված փոքր ջահերից մեկի նկարագրությունը. «Փոքր ջահը ավելի պարզ կառուցվածք է ունեցել: Նա բաղկացած է պղնձի հարթ թիթեղից կտրված երկու հավասարաչափ շրջանակներից, որոնք իրար հետ միացված են պղնձի բավական բարակ խողովակով, մեկը՝ վերև, մյուսը՝ ներքև և կազմում են ջահի հիմնական մասը: Այս երկու շրջանակներն էլ զարդարված են դրվագմամբ արված մեծ ու փոքր կետիկներով: Վերևի շրջանակի կենտրոնում ամրացված է օղ՝ ջահը կախելու համար: Վերջին շրջանակին իրենց թաթերով միանում են ութ փոքր շրջանաձև, մեջտեղում լայն անցքով թիթեղներ, որոնց վրա դրվում և ամրացվում էին ապակե թասերը: Ներքևի շրջանակի վրա նույնպես ամրացված են ութ շրջանակներ՝ ավելի երկար թաթերով և ավելի հաստ թիթեղից: Այս 16 շրջանակները ևս զարդարված են դրվագմամբ: Ներքևի 8 շրջանակներին ամրացված են եղել պղնձե լարեր, որոնց կախվող երկու ճյուղերին ամրացվել են պղնձե թիթեղից կտրված և դրվագմամբ զարդարված 16 մահիկներ, որոնք ծառայել են իբրև զարդ: Ուրեմն փոքր ջահը ունեցել է 16 լույսի կետ»[9]:

Ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանի բերած այս նկարագրության շատ մանրամասներ լիովին համապատասխանում են Սբ Հովհաննես վանքի պեղումներից հայտնաբերված ջահերի մասերին: Մասնավորապես՝ թիթեղյա շրջանակները, որոնց վրա առկա են դրվագմամբ արված մեծ և փոքր շրջաններ (աղ. 2, 5-5, 9-1), շրջանաձև, մեջտեղում անցքերով թասերը, դրվագված զարդերով մահիկները: Իհարկե, Մեղրիի ջահերը, հավանաբար, ունեցել են ոչ թե 16, այլ ավելի քիչ լույսի օջախներ: Անիի ջահի ապակե կամ հախճապակե թասերի փոխարեն Մեղրիի օրինակում եղել են պղնձե թասեր, որոնց մեջ ամրացվել է մոմակալը: Հատկապես ուշագրավ են մահիկաձև կախազարդերը, որոնք ամբողջությամբ դրվագված են խաղողի ողկույզների և տերևների պատկերներով (աղ. 1): Դրանցից մի քանիսը պահպանվել են ամբողջական տեսքով և ունեն շուրջ 20 սմ երկարություն, իսկ երկու ծայրերին՝ մեկական անցք: Բացի մահիկաձև կախազարդերից, գտնվել են նաև տերևաձև և ծաղկաձև թիթեղներ, որոնք նույնպես դրվագված են և օղի միջոցով կախվել են ջահից (աղ. 1): Ունեն 10 սմ բարձրություն և մի եզրին՝ անցք, որի մեջ պահպանված օղն ակնհայտ է դարձնում դրանց կախազարդ լինելը: Գեղարվեստորեն աչքի ընկնող այս ոսկեգույն կախազարդերը՝ ճոճի և փայլի շնորհիվ բավական տպավորիչ և գեղեցիկ տեսք են հաղորդել եկեղեցու ջահերին:

Աղյուսակ 1. Ջահերի տերևաձև և մահիկաձև կախազարդեր



Աղյուսակ 2. Ջահերի, աշտանակների, մոմակալների մասեր

Աշտանակ-մոմակալների մասեր - Հայտնաբերված աշտանակները մեկ ընդհանուր բնով ձողեր են, որոնք դրվում էին շրջանաձև ջահակալի վրա, իսկ գագաթին պսակվում մոմակալով (աղ. 5), որոնցից շատ կան Հայաստանի զանազան թանգարաններում և թվագրվում են XIX դ. սկզբից մինչև XX դ. սկիզբը: Այս տիպին թերևս ամենամոտ զուգահեռը կարող է համարվել Հայաստանի պատմության թանգարանում պահվող, XIX դ. առաջին կեսին Եվրոպայում արտադրված մոմակալը (բաժնեհաշվառանիշ՝ Ա 11572/339, աղ. 5-2):

Բրոնզե աշտանակ-մոմակալի լավագույն պահպանված նմուշը գտնվեց վանքի հարավարևմտյան կողմի

տնտեսական կառույցում բացված՝ մի քանի կարասներով մառանի տարածքում, 2.20 սմ խորությունում (աղ. 6): Այն պահպանվել է հիանալի վիճակում, ունի գոգավորված կառուցվածք, 20 սմ բարձրություն և 4.5 սմ տրամագիծ: Ի տարբերություն նախորդ օրինակների, ոչ թե առանձին մասերով հավաքվող աշտանակ է, այլ մեկ ամբողջություն է կազմում: Այն լավ է պահպանված և պատկանում է պատվանդան ունեցող աշտանակների տիպին: Խոշոր պատվանդանների կենտրոնից բարձրանում է խողովակաձև աշտանակը, որի գագաթին էլ դրվել է ճրագը[10]:

Մոմակալներից միակ արծաթե նմուշը առանձնանում է մակերեսին զոդված երեք տերևանախշերով (աղ. 5-3):

Բացի վերոնշյալ հիմնական երկու խմբից, հայտնաբերվեցին մեծ թվով այլ առարկաներ ևս: Դրանք են՝

Բոժոժներ - Գտնվեցին մի քանի փոքր, գնդաձև բոժոժներ, որոնք կախված են եղել քշոցներից կամ բուրվառներից: Դրանք ունեն կախելու համար նախատեսված օղեր և նեղ բերաններ: Որոշ դեպքերում պահպանվել են դրանց լեզվակները, որոնց շնորհիվ բոժոժները շարունակում են ձայն արձակել (աղ. 4-1, 5-8):

Թիթեղներ - Հայտնաբերված մի շարք թիթեղների նախնական նշանակությունը ճշտելը գրեթե անհնար է: Դրանք հիմնականում ավելի մեծ առարկաների տափակ կամ փողրակաձև դետալներ են (աղ. 4-5, 11): Վերջինները հավանաբար ամրացված են եղել փայտե կոթերին: Ուշագրավ է բրոնզե շեղանկյունաձև թիթեղը՝ նման տափակ գդալի գլխիկի, որի մի երեսը ամբողջությամբ պատված է մի քանի շարք զարդագոտիներով (աղ. 8-1):

Մետաղալարեր - Պեղված մեծ թվով պղնձե տափակ լարերն օգտագործվել են որպես կապիչներ կոտրված կարասների համար (աղ. 4-10): Կարասների շատ բեկորներ ունեն գայլիկոնված անցքեր, որոնցում երբեմն առկա են նման պղնձե կապիչներ: Սրանք միջնադարում խեցանոթների վերականգնման լավագույն արտահայտություններ են: Կոտրված հսկա կարասները, որոնց պատրաստելը բավական բարդ և ծախսատար աշխատանք է եղել ու պահանջել երկար ժամանակ, շատ դեպքերում վերականգնվել են: Կոտրված երկու բեկորների եզրերին փորված անցքերից մետաղական լար անցկացնելով ու ոլորելով՝ բեկորներն ամրացվել են իրար: Այնուհետև իրար կապված երկու կեսերի վրա քսվել է սպիտակ կրանյութ, որը վերջնականապես փակել է երկու բեկորների միջև եղած ճեղքը:

Մետաղադրամներ - Անապաստանաց վանքի պեղումներով գտնվել են իրանական, օսմանյան և ռուսական 9 մետաղադրամներ[11].

1. Պարսկական մետաղադրամները (2 նմուշ, աղ. 8-3) XVIII դ. Շուշիում (Փանահաբադ, Ղարաբաղի խանություն) հատած պղնձե ֆուլուսներ են (AE, կես բիստի): Դիմերեսներին թռչնի (սիրամարգ) պատկեր է, դարձերեսներին նշված է թողարկման վայրը: Շուշիի քաղաքային դրամների առկայությունը Մեղրիում վառ կերպով արտահայտում է այս երկու տարածաշրջանների տնտեսական կապը:

2. Օսմանյան մետաղադրամները (2 նմուշ, աղ. 8-4) շատ բարակ են, ունեն 1, 4 սմ տրամագիծ: Դրամների վրա պահպանվել են պատկերի միայն փոքրիկ հատվածներ՝ ինչից ելնելով դժվար է պնդել, թե որ սուլթանի հատածն է, սակայն ակնհայտ է, որ դրանք օսմանյան արծաթե աքչէներ են:

3. Ռուսական մետաղադրամներից առաջինը ցարական ժամանակաշրջանի է (Նիկոլայ I, պոլուշկա, 1851 թ. աղ. 8-5) երկրորդը՝ խորհրդային (1924 թ.):

Պնակ – Եկեղեցուց հյուսիս-արևելք գտնվող տնտեսական կառույցներից մեկում, 2, 40 մ խորությունից դուրս է բերվել ամբողջապես պահպանված բրոնզե պնակ (տրամ.՝ 19 սմ, աղ. 7): Շրթի հատվածում դաջված է արաբատառ գրություն. «Հանուն գթած, ողորմած ալլահի»: Թեև գրվածքը արաբերեն է, սակայն պնակը իրանական արտադրության առարկա է: Տառերը գրված են ոչ պարզ, նախշաձև տեղավորված են շրջանակի մեջ (միայն մեկ բառն է շրջանակից դուրս): Ամենայն հավանականությամբ, այն նախատեսված է եղել կերակուրի համար, և շրթին առկա գրվածքը սնունդը օրհնելու նշանակություն է ունեցել[12]: Հարկ է նշել, որ պղնձե զանազան ափսեների, մատուցարանների, սկուտեղների և այլ առարկաների (այդ թվում՝ նաև Մեղրիից գտնված) հավաքածուով հարուստ է Սարդարապատի հայոց ազգագրության թանգարանը: Դրանցից շատերի պսակին, մեր օրինակի նման, զարդի մեջ առնված ելնդագիր կամ փորագիր գրություններ են, սակայն հիմնականում՝ հայերեն[13]:

Ծնծղա – Գավթին կից կառուցված սենյակներից մեկում, ավելի քան 1 մ խորությունում հայտնաբերվեց բացառիկ մի առարկա, որն ավելի է ընդգծում Սբ Հովհաննես վանքի կապը այլ սրբատեղիների հետ: Այն սկավառակաձև, կենտրոնում ուռուցիկ, ամբողջականորեն պահպանված ծնծղա է (տրամ.՝ 25 սմ, աղ. 10): Մակերեսին շրջանաձև փորագրված է դյուրընթեռնելի, հիշատակագրային միատող արձանագրություն. «Յ(Ի) Շ(Ա)Տ(Ա)Կ Է ՊԱՂՏԱՍԱՐԻ ՈՐԴԻ ԳԱՍՊԱՐԻՆ Ի Դ(ՈՒ)ՌՆ ՍԲ ՀԱԿՈԲԱՅ, ԹՎ ՌՃՁԷ (1738)»: Պատկանում է հարթ ծնծղաների տիպի միջին չափսի ենթատիպին, որոնք կոչվում են նաև ցնցղա, երգեհոն, ծնծաղ, ցընծղներ[14]: Ձևով դրան ամենամոտը Հայաստանի պատմության թանգարանում պահվող՝ 1695 թ. Թոքատի (բաժնեհաշվառանիշ՝ Ա 4254), 1703 թ. Ուրմիայի Սբ Ստեփանոս վանքի (բաժնեհաշվառանիշ՝ Ա 2736) և 1775 թ. Տաթևի վանքի (բաժնեհաշվառանիշ՝ Ա 4255) ծնծղաներն են, որոնք նույնպես արձանագիր են: Երկու արձանագիր ծնծղա կա Սարդարապատի հայոց ազգագրության թանգարանի հավաքածուում: Սրանք իրենց ձևով, չափերով, արձանագրության ոճով հար և նման են մեր օրինակին: Այս ծնծղաները, որոնցից մեկը 1689 թ. (գույքահամար՝ ՀԱՊԹ-1160, ՀՄ-59), մյուսը՝ 1695 (ՀԱՊԹ-1162, ՀՄ-61), իրենց արձանագրությամբ ունեն իմաստային նույն բովանդակությունը, ինչ Մեղրիից հայտնաբերված նմուշն է[15]:

Գասպարի հիշատակին Սբ Հակոբ եկեղեցուն ընծայված այս իրը չափազանց կարևոր է այն առումով, որ այն հիանալի թվագրող նյութ է Մեղրու Սբ Հովհաննես վանքի պեղումներից հայտնաբերված մետաղական առարկաների, ինչպես նաև շերտագրության համար: Այս ժամանակաշրջանի Սբ Հակոբ անունով եկեղեցի Մեղրիի տարածաշրջանում հայտնի է Ալդարա բնակատեղիում: Սակայն ավելի ճիշտ կլինի կապ գտնել այժմյան Իրանի տարածքի հայկական եկեղեցիների հետ, մասնավորապես՝ Խոյի Սբ Հակոբ (Սահիդաբադ, XVIII դ.), Սալմաստի Սբ Հակոբ (Քոհնեշահր, 1671 թ.) և Սպահանի Սբ Հակոբ Մծբնա հայրապետ (Մեծ Մեյդան թաղ, 1607 թ.) եկեղեցիների հետ, որտեղից այլ առարկաների հետ միասին ծնծղան տեղափոխվել է Մեղրի:

Նմանատիպ ծնծղաներ հայտնի են նաև Գնդեվանքից, որոնք հայտնաբերվել են 1981 թ. մաքրման աշխատանքների ժամանակ և կրում են 1679 թ.[16]:

Այլ նշանակության իրեր – Ուշագրավ են 3.5 սմ երկարությամբ գնդասեղը (աղ. 4-2), բրոնզե զանգանման առարկան, որը պահպանվել է կիսով չափ և մակերեսին ունի զարդագոտիներ (աղ. 9-2), իսկ աստառին՝ կապույտ մածուցիկ նյութի հետքեր: Հետաքրքիր է Մեծ Բրիտանիայի

զինանշանի պատկերով կոճակը (աղ. 8-2), որը (մի քանի այլ իրերի հետ միասին) վկայում է XIX-XX դդ. եվրոպացի հանքարդյունաբերողների կամ ճանապարհորդների Մեղրի կատարած այցի մասին:

Երկաթե իրեր – Բացի պղնձե, բրոնզե, արծաթե և արույրե իրերից, գտնվել են նաև մեծաքանակ երկաթե առարկաներ, հիմնականում պայտեր, գամեր, զանազան կեռիկներ, շղթա, դանականման իր ու օղակաձև բռնակով երկաթե բանալի (աղ. 11): Երկաթե իրերից պետք է առանձնացնել եռոտանին (աղ. 11-4): Միջնադարյան կավագործության մեջ մեծ կիրառություն ունեցող երեք ոտքերով այս հենակները դրվել են ջնարակված պնակների կամ թասերի արանքում, որպեսզի հնոցում տեղադրվելու ժամանակ դեռևս թաց ջնարակները միմյանց չդիպչեն և չլղոզվեն: Եռոտանի հենակներ են գտնվել Դվինից, Գառնիից, Գանձակից[17]: Անապաստանաց վանքից հայտնաբերված բազմաթիվ ջնարակված պնակների ու թասերի մակերեսներին առկա են նման եռոտանիների հետքեր՝ ջնարակից մաքրված երեք կետերի տեսքով: Սրանց առկայությունը, պեղումներով բացված բովարան-վառարանների, դրանց մոտ գտնված հումքի մնացորդների, բեկորներն իրար կապող պղնձե լարերի հետ միասին, փաստում է, որ հայտնաբերված խեցեղենի զգալի մասը պատրաստվել և վերականգնվել է տեղում:

Եզրակացություններ

Մետաղագործության նման զարգացած և որակյալ արտադրությունը բնորոշ է միջնադարյան քաղաքային համայնքներին, կարծում ենք՝ նաև խոշոր վանքերին: Պետք է նկատի առնենք, որ Անապաստանաց վանքի օժանդակ շինությունների պեղումներով գտնված վառարանների մոտ տեղ-տեղ առկա ծծմբաքարի (պիրիտի) կուտակումները օքսիդացման հետևանքով դարչնագույն տեսք են ընդունել և արագ քայքայվում են: Հավանական է, որ դրանք տեղում մշակվել են պղինձ կամ այլ մետաղ ստանալու նպատակով, ինչից էլ կարելի է ենթադրել, որ պեղումներից հայտնաբերված մեծ թվով մետաղական առարկաները պատրաստվել են տեղում: Այլ կերպ ասած՝ այս կառույցները գոնե ինչ-որ ժամանակ ծառայել են որպես մետաղամշակման արհեստանոցներ:

Սբ Հովհաննես վանքի մետաղյա առարկաները, հատկապես ջահերի և աշտանակների՝ գեղարվեստորեն աչքի ընկնող մանրամասներն՝ իրենց բազմազանությամբ, նրբաճաշակ հարդարատարրերով ու զարդաձևերով մրցունակ են ցանկացած միջնադարյան հուշարձաններից հայտնաբերված նմուշների հետ: Դրանք լրացնում են մեր պատկերացումները միջնադարյան արհեստագործության այս հետաքրքիր ուղղության մասին, որն ինքնատիպ դրսևորումներով արտահայտվել է ուշմիջնադարյան Մեղրիում:

Գրականության

Ալիշան Ղ. 1893, Սիսական, Վենետիկ, ի Մխիթարայ վանս, 697 էջ:

Առաքելյան Բ. 1958, Քաղաքները և արհեստները Հայաստանում (IX-XIII դդ.) հ. 1,

Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 376 էջ:

Կրետացի Ա. 1973, Պատմություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 314 էջ:

Հակոբյան Ն. 1981, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը IX-XIII դդ.,

Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 10, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 172 էջ:

Հարությունյան Ա., Բաբաջանյան Ա. 2019, Պղնձե արձանագիր առարկաներ Սարդարապատի հայոց ազգագրության թանգարանից, Սեդրակ Բարխուդարյան - 120.

Գիտական հոդվածների ժողովածու (խմբ.՝ Գ. Սարգսյան, Ա. Հարությունյան), Երևան, ՀԱԻ հրատ., էջ 139-151.

Նալբանդյան Ա. 2019, Արձանագիր խաչքարեր Մեղրիի Սբ Հովհաննես (Անապաստանաց) վանքից, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, էջ 272-287:

Նալբանդյան Ա., Սիմոնյան Ա. 2020, Նորահայտ պատառիկներ Մեղրիի Սբ Հովհաննես եկեղեցու պեղումներից, Բանբեր Մատենադարանի, N 29, էջ 198-206:

Պիկիչյան Հ. 1992, Ծնծղա. Նվագարան և մոգական գործիք, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2-3, էջ 14-24:

Ջալալյանց Ս. 2016, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, մաս Բ, Երևան, «ԴԱԼԼ», 696 էջ:

Օրբելեան Ստ. 1910, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, Ն. Աղանեանի տպարան, 618 էջ:

Ծանոթագրություններ

1. Օրբելեան 1910, 499-500, 521:
2. Մեղրիի Սբ Հովհաննես վանքի եկեղեցու վերականգնումն ավարտին հասցվեց, և վերաօծման կարգ կատարվեց 2019 թ. (ճարտարապետ՝ Ստեփան Նալբանդյան):
3. Նալբանդյան 2019, 272-287:
4. Նալբանդյան, Սիմոնյան 2020, 198-206:
5. Ամստերդամ, 1664-1665 թթ., տպ. Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի, տպագր. Կարապետ Անդրիանացու և Ոսկան Երևանցու, 779 էջ, չափս՝ 12x7, 2 սմ: Բանավոր տեղեկատվության համար մեր շնորհակալությունն ենք հայտնում Մատենադարանի աշխատակից Լուսինե Թումանյանին:
6. Պեղումներից հայտնաբերված մետաղական իրերը վերականգնվել են «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի վերականգնման լաբորատորիայի վարիչ Ելենա Աթոյանցի և «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի վերականգնման լաբորատորիայի վարիչ Մանվել Ղալաչյանի կողմից:
7. Կրետացի 1973, 155, հմմտ. նաև Ջալալյանց 2016, 495:
8. Ղևոնդ Ալիշան 1893, 303:
9. Առաքելյան 1958, 163-164:
10. Հակոբյան 1981, 24:
11. Բանավոր տեղեկատվության համար շնորհակալություն ենք հայտնում դրամագետ Արմինե Զոհրաբյանին և Արման Մկրտչյանին:
12. Թարգմանության և տեղեկատվության համար շնորհակալություն ենք հայտնում արաբագետ Տիգրան Միքայելյանին:
13. Հարությունյան, Բաբաջանյան 2019, 143-146:
14. Պիկիչյան 1992, 215-224:
15. Հարությունյան, Բաբաջանյան 2019, 147-148:
16. Հարությունյան, Բաբաջանյան 2019, 148:
17. Առաքելյան 1958, 217:

Մեղրու Փոքր թաղի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին

Մեղրի քաղաքի Փոքր թաղի եկեղեցին կառուցվել է 17-րդ դարում, պատկանում է այդ ժամանակաշրջանի Հայաստանում տարածված եռանավ բազիլիկների տիպին: Ուղղանկյուն դահլիճը տեսաձև մույթերով բաժանվում է երեք նավի:

Կիսաշրջանաձև խորանի երկու կողմերում երկհարկանի թաղածածկ ավանդատներն են, որոնց երկրորդ հարկը կարելի է բարձրանալ խորանի պատերի վրա արված որմնանկարների միջով:

Տանիքի վրա՝ շենքի կենտրոնում, տեղադրված է զանգակատան աղյուսե վեց սյունանի ռոտոնդան, որ իր չափերով աշխուժացնում է կիսամշակ գրանիտից կառուցված եկեղեցու արտաքին ծավալային հորինվածքը: Եկեղեցին հիմքեր չունի, անմիջապես տեղադրված է գրանիտե ժայռերի վրա: Օգտագործված քարատեսակը՝ գրանիտե կոպտատաշ քարերը, շարված են՝ հնարավորության սահմաններում պահպանելով քարե շարքերի ուղղությունները: Շարքերի ուղղություններն ուղղված են մանր գրանիտե քարերով:

Եկեղեցին արևմուտքից կիսով չափ հենված է գրանիտե ժայռին: Ժայռի վրա տեղադրված արևմտյան պատը թրջվում և խոնավանում է մթնոլորտային ջրերից:

Եկեղեցու արևելյան պատի վերին մասում կարելի է տեսնել գրանիտե կոպտատաշ քարերի բացակայություն, որոնք հիմնականում օդափոխության անցքեր են՝ լիցքերը կրաշաղախ տեղական հողի հետ խառնած: Դեպի հարավ տեղադրված է ցածր, պարսպապատով ձևավորված սեղանաձև բակը: Եկեղեցու պատուհանները և միակ դուռը եզրափակող քարերը դեղնավուն են, հավանական է կարծր ֆելզիտե քարերով են իրականացված: Եկեղեցին հարավից և հյուսիսից ունի երեքական պատուհաններ, սակայն հյուսիսային կողմի միջանկյալ պատուհանը եկեղեցու ներսի կողմից փակված է, և արված սվաղի վրա արտացոլված է որմնանակար: Թե որ ժամանակում են փակել պատուհանը՝ հայտնի չէ: Հավանական է՝ ինչ-որ շրջանում վերականգնման աշխատանքների ընթացքում այն փակվել է: Եկեղեցին մի քանի անգամ վերանորոգվել է: Վերջին վերանորոգման աշխատանքները կատարվել են անցած դարի իննսունականներին: Եկեղեցին ի սկզբանե ունեցել է հողե տանիքածածկ, որը ժամանակ առ ժամանակ՝ շահագործման ընթացքում ջրազրկվել է կրաքարով տանիքածածկույթը մշակելով: Վերջին վերանորոգման աշխատանքների ընթացքում տանիքածածկը փոխարինվել է բազալտե հարթ ծածկասալերով: Փոխվել են պարզ կոպտատաշ գրանիտե քիվերի տեղադրման ուղղությունները, վերջիններս տանիքի թեքության ուղղությամբ թեք են տեղադրվել: Ըստ նախնական տեսքի հարթ տանիքածածկի դեպքում հորիզոնական տեղադրված քիվերի վրա արվել են քարից երկու կամ մեկ շար, որպեսզի մթնոլորտային տեղումների ժամանակ հոսող ջրերը տանիքածածկից իրենց հետ բերած հողով չողողեն եկեղեցու հյուսիսային և հարավային ճակատները: Նման ջրահեռացման լուծում ունեին նաև բնակելի տները:

Վերանորոգված քարե տանիքածածկի ծածկասալերը չեն իրականացվել մինչև քիվերը, այսինքն՝ չեն ծածկել պատի վերին մակերևույթը, այլ ընդհատվել են եկեղեցու պատերի հաստության սկզբնական մասում: Այդ հատվածում ջրերը հեռացնելու համար արվել է եռանկյունաձև ջրահեռացնող պատնեշ՝ բազալտե 10 սմ բարձրությամբ քարերով, ուղղելով ջրերը դեպի նոր տեղադրված բազալտե քարերից պատրաստված ջրհորդանները: Ջրհորդանների տեղադրվածության ուղղությունը նույնպես համընկնում է եկեղեցու լանջի թեքության ուղղությանը: Նման ձևով տեղադրված ջրհորդաններից հոսող ջրերը թրջում են եկեղեցու պատերը՝ թրջելով և խոնավեցնելով պատերը:

Տանիքածածկի եռանկյունաձև հատվածները, որոնք հիմնականում գտնվում են պատերի վերին հատվածում՝ ծածկված են բետոնե ոչ բավարար հաստություն ունեցող շերտով, որի պատճառով այդ հատվածից պատերը մշտապես թրջվում են: Թրջվող հատվածներից ջրերը անցնում են արդեն հողմահարված լիցքեր ունեցող հատվածները, թրջելով և խոնավեցնելով պատերը: Հարթ ծածկասալերի անորակ լինելու պատճառով ջրերը թափանցում են տանիքածածկից ներս, թրջում եկեղեցու կոնստրուկցիաները, վնասում որմնանկարները:

Մեղրի քաղաքի Փոքր թաղի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին հայտնի է իր որմնանկարներով: Որմնանկարները նույնպես պատկանում են 17-րդ դարին:

Եկեղեցու թրջված և խոնավացած պատերը

Եկեղեցու թրջված և խոնավացած պատերը վնասում են արժեքավոր որմնանկարները: Որմնանկարները շատ հատվածներում պոկված են պատի հարթությունից, և նրանց սպառնում է ոչնչացումը: Ոչնչացումից փրկելու համար անհրաժեշտ է կատարել տանիքածածկի վերականգնում:

վնասում են արժեքավոր որմնանկարները: Որմնանկարները շատ հատվածներում պոկված են պատի հարթությունից, և նրանց սպառնում է ոչնչացումը: Ոչնչացումից փրկելու համար անհրաժեշտ է կատարել տանիքածածկի վերականգնում:

Արևմտյան հատվածից հոսող ջրերը դեպի եկեղեցի կանխելու համար անհրաժեշտ է արևմտյան հատվածում իրականացնել ջրապաշտպան ցամաքուրդ: Եկեղեցու վերականգնման աշխատանքները իրականացվել են 2017թ-ին:

Նախագծի հեղինակներն են Մ. Դանիելյանը, Մ. Մովսեսյանը:

ՄԵՐԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԵՂՐԻ

Մեղրիի Փոքր թաղի եկեղեցին նորովի բացեց դռները

Սեպտեմբերի 17-ի օրը Սյունիքում նշանավորվեց Մեղրու Փոքր թաղի Սուրբ Հովհաննես (Սբ Սարգիս) եկեղեցու վերակառուցման, վերականգնման ծրագրի ավարտին նվիրված միջոցառմամբ, որին մասնակցում էին Հայաստանում ԱՄՆ արտակարգ ու լիազոր դեսպան Լին Թրեյսին, դեսպանության աշխատակիցներ, ՀՀ գիտության, կրթության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Նարինե Թուխիկյան-Խաչատուրյանը, Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Հակոբյանը, մարզային և համայնքային իշխանությունների ներկայացուցիչներ, եկեղեցու վերականգնմանը նպաստ բերած կազմակերպությունների ներկայացուցիչներ, հյուրեր:

ԱՄՆ դեսպանատան մշակութային արժեքների պահպանության հիմնադրամը երեք տարի առաջ մեկնարկած այս ծրագրի իրականացման նպատակով տրամադրել էր 510 հազար ԱՄՆ դոլարի դրամաշնորհ: Այն հիմնադրամի կողմից ֆինանսավորված ամենախոշոր ծրագիրն է Հայաստանում: Հիմնադրամի շնորհիվ վերականգնվել են որմնանկարչության հայկական ու պարսկական ոճերը մեկտեղող եզակի որմնանկարները, ինչպես նաև ձևավորվել է ջրահեռացման համակարգը, փոխվել տանիքը, տեղադրվել օդափոխության համակարգը, բարելավվել դեպի եկեղեցի տանող ճանապարհը:

Եկեղեցու վերականգնումը մեկնարկել էր 2016-ին մանրակրկիտ հետազոտական

աշխատանքներով, որին հաջորդեցին բուն վերականգնումն ու վերակառուցումը, իսկ դրան զուգահեռ մասնագիտական խումբը զբաղված էր եկեղեցում գտնվող որմնանկարների վերականգնմամբ:

Եկեղեցու վերաբացման առիթով խոսք ասաց դեսպան Լին Թրեյսին՝ մասնավորապես նշելով, որ այդ գողտրիկ որմնանկարներով եկեղեցին դառնալու է հայ-ամերիկյան բարեկամության խորհրդանիշ: Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան հայրապետական թեմից գերաշնորհ Գևորգ եպիսկոպոս Սարոյանը Նորին սուրբ օծություն տեր տեր Գարեգին երկրորդ Ամենայն հայոց կաթողիկոսի անունից բարեմաղթանքներ հղեց Մեղրիի Փոքր թաղի Սուրբ Հովհաննես եկեղեցու վերականգնմանը նվիրված միջոցառման առիթով, քանզի երկարատև դադարից հետո Սուրբ Հովհաննես եկեղեցին իր դռները բացեց այցելուների առջև: Հոգևորականը համոզմունք հայտնեց, որ Սուրբ Հովհաննես եկեղեցու վերականգնումը հոգևոր վերածննդի նոր սկիզբ կդառնա Մեղրի համայնքի կյանքում, նոր ձեռքբերումներով կհարստացնի վաղեմի քաղաքին բնորոշ մշակութային միջավայրը:

Նախարարի տեղակալ Նարինե Թուխիկյան-Խաչատուրյանը ևս երախտագիտություն հայտնեց ամերիկյան կառավարությանը՝ օժանդակության համար: Նա հիշեցրեց Հովհաննես Թումանյանի խոսքը: Մեծ լոռեցին ցեղասպանության տարիներին անկեղծորեն խոստովանել էր, որ որևէ մեկ պետություն ձեռք չմեկնեց Հայաստանին այդ ողբերգական շրջանում, բացի ամերիկյան ժողովրդից: Սյունիքի մարզպետի խորհրդական Գոռ Թադևոսյանն իր խոսքում կարևորեց Սյունիքի համար պատմամշակութային արժեք ներկայացնող եկեղեցուն երկրորդ կյանք պարգևելը, որն ըստ ամենայնի կաշխուժացնի համայնքի հոգևոր կյանքը:

Հրապարակվեց այն կազմակերպությունների և անհատների անունները, ովքեր աջակցել են ծրագրի իրականացմանը: Պաշտոնական արարողությունից հետո միջոցառման մասնակիցները ծանոթացան վերականգնման աշխատանքներին, հարյուրավոր մոմեր վառվեցին, աղոթք հնչեց առ Բարձրյալը:

Արարողությունից հետո ճեպազրույց ունեցանք «Մաստարա արտադրական կոոպերատիվ» ընկերության նախագահ Արման Ավանեսյանի հետ, ով տեղեկացրեց, որ եկեղեցու վերաշինման աշխատանքները մեկնարկել են 2016-ի հունիսից և ընդգրկում էին նաև տարածքի բարեկարգումը: Միջնադարյան եկեղեցու վերականգնման աշխատանքներին մասնակցել է 8-10 շինարար:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
18.09.2019

Մեղրի քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցին



ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԵՂՐԻ

ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցին (Մեծ թաղում) Մեղրիի ամենախոշոր եկեղեցիներից է: Նրա արտաքին պարագծում (13, 8× 23, 8 մ) աղոթասրահն է ու ավագ խորանը՝ կողմնային ավանդատներով: Աղոթասրահի (10, 8 X 18, 0 մ) միջին գմբեթակիր չորս մույթերը (հատակագծում T-աձև) իրար և հանդիպակաց պատերի հետ կապված են կամարներով: Նրանք իրենց տեղադրությամբ աղոթասրահը բաժանում են միջին (5, 8 մ) և կողմնային խիստ նեղ (1, 7 մ) նավերի: Աղոթասրահի մուտքերը հարավային և արևմտյան կողմերից են: Կամարներով իրար կապված մույթերով առաջացած գմբեթատակ քառակուսու (5, 8 X 5, 8 մ) վրա բարձրանում է աղյուսաշեն ութանիստ ու սլացիկ (5, 8 մ) թմբուկը (յուրաքանչյուր նիստին մեկ լուսամուտով) և պսակվում սրածայր վեղարով: Եկեղեցու ներսը, բեմի և ավանդատների պատերն ու մույթերը սվաղված են՝ պատված 19-րդ դարի որմնանկարներով: Հիմնադրվել է 1673 թվականին, դասվում է 17-րդ դարի գմբեթավոր եկեղեցիների շարքը: Դրանք հայ կերպարվեստի 19-րդ դարի լավագույն ստեղծագործություններից են և աչքի են ընկնում կատարման բարձր վարպետությամբ: Եկեղեցու բակում է գտնվում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված խաչքարհուշարձանը:



Մեղրեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին Շուշիում

18-րդ դարասկզբին՝ Նախիջևանի Հեյդար խանի և Շուշին զավթած Փանահ խանի միջև հակամարտության պայմաններում, Շահկերտ կամ Ղազանչի գյուղի, Հին Ջուղայի հարևանությամբ գտնվող Ագուլիսի հայերը տեղափոխվեցին Շուշի:

Շահկերտցիները ձևավորեցին Ղազանչեցոց թաղամասը, Ագուլիսի հայերը՝ Ագուլեցոց թաղամասը:

Համարյա թե նույն ժամանակ՝ 1752 թվականին, Մեղրիից Շուշի է տեղափոխվում հայության մի հոծ զանգված և հիմք դնում Մեղրեցոց թաղամասին (1840 թ. տվյալներով Շուշիում բնակվում էր 458 մեղրեցի): Հետագայում մեղրեցիք կառուցում են իրենց եկեղեցին:

1708 թ. ձեռագրերից մեկում հիշվում է այն եկեղեցու մասին, որի հիման վրա հետագայում կառուցվեց Մեղրեցոց Սուրբ Աստվածածին (որոշ աղբյուրներում՝ Սուրբ Ամենափրկիչ) եկեղեցին (Թօփճեան Յ. Յակոբ, Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Ա, էջ 45): Ամենայն հավանականությամբ այդտեղ եղել է փայտաշեն եկեղեցի:

Նույն եկեղեցու տեղում Մահտեսի Բաբա Հախումյանը 1832 թ. (որոշ տեղեկություններով՝ 1836 թվականին) կառուցում է Մեղրեցոց Սուրբ Աստվածածին եռանավ բազիլիկ եկեղեցին: Եկեղեցու երկարությունը 24, 75 մետր էր, իսկ լայնությունը՝ 12, 70 մետր: Կառուցվել է Շուշիի սրբատաշ քարով:

Սրբատաշ է եղել նաև եկեղեցու եռահարկ Զանգակատունը, որն իրենց միջոցներով կառուցել են Ներսես Ղազարյանը և Մինաս Վարդապետյանը (ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 415, թ. 29): 1906 թ. եկեղեցին վերակառուցվել է:

Խորհրդային Ադրբեջանի չարակամ ձեռքը հասել է նաև այդ եկեղեցուն:

1925 թ. Մեղրեցոցը գտնվում էր ծայրահեղ քայքայված վիճակում. «Մեղրեցոց եկեղեցւոյ լուսամուտներ, դռներ հանած, ռոքները նույնպէս, 4 սյունանոց տաճար, հիւսիսային պատի տակի շքեղ քանդակով տապանը անգիր, մարմարը հանած: Զանգակատունը իսպառ

Մեղրեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին

քանդած, չորս ոտքը կանգուն առանց սրբատաշ քարերի, արձանագիրը ընկած քանդած քարերի մեջ» (ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 415, թ. 30 ա):

Մեղրցոց եկեղեցու քահանաներից են եղել 1825-30 թվականներին՝ Կարապետ Հարությունյան Ճգնավորյանցը, 1836-57 թթ.՝ Մկրտիչ Տեր–Հովհաննիսյան, Մինաս Վարդապետյանցը, 1844-50 թթ.՝ Հովակիմ Տեր-Գասպարյան Տերտերյանցը, 1849-57 թթ.՝ Գրիգոր Հովհաննիսյան Իսկանդարյանցը, 1909-10 թթ.՝ Մինաս քահանա Մինաս Վարդապետյանցը, 1886-1910 թթ.՝ Խորեն քահանա Իսկանդարյանցը, 1892-1910 թթ.՝ Բարսեղ քահանա Տեր Մելիքսեդեկյանցը (ՀԱԱ ֆ. Պ-56, ց. 12, գ. 531, թ. 10, գ. 538, թ. 15, ց. 18, գ. 542, թ. 27, ց. 18, գ. 538, թ. 23, ց. 18, գ. 764, թ. 259-260, ֆ. 57 Պ, ց. 3, գ. 44, թ. 23-28):

Խորհրդային տարիներին Մեղրեցոց եկեղեցին վերափոխել և դարձրել են ամառային կինոթատրոնի շենք: Եկեղեցին 1960-ական թվականներին քանդվել, հարմարեցվել և վեր է ածվել ամառային բացօթյա կինոթատրոնի: Ականատեսների վկայությամբ՝ գրեթե անհնար էր քանդել եկեղեցու ամուր և հաստ պատերը:

Խորհրդային տարիներին ադրբեջանական իշխանությունների՝ հայկական մշակութային ժառանգության բռնայուրացման արդյունքում (Պետրոսյան, 2010, 137-148) պայթեցումներով քանդել են պատերի մեծ մասը, իսկ մեկ մետրից բարձր պահպանված հիմնապատերը ներառվել են ասֆալտի տակ (Մկրտչյան, 1980, 159): 2017 թվականին տեղում պեղումներ է իրականացրել ԱՀ «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի հնագիտական արշավախումբը, որի արդյունքում հեռացվել է ասֆալտի շերտը և բացվել են եկեղեցու հիմքերը: Նախքան պեղումները տարածքն ամբողջությամբ ասֆալտապատ էր: Տեղում երևում էին միայն խորանը և երկու ավանդատները:

Ըստ Մակար Բարխուդարյանցի՝ եկեղեցին կառուցված է եղել գրեթե նույն սկզբունքներով, ինչ Շուշիում կառուցված Ագուլեցոց եկեղեցին. աղոթասրահն ունեցել է ուղղանկյուն ծավալատարածական հորինվածք: Թաղակապ կամարները հանգել են սրահի կենտրոնում բարձրացված չորս սյուների և երկայնական պատերի երեք զույգ որմնասյուների վրա: Ունեցել է երկու մուտք՝ հարավային և արևմտյան կողմերից և 10 լուսամուտ: Զանգակատունը եղել է եռահարկ՝ կառուցված սրբատաշ քարից: Ութանկյուն ռոտոնդայի նման մի փոքրիկ զանգակատուն էլ եղել է եկեղեցու տանիքի մեջտեղում, ինչը բնորոշ է Արցախի համաժամանակյա բազմաթիվ եկեղեցիներին:

Պատերազմից առաջ տեղում կանգուն էր միայն արևելյան պատը և մյուս պատերի՝ մինչև 1 մետր բարձրությամբ հիմքերը: Ինչպես պատերազմի ընթացքի, այնպես և պատերազմից հետո հուշարձանի մասին որևէ տեղեկություն հայտնի չէ:

Հուշարձանն այժմ գտնվում է ադրբեջանական օկուպացիայի տակ: ●

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԵՂՐԻ

Կարճևանի Սուրբ Ուխտը կամ Սուրբ Հովհաննեսը, որ նաև Նուխուդա Սուրբ Հովհաննես է կոչվում

ՆԱԻՐԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մեղրու տարածաշրջանում է գտնվում Կարճևան գյուղը՝ անառիկ մի ձորում, որը երեք կողմից առնված է լեռների նիստում, իսկ հարավային կողմից հարակից է Արաքսի քարավազներին: Բնակավայրը հայտնի է Կիրճևան, Պայծառագյուղ, Քարաչևան և այլ անուններով:

13-րդ դարում գյուղը Տաթևի վանքին վճարել է 12 միավոր դրամահարկ, իսկ 18-րդ դարում՝ 3400 դահեկան պտղահարկ:

Կարճևան գյուղի պատմությունը կարելի է սկսել Ք.ա. 2-1-ին հազարամյակից՝ ենթադրելով նրա տարածքում հայտնաբերված գտածոների ժամանակագրությունից: Սակայն նրա մասին առաջին գրավոր տեղեկությունը վերաբերում է 10-րդ դարին, այն էլ 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի աշխատության մեջ բերված փաստով. «Թագավորը սուրբ եկեղեցուն է ընծայում Արևիք գավառի Մեղրաձորի Կարճավան մեծ ավանը, որն ինքը ձեռք էր բերել գնումով»:

Կարճևանն ունի Ք.ա. 2 –1 հազարամյակից մինչև 18-րդ դարը, ինչպես և 1968թ. թվագրվող տարաբնույթ հուշարձաններ՝ ամրոցբերդեր, գերեզմանոցներ, Սբ Աստվածածին որմնանկարազարդ եկեղեցին, բնակելի տներ, ջրանցք... Սրանց մեջ իր ուրույն տեղն

ունի խնդրակատար Սուրբ Ստեփանոս ուխտատեղին: Պատմական սկզբնաղբյուրներում հուշարձանը հանդես է գալիս Կարճևանի Սուրբ Ուխտ, Կարճևանի Սուրբ Հովհաննես, Կարճևանի Նուխուդա Սուրբ Հովհաննես անուններով:

Այս վանքը 13-րդ դարում հարկատու է եղել Տաթևի վանքին և վճարել է 12 միավոր հարկ:

Ստեփանոս Օրբելյանը Սյունիքի տասը նշանավոր վանքերի ու անապատների շարքում հիշատակում է նաև Կարճևանի Սուրբ Ուխտ անունը:

Նուխուտի Սուրբ Հովհաննեսի և նրա քրոջ ուխտատեղին, ինչպես տեղացիներն են ասում, գտնվում է Կարճևան գյուղից մոտ 5 կմ հյուսիս-արևմուտք՝ Սաղալ լեռան լանջին: Ուխտը ունեցել է եկեղեցի, Ժայռափոր ճգնարան: Այս հուշարձանի տարածքում կան բրոնզեդարյան ամրոց և դամբարանադաշտ, 13-րդ դարի երկու և 18-րդ դարի նվիրատվական խաչքարեր: Վերջինիս վրայի արձանագրության մեջ սրբավայրն անվանվում է Սուրբ Հովհաննեսի ուխտ: Ուխտի դիմացի հարթ ժայռը ժողովուրդը կոչել է «Քարե Ավետարան» Կարճևանի Սուրբ Ուխտի տարածքում է բխում Անահիտի մշտահոս աղբյուրը, որի ջուրը ոտնացավերը բուժելու հատկություն ունի, իսկ մոտ 500 մ դեպի արևելք՝ Աստղիկի աղբյուրը: Ասում են՝ այս աղբյուրի ջուրն էլ աչքերի հիվանդությունն է բուժում և մաքրում արցունքագեղձի բորբոքումը:

Գրավոր աղբյուրներում հիշատակվում է Կարճևանի սուրբ Ուխտի վանահայր Եսայի վարդապետը: Նա եղել է Մովսես Տաթևացի կաթողիկոսի աշակերտը, կառուցել է Երնջակի Սուրբ Կարապետ վանքը և դարձել նրա առաջնորդը 1665թ: Եսայի վարդապետի եղբայրը՝ Տեր Հովհաննեսը, լատիներենից 1666թ. ընդօրինակել է հռոմեացի հրեա պատմիչ Հովսեփիոս Փլավիոսի «Պատմություն պատերազմաց հրեից» («Հրեական պատերազմի մասին») թարգմանությունը: Գրքում թողել վկայություն այն մասին, որ ինքը «երջանկապատիվ Տեր Ստեփանոս Վարդապետ Լեհացուն աղաչել է միասին լատիներենից հայերեն թարգմանել պատմությունը, որից հետո ինքն ընդօրինակել այն:

Թեև Կարճևանի Սուրբ Ուխտն այսօր ավեր է, բայց ամեն տարի բազմաթիվ ուխտավորներ են գալիս խնդրակատար Կարճևանի Սուրբ Ստեփանոսի, կամ Նուխուտա Սուրբ Հովհաննեսի Ուխտը:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԵՂՐԻ

ՆՅՈՒՎԱԴԻ – ՆՌՆԱՁՈՐԻ սրբավայրերը

Նյուվադի գյուղը գտնվում ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի տարածաշրջանի հարավարևելյան կողմում: Այն սահմանակից է Կովսական գավառին, իսկ այսօր՝ Ադրբեջանի հարավ արևմտյան շրջաններին: Գյուղը սկզբնաղբյուրներում հայտնի է Նյուատի, Նյուգադե, Նուվադ, Նավադ անուններով:

Գյուղը գտնվում է Մեղրի քաղաքից 30 կմ հարավարևելք:

Նյուվադի գյուղը 1867 թ. ընդգրկվել է ռուսական կայսրության Կովկասի փոխարքայության Ելիզավետպոլի նահանգի կազմում: 19-րդ դարի ֆրանսիացի ճանապարհորդ Դյուպուան հիացմունքով է խոսում գյուղի այգիների, ոռոգման առուների, նռան և մեղրակաթ թզի, գյուղի ձորամիջյան գեղատեսիլ դիրքի մասին: Ըստ ուսումնասիրողների 19-րդ դարի երկրորդ կեսին Նյուվադիի մուսուլման բնակիչները եղել են թաթեր, որոնք տասնամյակների ընթացքում, ինչպես հազարավոր թաթեր, դարձել են ադրբեջանցի: Գյուղը 1831 թ. ունեցել է 291, **1873 թ.՝ 705, 1886 թ.՝ 1083**, 1897թ՝ . 952, 1926թ՝ . 494, **1931 թ.՝ 596**, 1939 թ.՝ 618, 1959 թ.՝ 76, 1970թ.՝ 1277, 1979թ.՝ 1539, 1989 թ. 1344 բնակիչ: Բնակիչները զբաղվում էին խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, անասնապահությամբ և մեղվաբուծությամբ: Նախկինում այստեղ տարածում ուներ շերամապահությունը:

Խորհրդային ժամանակներում գյուղն ունեցել է միջնակարգ դպրոց, ակումբ, գրադարան, կենցաղսպասարկման տաղավար, և ամբուլատորիա: Գյուղում գործել է «Հայգորգ» արտադրական միավորման մասնաճյուղը: 1988-1989թթ. Ադրբեջանում սկիզբ առած հայկական կոտորածների պատճառով ադրբեջանցիները հեռացան: 1990թ. երկրորդ կեսին այստեղ վերաբնակվեցին 100 տուն հայեր՝ մեծամասամբ Երևանից, ԼՂՀ-ից, Սումգայիթից, Գետաշենից: 1995 թ. ապրիլի 12-ին բնակավայրը մտել է ՀՀ Սյունիքի մարզի մեջ:

Նյուվադի-Նռնաձոր բնակավայրի վարչական տարածքում առկա են և ՀՀ կառավարության 2005 թ. հաստատված հուշարձանների պետական ցուցակում են ընդգրկվել «նախանյուվադիական» պատմական շրջանում գոյություն ունեցած հուշարձաններ: Այդ հուշարձանների առկայությունը վկայում է՝ մինչև թաթաբնակ դառնալը բնակավայրի հայաբնակ լինելու մասին:

Որ Նյուվադի-Նռնաձորն ընդգրկված է եղել Արևիք գավառի կազմում՝ վկայում է ոչ միայն Ղևոնդ Ալիշանը, այլ նաև օտարազգի ճանապարհորդները: Պարզապես բնակավայրը մինչև 18-րդ դարն այլ անունով է հիշատակվել:

Նռնաձոր բնակավայրի վարչական տարածքում առկա է միջնադարյան պատմական միջավայրը՝ գյուղատեղիների տեսքով:

ԷՌՆԱՁՈՐ

Գտնվել է Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառում: Հետագայում Էրնաձոր անունով ընդգրկվել է ՀՍՍՀ Մեղրու շրջանի կազմում:

Գյուղատեղին հայտնի է նաև Այնազոր, Եռնաձոր, Երանաձոր, Երնազիր, Էյնազուր,



Էռնաձոր, Ըռնաձոր, Առնաձոր անունով: Այն գտնվում է Նյուվադի գյուղից մի քանի կմ դեպի հյուսիս-արևելք՝ Արաքսի ավազանի Էրնաձոր գետակի ափին: Կարծիք կա, որ հայաթափված գյուղը վերաբնակեցվել է 1828 թ. Թուրքմենչայի պայմանգրից հետո, երբ Պարսկահայքի Ըռնա կամ Առնա գյուղի մի քանի ընտանիք տեղափոխվել և վերաշինել է ավերված պատմական Վաշտ գյուղը՝ ՝ տալով նրան Ըռնաձոր անունը:

Գյուղը 1878թ. ուներ 153, 1897թ. ՝ 163, 1926թ.՝ 221, 1939թ.՝ 174, 1959-ին՝ 32 բնակիչ: 1960-ական թթ. սկզբներին լքվել է, բնակիչները տեղափոխվել են Ծվանիձոր գյուղ: Գյուղատեղիի տարածքում պահպանված են բնակելի տների ավերակները: Հստակ երևում է, որ բնակիչներն ապահով ապրուստ են ունեցել. տների մուտքը սրբատաշ քարերով շարված կամար է, նմանապես պատուհանները և ներսի ինտերիերը: Տներ կան, որ անգամ երկհարկ են: Գյուղատեղին ունի հայկական գերեզմանոց, որտեղ առկա են նաև 19-րդ դարի մահմեդական թաղումներ:

Տարածքում դեռ կանգուն է միանավ բազիլիկ խոնարհված եկեղեցին:

Բնակիչներն ապրել են երկթաղ: Գյուղատեղին ունի կառավարության կողմից հաստատված հուշարձանի կարգավիճակ, իսկ որպես հուշարձան ՝ պահպանական գոտի :

Մացրիկ՝ Եկեղեցու ձոր

Գյուղատեղի Մացրիկը համապատասխանում է Նռնաձորի վարչական տարածքում գտնվող եկեղեցու ձոր կոչվող վայրին: Գյուղատեղին հիշատակվում է 13-րդ դարում՝ Տաթևի վանքի հին հարկացուցակում, ըստ որի վճարել է 8 միավոր հարկ: Գյուղատեղիում կանգուն է եկեղեցին: Նշմարելի է բնակատեղին՝ ավերված տներով և գերեզմանոցը:

Այն գրանցված է Սյունիքի մարզի հուշարձանների պետական ցուցակում և ունի պահպանական գոտի

* * *

Կապանից 108 և Մեղրի քաղաքից 30 կմ հեռավորության վրա գտնվող սահմանամերձ այս բնակավայրը վարչական տարածքով մարզի ամենախոշոր գյուղերից է: Թեև հայ-ադրբեջանական հակամարտության հետքերը տակավին գյուղում առ այսօր մնացել են՝ բայց բնակիչների կողմից և գյուղի ղեկավարի աջակցությամբ Նռնաձորը կրկին շենանում է: Այն չպետք է կրկին հայաթափվի :

Չմտած գյուղ՝ Արաքս գետին զուգահեռ ձգվում է դեպի արևելք ասֆալտապատ ճանապարհ, որն Ադրբեջանի կողմից կառուցվել էր խորհրդային տարիներին՝ Բաքու-Մեղրի-Նախիջևան ճանապարհային կապն ապահովելու համար: Միայն Կարեն Դեմիրճյանի հեռատես քաղաքականության շնորհիվ ճանապարհի հետագա կառուցումը դադարեցվեց, քանի որ Մեղրու շրջանի ժողովրդագրական պատկերը փոխելու հեռագնա նպատակ էր հետապնդվում:

Իսկ այդ ճանապարհից դեպի ձախ՝ Եկեղեցու ձոր տարածքի եկեղեցին շարունակում է որպես ուխտատեղի ծառայել Նռնաձորցիների համար:

Թոսի եկեղեցին

Ղևոնդ Ալիշանը Թոսը ենթադրաբար նույնականացնում է քարտեզներում նշանակված Թիզ գյուղին:
Թոս գյուղատեղին գտնվում է Մալևի ձորում՝ համանուն գետակի աջ ափին՝ թեք սարալանջի վրա: Արլ-ով և հվ-ով հոսում է Թոսա գետը: Թոսի եկեղեցին, իշխող դիրք ունի ավերակների վրա: Միանավ խորանի երկու կողմում ավանդատներով, մուտքը հվ-ից սրահ է: Երկայնական պատերին կպած որմնամույթերի միջև ունի կամարակապ խորշեր (կողային նավերին փոխարինող): Արլ ճակատին ագուցված են խաչքարեր, բազմաթիվ խաչքարեր տեղադրված են եկեղեցու ներսում, որոնք այստեղ են բերվել գերեզմանոցի մելիորացված տարածքից: Պատերը շարված են ճեղքված գրանիտով և բազալտով, կապակցող նյութը կրաշաղախն է: Տանիքը երկթեք է եղել:
Թոս գյուղատեղիի վերջին կանգուն տունը պահպանվում է դաշտամիջյան ճանապարհի եզրին, որն օգտագործվում է որսորդների կողմից՝ հանգրվան:

Վերին կամ Հին Մալևու Ամենափրկիչ անապատ կամ Մալևու Ամենափրկիչ կուսանաց անապատը

Մալև Վերին կամ Մալև Հին, գտնվում է Մեղրի քաղաքից մոտ 10 կմ հս-արլ, Մալևի ձորում, գետի անտառապատ ափին, մյուս Մալև կամ Ներքին Մալև գյուղից մոտ 7 կմ հս-արմ: Ռուսական քարտեզներում նշանակված է Մալվալան ձևով: Մինչև 50-ական

թթ. բնակելի էր, և սրա բնակիչներն իջնում էին Ներքին Մալև՝ մասնակցում բերքահավաքին ու նորից գնում Հին կամ Վերին Մալև: 1954 թ. միացավ Ներքին կամ Նոր Մալևին: Պահպանվել են գյուղի եկեղեցին, գերեզմանոցը և տների ավերակները:

Մալևու (Մանլևու) ամենափրկիչ անապատը կամ ամենափրկիչ կուսանաց անապատը հիշատակում են 10-13-րդ դդ պատմիչները: Հիշատակվում է նաև որպես գրչության վայր:

Մալև Ներքին կամ Մալև Նոր

Մեղրի քաղաքից 9-10 կմ հյուսիս-արևելք, Մալև գետի վերնագավառում, բարձրադիր և անտառազուրկ ձորահովտում, Վերին Մալևից մոտ 7 կմ հարավ-արևելք: 1831 թ. ուներ 255, 1897 թ.՝ 322, 1926 թ.՝ 319, 1939 թ.՝ 308, 1959 թ.՝ 123 հայ բնակիչ: Այժմ միավորված է Ալվանք գյուղին և նրա մի թաղամասն է:

Կարևոր դեր է խաղացել Դավիթ Բեկի ղեկավարած ազատագրական պատերազմներում, այդ պատճառով էլ մի քանի անգամ հիշատակվում է Դավիթ Բեկի պատմության մեջ:

Եկեղեցին հիմնադրել են Վերին Մալևից այստեղ եկածները և ի հիշատակ իրենց եկեղեցու՝ անվանել են Սբ Հակոբ: 1905 թ. եկեղեցին հրկիզել են ազերի թուրքերը: Արևելյան կողմում խորանն է՝ երկու կողմում ավանդատներով, մուտքը հյուսիսից է, տանիքը՝ քանդված: Ավանդատները և խորանը մեկական պատուհան ունեն արե-ից, սրահը երկու պատուհան՝ հարավից: Տանիքը և ծածկը ժամանակին եղել են փայտաշեն:

Քուջերթի եկեղեցին

Համանուն գյուղը գտնվում է Մալևի ձորում՝ Մեղրի քաղաքից 10 կմ հյուսիս-արևելք: Պահպանվել են հին եկեղեցին, շինությունների մնացորդները և գերեզմանոցը:

Ափկեսի (Աբկեսի, Աբկեզի) եկեղեցին

Գյուղը լքվել է 1939 թ., գտնվում է Մալև գետի վերնագավառում, ջրհավաք ավազանում, բարձրադիր լեռնադաշտի վրա: Արևելյան սահմանով հոսում է Մալև գետը, իսկ արևմտյանով՝ Մալևի ձախ օժանդակ վտակը: Գյուղատեղիի հարավային եզրին գտնվում է եկեղեցին, որից հյուսիս տարածվում է գերեզմանոցը: Միանավ եկեղեցի է՝ հատակագծային լուծումներով և ճարտարապետական հորինվածքով նման Զվարավանքի, Ագարակի, Թոսի, Մալևի եկեղեցիներին: Թաղածածկ է, խորանի երկու կողմում ավանդատներով, մուտքը՝ արմ-ից, երկու զույգ կամարաձև երկայնական պատերին կպած որմնամույթերի միջև առաջացել են կամարակապ որմնախորշեր, որոնք փոխարինում են եզրային նավերին: Շարված է կիսամշակ բազալտով և գրանիտով: Ամբ պատի մեջ ագուցված են խաչքարեր: Եկեղեցուց հյուսիս գերեզմանոցն է, որը ճանապարհով բաժանվում է երկու մասի: Հուշարձանները կերտված են կիսամշակ

գրանիտից, անմշակ սալաքարեր են, կիսամշակ պարզունակ հորինվածքով խաչքարեր: Գյուղատեղիում պահպանվում են կիսավեր և հիմնովին ավերված տների ավերակներ:

Աղվանակ կամ Աղվո վանքը

Գյուղը հայտնի էր նաև Աղվանակ անվամբ: Գտնվում էր Աղավնաձոր գետակի աջ ափին, ձորի մեջ տափարակի վրա: Ավերակները հս-հվ ուղղությամբ տարածվում են մոտ 500 մ., արմ-արլ 200 մ: 17-րդ դարում կառուցված եկեղեցին խորանի երկու կողմում ավանդատներով, մուտքը հյուսիսից թաղածածկ սրահ է: Երկայնական պատերը կիսով չափ խրված են հողի մեջ: Արլ ճակատի փոքրադիր պատուհանի ուղղությամբ արտաքին երեսապատը քանդված էր, առաջացնելով վտանգավոր գործող խորշ: Եկեղեցին փոքրածավալ է, շարված ճեղքված գրանիտով և կրաշաղախով: Երկայնական պատերի մեջ կան կամարակապ որմնախորշեր: Եկեղեցու շուրջը և նրանից հվ. ամ. տարածվում է գերեզմանոցը՝ անշուք, կիսամշակ կամ անմշակ շիրմաքարերով և խաչքարերով: Տարածքում պահպանվում են գյուղատեղիի կառույցների հիմնապատերը՝ շարված անմշակ գրանիտով կամ բազալտով:

Երկաստան, հանգած եկեղեցի լքված գյուղատեղիում

Գյուղը մատենագիտության մեջ նշվում է այլ անունով ևս՝ Եկտաստայց, Եկտաստանց, Եկտաստանք և այլն:
Գյուղատեղին գտնվում է Մեղրի քաղաքից 15 կմ հյուսիս, Վանք գյուղի մոտ, բարձր լեռան լանջին, անտառի մեջ:
Նշմարվում են շինություններ, ավերակ ջրաղացի մնացորդներ և գերեզմաններ:
Նշմարվում են նաև վանքի հետքերը:
Տեղանքը ներկայումս կոչում են Տերտերասար անվամբ:
Այստեղից էին Շահումյանները և նրանց նշանավոր ներկայացուցիչ Ստեփանոս Շահումյանը՝ Դավիթ Բեկի մերձավոր զինակիցներից մեկը, ում և համարել են Ղափանի ազատագրական շարժման պատմության հեղինակը:
Ըստ 1781 թ.հարկացուցակի՝ Տաթևի վանքին գյուղը տալիս էր 1600 դահեկան պտղի հարկ:

Կալերի Սուրբ Աստվածածին եկեղեցին



Մատենագիտության մեջ գյուղը հիշատակվում է նաև Գյալուր, Կյալի, Կյալուր, Քյալուր:
Գտնվում է Մեղրու տարածաշրջանի հյուսիսային մասում, Մեղրու լեռնաշղթայի հարավային բարձրադիր լանջին, Կալեր գետի վերնագավառում, Մեղրի քաղաքից մոտ 18 կմ հյուսիս:
Մեղրու տարածաշրջանի ամենաբարձր լեռնային գյուղն էր:

Գյուղը Կալեր է վերանվանվել 1935-ին՝ օտարների կողմից տևական ժամանակ Գյալուր կոչվելուց հետո:
1960-ական թթ. ապաբնակեցվել է գյուղերի խոշորացման պատճառով:
Գյուղի եկեղեցու մասին այլ տեղեկություններ չկան:
Կալերում է ծնվել ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, հայագետ-արևելագետ Կարո Մելիք-Օհանջանյանը (1893-1970 թթ.):

Մեղրի քաղաքի հյուսիս-արևելյան թաղամասի եկեղեցին

Նուշանցի Սուրբ Սարգիս եկեղեցին

Գյուղի ավերակները գտնվում են Կալեր գյուղի մերձակայքում:
Եկեղեցին հիշատակվում է 13-րդ դարից, վերանորոգվել է 1903-ին:
Հիշատակվում է նաև Տաթևի վանքի նոր հարկացուցակում (18-րդ դար):
Նույնացվում է Դավիթ Բեկի պատմության մեջ հիշատակված Նուշկեկ գյուղին:

Սրբացված բլուր Մեղրիում՝ Սուրբ Սարգիս անվամբ

Վանքի Սուրբ Աստվածածին եկեղեցին

Գյուղը գտնվում է Մեղրի քաղաքից 15 կմ հյուսիս, Մեղրու լեռնաշղթայի հարավային լանջին, Կալեր գետի ձախակողմյան մասում, լեռնային ջրառատ վայրում:
Գյուղի բնակիչներն այստեղ են գաղթել Պարսկաստանի Ղարադաղի գավառից:
Բնակավայրերի խոշորացման պատճառով ապաբնակեցվել է 1960-ական թթ.:
Հիշատակված է Տաթևի վանքի նոր հարկացուցակում (18-րդ դ):
Եկեղեցին, որ հիմնադրվել է 1646 թ., կանգուն է:
Շրջակայքում են Տմալի, Կռաձոր, Երկտաստանց գյուղատեղիները, գետի վրա է 17-րդ դարի կամուրջը:

Թխկուտի Սուրբ Հակոբ եկեղեցին

Գյուղի պաշտոնական անունը Թխկուտ է: Ռուսական կայսրության ժամանակաշրջանում հայտնի է եղել Վարդանազուր երկրորդ անունով: 2006 թվականի հուլիսի 4-ին վերանվանվել է Թխկուտ:
Գտնվում է Մեղրի գետի ձախ ափին՝ ծովի մակարդակից մոտ 1200 մ բարձրության վրա: Մեղրի քաղաքից հեռու է մոտ 9 կմ դեպի հյուսիս-արևմուտք:
Ռուսական կայսրության ժամանակաշրջանում եղել է Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի բնակավայր: Խորհրդային Միության տարիներին մասն է կազմել Հայկական ԽՍՀ Մեղրու գավառի, իսկ 1930 թվականից՝ Մեղրու շրջանի: 1995 թվականից մտնում էր Սյունիքի մարզի մեջ՝ հարևան Այգեձոր և Վարդանիձոր գյուղերի հետ կազմելով Վարդանիձոր համայնքը:
Համաձայն 2011 թվականին Հայաստանում անցկացված մարդահամարի արդյունքների՝ Թխկուտի մշտական բնակչությունը կազմել է 69, առկա բնակչությունը՝ 45 մարդ:

Մեղրի քաղաքի Մկաց աղբյուր սրբավայրը

Նորաշենք գյուղի եկեղեցին

Նորաշենք - գյուղատեղի Մեղրի քաղաքի մոտ՝ գետափին: Նշմարվում են շինությունների հետքերը, եկեղեցուց միայն աջ ավանդապատն է մնում, շրջակայքում առկա են 16-17-րդ դարերի տապանաքարեր:

Շվանիձորի Սուրբ Աստվածածին եկեղեցին

Շվանիձոր գյուղը գտնվում է Արաքս գետից մոտ 1 կմ հեռավորության վրա՝ ձախ ձորալանջին, ծովի մակարդակից 600-700 մ բարձրության վրա, Մեղրի քաղաքից 11 կմ հյուսիս-արևելք:
Գյուղի կենտրոնում է գտնվում Սուրբ Աստվածածին եռանավ բազիլիկ եկեղեցին՝ կառուցված 1879 թվականին:
Այն՝ ճարտարապետական ոճով, վկայում է տարածքի կրոնական և մշակութային ժառանգության մասին:
Շվանիձորը մատենագիտության մեջ հիշատակվում է այլ անվանումներով ևս՝ Աստազոր, Աստազուր, Ախտախան, Աստվածաձոր, Շիրվանաձոր և այլն:

Շվանիձորի Սուրբ Սարգիս մատուռը

Ղուկաս Սեբաստացին «Դավիթ Բեկի պատմությունը» սկզբնաղբյուրում նշում է, թե ովքեր էին Դավիթ Բեկի զորավարներն ու զորապետները: Այդ շարքում նշվում է նաև Շվանիձորի Սարգիս զորավարի անունը՝ 250 գինյալով:

Սարգիս զորավարն այն եզակիներից է (այդ ժամանակաշրջանի զորապետներից), ում գերեզմանը պահպանվել է: Գտնվում է Վերին Շեն գյուղատեղիի արևմտյան ծորեգրին՝ մի փոքրիկ տափարակի վրա: 1980-ականներին Շվանիձորի դպրոցի ուսուցիչ Պողոս Արզումանյանի և այդ կրթօջախի մի խումբ աշակերտների նախաձեռնությամբ ու ջանքերով փոքրիկ մատուռ է կառուցվել Սարգիս զորավարի գերեզմանի վրա:

Սրբավայր դարձած այդ գերեզմանին մեղրեցիները նաև մեկ ուրիշ անուն են տալիս՝ Կարմիր խաչ, որը (ավանդույթի համաձայն) զորություն է տալիս հավատի ուժով այնտեղ այցելած՝ չամուսնացած օրիորդներին, չբերության խնդիր ունեցող կանանց: Իսկ փոքր-ինչ ներքևում գտնվող ծորակում ջուր կա՝ ոտքի ցավերը բուժող: Ժողովուրդն ինչ-որ առումով զորավար ու զորավոր Սարգսի և Սուրբ Սարգսի միջև զուգահեռներ է անցկացրել...

Շվանիձորի գյուղամիջի խաչքարերը (երեք խաչքար) Կարեն Առաքելյանի տան մոտ

Գոմերանցի եկեղեցին

Գյուղատեղին գտնվում է Շվանիձորից 16 կմ հյուսիս-արևելք, Շվանիձորի սկզբնամասում, Ափկես գյուղատեղի տանող ճանապարհի աջ կողմում:
Հիշատակվում է 17-րդ դարից: Պահպանվում է խոնարհված եկեղեցին, կան տների ավերակներ: Եկեղեցու անվանումը հայտնի չէ: Ձորով հոսող Շվանիձոր գետն Արաքսի ձախակողմյան վտակներից է: Սկիզբ է առնում Մեղրու լեռնաշղթայից և մայր գետ թափվող Շվանիձոր գյուղից ներքև:

Բերդին քար ամրոցի գագաթի խաչը

Երկնահաս Բերդին քար ամրոցն է՝ մոտ 3000 մ բարձրությամբ, որը մեղրեցիների համար պաշտպանական բնական ամրություն է եղել դեռևս մ.թ.ա. 2-րդից 1-ին հազարամյակներում: Բերդին քար ամրոցի գագաթին շվանիձորցիները մի քանի տարի առաջ խաչ են կանգնեցրել:



Վերին Շենի եկեղեցին

Շվանիձորի մերձակայքում (գյուղից 6 կմ հյուսիսարևելք) այդ գյուղատեղիի մասին տեղեկություններ գրեթե չեն պահպանվել: Հիշատակվում է 17-18–րդ դարերից: Գյուղի եկեղեցու միանավ սրահը՝ բազիլիկ ոճի, խոնարհված է, տեղ–տեղ փլուզման վտանգի առջև կանգնած, ներսը՝ քարուքանդ:
Մուտքի աջ մասում՝ սրահի մեջ, եկեղեցու կառուցման ժամանակն իր վրա կրող քարն է՝ գրեթե եղծված:
Մուտքի մոտ՝ մի տապանաքարի վրա հաղորդության խորհուրդն արտացոլող պատկերն է:

Վահրավարի Սուրբ Գևորգ եկեղեցին

Գյուղը Մեղրի քաղաքից հեռու է մոտ 8 կմ դեպի հյուսիս-արևմուտք, գտնվում է Վահրավար գետի աջակողմյան լեռնալանջին:
Մատենագիտության մեջ հիշատակվում է այլ անուններով ևս՝ Պուղավար, Բուկավար, Վագրավար, Վայրավառ և այլն:
Գյուղի եկեղեցին կոչվում է Սուրբ Գևորգ: Մոտակայքում է Կարմրավանքի եկեղեցին:
Եղել է գրչության կենտրոն:
Վահրավար-Գուդեմնիս գյուղերի միջև համանուն գետերի ջրբաժանի վրա է գտնվում Կաքավաբերդ ամրոցը, որը՝ հիմնադրված Ք.ա. առաջին հազարամյակում, նշանավոր բերդ է եղել նաև Սյունիքի թագավորության շրջանում:

Կարմրավանքի եկեղեցին

Հիշատակվում է 17-րդ դարից: Թաղածածկ ուղղանկյուն դահլիճ է՝ թեք ծածկով: Բեմի հատակի տակ թաքստոց է, որի օդափոխության անցքը դուրս է գալիս խորանի պատին կից և աննկատ է:

Գուդեմնիսի Սուրբ Աստվածածին եկեղեցին

Մեղրի քաղաքից մոտ 7 կմ հյուսիս-արևմուտք, լեռնալանջի վրա գտնվող գյուղը մատենագիտության մեջ հիշատակվում է այլ անվանումներով ևս՝ Կուդեմնիս, Կուտեմնիս, Գտանիս...
Գյուղում կա 17-18-րդ դարերից հիշատակվող եկեղեցի, որը կոչվում է Սուրբ Աստվածածին:
Մերձակայքում կան հին բնակավայրերի հետքեր:

Կարճևանի Սուրբ Աստվածածին եկեղեցին

Մեղրի քաղաքից 12 կմ արևմուտք գտնվող Կարճևան գյուղը երեք կողմից լեռներով շրջապատված բարձունքի վրա է:
Մատենագիտության մեջ հիշատակվում է այլ անուններով ևս՝ Կարճավան, Կարճիվան, Կարճվան, Կիրճեվան, Պայծառագյուղ...
Գյուղը հիշատակվում է 10-րդ դարից: Այն հայոց Սմբատ Բագրատունի թագավորը (890-914 թթ.) 906 թ. գնել և նվիրել է Տաթևի վանքին:
Գյուղը մատենագիտության մեջ հիշատակվել է նաև իբրև «մեծ ավան»:
Գյուղի կենտրոնում է գտնվում Սուրբ Աստվածածին եկեղեցին:
Գյուղից հարավ-արևմուտք է գտնվում Կարճևանի կամ Սուրբ Ստեփանոս վանքը:
Գյուղի մոտ են գտնվում Կարճևանի բերդի ավերակները:
Գյուղի մերձակայքում են գտնվում սրբացված մի ժայռ՝ «Մամախաչ» անվամբ, նաև ժայռակոփ Սուրբ Խաչ մատուռը, բազմաթիվ խաչքարեր, Լաչքար գյուղատեղին: Գյուղից 4-5 կմ հյուսիս Սահալ լեռան լանջին է գտնվում Քարե ավետարան-ուխտատեղին: Արաքս գետի ձախ կողմում գտնվող Սահալ լեռան լանջին էր գտնվում Նուխուտի Սուրբ Հովհաննեսը և նրա քրոջ ուխտատեղին: Կարճևան գյուղի և Մեղրի քաղաքի միջև՝ լեռան վրա է գտնվում Մանդաց խաչ-ուխտատեղին:

Հըգերակի կամ Ագարակի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին

Համանուն գյուղը, որ հիմա լքյալ է, գտնվում է Մեղրի գետի աջ կողմում՝ այժմյան Կուրիս գյուղից մոտ 1 կմ հարավ:
Հիշատակվում է 13-րդ դարից՝ իբրև Արևիք գավառի մաս կազմող Կաքավաբերդի գավառակի գյուղերից մեկը:
Գյուղի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին՝ 17-րդ դարից, կանգուն է մինչև հիմա, բայց պղնձամոլիբդենային հանքավայրի կենտրոնում կղզի դարձած հողակույտի վրա:

Ագարակի անունով են կոչվել նրանից ոչ հեռու՝ 1949-ին հիմնադրված բանավանը, որը 1954 թ.մայիսի 18-ին դասվեց ՀԽՍՀ քաղաքատիպ ավանների շարքը:
Հիմա քննարկվում է Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին Ագարակ քաղաք տեղափոխելու հարցը:
Մատենագիտության մեջ գյուղը հիշատակվում է այլ անուններով ևս՝ Ագերակ, Էգրակ, Ագրակ, Էրկեկ...
Գյուղի դիմաց՝ բարձրադիր վայրում է գտնվում մի մատուռ-սրբավայր:

Կուրիսի Սուրբ Սարգիս կամ Սուրբ Ստեփանոս եկեղեցին

Հիշատակվում է 17-րդ դարից, գտնվում է գյուղի կենտրոնում:
Գյուղից 1 կմ հեռավորության վրա է գտնվում Կուրկուտախաչ ուխտատեղին:
Այնտեղից բխող աղբյուրի ջուրը խողովակներով բերվել է Կուրիս:
Ենթադրվում է, որ Կուրիսը Տաթևի վանքի հարկացուցակում նշված Կուրավանք գյուղն է (չպետք է շփոթել Ծղուկ գավառի նույնանուն բնակավայրի հետ):
Գյուղի տարածքում կան բազմաթիվ խաչքարեր, մատուռներ, գերեզմաններ:

Զվարավանք

Կառուցվել է 17-րդ դարում, գտնվում է Լիճք գյուղից 1, 5 կմ հարավ-արևմուտք՝ Զվար գետի հովտում՝ ավերված համանուն գյուղատեղիում:
Վանական համալիրից պահպանվել է միայն եկեղեցին, իսկ նրա շուրջը՝ գերեզմանոցի հետքերը: Եկեղեցին երկթեք ծածկով և խորանի երկու կողմում զույգ ավանդատներով կառույց է: Կառուցված է ճեղքված բազալտով և կրաշաղախով: Աղոթասրահի պատերի վրա, առկա են երկու զույգ որմնամույթեր, լայնությունը՝ 1.50 մ:
Մույթերը և թաղակիր կամարները ներսի տարածությունը բաժանում են երեք մասի, որոնցից երկուսը հավասարաչափ են, իսկ երրորդը՝ կարճ է:
Աղոթասրահի ներքին ծավալը մեծանում է մույթերի միջև թաղածածկ խորշերի շնորհիվ: Ունի մեկ մուտք հյուսիսային կողմից:
Ինչպես նշեցինք՝ վանքը (երբեմն կոչվել է եկեղեցի) գտնվել է համանուն գյուղում, որ գտնվել է Լիճք գյուղից 2-3 կմ հարավ-արևմուտք Ալիշանը Զվարը նույնացնում է Զվարի վանք գյուղի հետ:

Լիճքի Սուրբ Կարապետ եկեղեցին

Համանուն գյուղը գտնվում է Մեղրի գետի վերին հոսանքում՝ Մեղրի քաղաքից մոտ 19 կմ հյուսիս-արևմուտք: Գյուղից վերև կան մի քանի մանր լճակներ, որի համար էլ, ըստ տեղացիների, այն կոչվել է Լիճք:

Գյուղի տարածքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով՝ Մեղրի գետի վրա գտնվող կամուրջը (17-րդ դար), Զվարավանքը (17-րդ դար), Զվար, Թաղամիր, Մուլք գյուղատեղիները:

Տաշտունի Սուրբ Ստեփանոս եկեղեցին

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԵՂՐԻ

Համանուն գյուղը գտնվում է Տաշտուն գետի հովտում: Ուշ միջնադարյան Տաշտունը եղել է գրչության կենտրոն: Անվանվել է նաև Դաշտուն ձևով: Սուրբ Ստեփանոսը քառամույթ գմբեթավոր բազիլիկ եկեղեցի է՝ կառուցված 11-13-րդ դարերում, վերանորոգված՝ 17-րդ դարում: Շրջակայքում կան գյուղատեղիներ՝ Ռոմելանց, Քյիլդիգանց (14-17-րդ դարեր) խաչքարերով գերեզմանատներ: Առկա է նաև միաթռիչք կամուրջ Ղուզղուզ գետակի վրա:

Արդյո՞ք Լուսկա վանքը կամ Լուսկե վանքը Լիճքվազ լքյալ գյուղում է եղել

Մեղրի քաղաքից 5-6 կմ հյուսիս-արևմուտք՝ Մեղրի և Վահրավար գետերի միախառնման աջափնյա մեղմաթեք սարալանջի վրա գտնվող Լեհվազ բնակավայրը մատենագիտության մեջ հիշատակվում է մի քանի անունով՝ Լեհվազ ներքին, Լեհվազոձոր, Լեյվազ...
Գյուղի մոտ է գտնվում մի ավերված ու լքված բնակավայր, որն ըստ էության հին գյուղն է, որին տրվում է նաև Վերին Լեհվազ անունը: Ս. Էփրիկյանը, Ղ. Ինճիճյանը Վերին Լեհվազ անվանումներից, գյուղը Լիճվազն է: Հայագիտության մեջ տեսակետ կա, որ Լիճքվազում է եղել Լուսկա վանքը կամ Լուսկե վանքը՝ Սյունիքի նշանավոր վանքերի ցուցակում հիշատակվող: Ղևոնդ Ալիշանի ենթադրությամբ՝ գյուղի և վանքի անունները կապված են Բարդուղիմեոս առաքյալի աշակերտ Լուսիկի հետ:
Նշանավոր այդ տաճարի հետքերը գտնված չեն, ուստի և ներկայացնում ենք Լեհվազ գյուղի նկարը:

Կնցավերի հանգած եկեղեցի կամ Կնցավերի խաչ (գ. Կարճևան)

Ճարտարապետական հայացք Մեղրու եկեղեցիներին և վանքերին

Հայ ճարտարապետության համար մեծ արժեք են ներկայացնում Մեղրու գմբեթավոր եկեղեցիները, որովհետև Սյունիքի 17-րդ դարի նույնատիպ հուշարձանները կառուցված են առանց գմբեթի՝ որպես թաղածածկ դահլիճներ կամ եռանավ բազիլիկներ:

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ
ՀՀ վաստակավոր ճարտարապետ

Ամբողջ Սյունիքում կան գմբեթավոր երեք եկեղեցի, այն էլ Մեղրիում: Այս հուշարձաններից երկուսի՝ Մեղրու վանքի և Մեծ թաղի եկեղեցիների գմբեթները իրականացված են աղյուսից: Կառուցելով բազիլիկների հիմնական ուղղանկյուն ծավալը տեղական բազալտից, շինարարները ծավալի վրա դրել են աղյուսաշեն գմբեթներ, որոնց կառուցումն ավելի դյուրին է, էժան և արագ, քան բազալտի օգտագործման դեպքում: Այս երեք եկեղեցիներից հատակագծային-ծավալային լուծմամբ առանձնանում է Մեղրու Մեծ թաղի եկեղեցին: Մյուս երկուսը՝ Մեղրու վանքի ու Տաշտոնի եկեղեցիները, ունեն համարյա նույն չափերը և հորինվածքը ուղղանկյուն ծավալ, երկթեք ծածկով, որի վրա ուղղակի բարձրանում է գմբեթը (Տաշտոնի եկեղեցու գմբեթը քանդված է 30-ական թվականներին):

Տաշտոնի և Մեղրու վանքի եկեղեցիներում երեք նավերն էլ մեջտեղում հատվում են աղոթասրահի առանցքին ուղղահայաց թաղով, որն ունի նույն բարձրությունը, ինչ միջին նավը: Թաղի պատերը հենվում են մույթերից դեպի հյուսիսային և հարավային պատերն ընկած կամարների վրա: Փաստորեն հատակագծում ստացվում է խաչաձև գմբեթավոր եկեղեցու հորինվածք, որը, սակայն, հուշարձանի ծավալային լուծման մեջ բոլորովին չի արտահայտվում:

Այս հուշարձաններում գմբեթատակ քառակուսին տեղադրված է ճիշտ դահլիճի կենտրոնում (մույթերից դեպի արևելյան և արևմտյան պատերն ընկած կամարների թռիչքները հավասար են), որի հետևանքով դրսից՝ հյուսիսային և հարավային կողմերից, նայելիս գմբեթը թվում է տեղադրված է դեպի արևմուտք:

Մեղրու վանքի գմբեթը բարձրանում է գմբեթատակ քառակուսուց առագաստային անցման միջոցով ստացված քարե օղակից, որն ուղղակի դուրս է գալիս տանիքի երկթեք ծածկի միջից: Թմբուկը ներսից գլանաձև է, դրսից բազմանկյուն՝ 12 նիստով: Գմբեթը թե՛ ներսից և թե՛ դրսից գնդաձև է: Դժվար է ասել, թե այն դրսից բրգաձև ծածկ ունեցել է թե ոչ, որովհետև այսպիսի ծածկի հետքերը չեն պահպանվել: Մեղրու վանքում բազիլիկի ուղղանկյան ծավալի հետ գմբեթը օրգանապես չի կապվում, ճարտարապետական միասնական հորինվածք չի ստեղծում: Կառուցվածքի գմբեթավորման այսպիսի եղանակի ոչ օրգանական բնույթն ավելի է ակնհայտ Տաշտոնի եկեղեցու օրինակով, որտեղ գմբեթը քանդված է և արտաքուստ հնարավոր չէ եզրակացնել, թե այդպիսին գոյություն է ունեցել: Տաշտոնի և Մեղրու նշված հուշարձաններում գմբեթի անհրաժեշտությունը չի բխում կառուցվածքների տարածական հորինվածքներից: Այս երկու հուշարձանների արտաքին տեսքն անհետաքրքիր է, կիսամշակ բազալտե քարերից կառուցված ուղղանկյուն խուլ ծավալներ, լուսամուտների փոքր ճեղքերով, դռան պարզունակ բացվածքով ու երկթեք ծածկով: Մեղրու վանքի ինտերիերը մշակված է աղյուսե դեկորատիվ որմնակամարներով: Խորշերը բեմի աբսիդում երկշարք են, ընդ որում՝ վերևի շարքը բեմի հատակից մոտ 3 մ բարձրության վրա է գտնվում և, հետևաբար ունի զուտ դեկորատիվ բնույթ: Խորշերի, որմնանկարների սլաքաձևությունը խիստ շեշտված է:

Մեղրու Մեծ թաղի սբ Աստվածածնի գմբեթավոր բազիլիկը առանձնանում է առաջին հերթին իր բացարձակ չափերով և ավելի է ձգված արևելք-արևմուտք ուղղությամբ: Հատակագծային հորինվածքը նույնն է, բայց կա տարբերություն համաչափությունների մեջ, որը և զգալի ազդում է հուշարձանի ընդհանուր կերպարի վրա: Միջին նավը կողքի նավերի համեմատ բավականին լայն է: Նրանց հարաբերությունը կազմում է 1:4, 5 մ (մյուս երկու հուշարձաններում՝ 1:1, 9): Գմբեթատակ քառակուսին իրականացված է ոչ թե դահլիճի մեջտեղում, այլ արդեն տեղաշարժված է դեպի արևելք, որը ստացվել է արևելյան կամարների երկարությունը կրճատելով: Միջմույթային կամարները կազմում են գմբեթատակ քառակուսին, որի անկյունների առագաստները ծառայում են ներսից գլանաձև, դրսից ութանիստ թմբուկին անցնելու համար: Տ-աձև մույթերը կառուցված են տաշած բազալտի խոշոր քարերից: Մույթերը և ներսի պատերը հետագայում սվաղել են:

Եկեղեցին ունի միատեսակ և նույն չափի երկու մուտք՝ արևմուտքից և հարավից (մյուս երկուսը ունեն մեկական մուտք՝ Տաշտոնում հարավային պատում, Մեղրու վանքում՝ արևմտյան):

Բոլոր երեք եկեղեցիներում կամարներն երկկենտրոն են, շեշտված սլաքաձև, կառուցված մա-

քուր տաշված բազալտե քարերից: Միջմույթային կամարները հանգչում են իմպոստների վրա, իսկ դեպի արևելյան և արևմտյան պատերը գնացող կամարները և փոքր նավերի թաղակիր կամարները ձուլվում են պատի հարթության կամ որմնամույթերի հետ:

Թաղերը կտրվածքում երկկենտրոն են, շարված ճեղքված, երկարավուն բազալտի քարերից:

Հարավային պատը ստորին մասում կառուցված է ավելի լայն՝ 1.61 մ: Հատակից 0.55-1.5 մ բարձրության վրա պատը նեղանում է՝ դառնալով 1.33 մ (մյուս պատերի լայնությանը հավասար): Նեղանում է ներսից, որի հետևանքով հարավային կողմի նավը ստացվել է լայն, քան հյուսիսայինը:

Հուշարձանը հատակագծում անկանոն ուղղանկյուն է՝ հյուսիսային պատը երկար է հարավայինից: Սա հատակագծի սխալ նշմարման հետևանք է:

Եկեղեցու կողքի նավերի արևելյան և արևմտյան հատվածները թաղածածկ են: Արևելյան մասում, ծածկի տակ, մեծ նավի և փոքր նավերի թաղերի արանքում ստացվող տարածության մեջ թողնված է թունելանման խորշ՝ մինչև գմբեթատակ քառակուսին ձգվող:

Մեծ թաղի եկեղեցու աղյուսե թմբուկը, որը դրսից ութանիստ է, իսկ ներսից գլանաձև, դրված է քարե օղակի վրա և ստացվում է գմբեթատակ քառակուսուց առագաստային անցման միջոցով: Գմբեթը ներսից սֆերիկ է, իսկ դրսից ունի բրգաձև, ութանիստ ծածկ: Գմբեթի կիսագնդի և վեղարի միջև եղած ծավալը սնամեջ է և դրսից կան անցքեր դեպի այս տարածությունը: Հավանաբար, բրգաձև ծածկի աղյուսե նիստերը կառուցված են կոշտության կողերի վրա: Եկեղեցու թմբուկի լուսամուտները ավելի խոշոր են, կիսաշրջանաձև կամարով և բացված են թմբուկի ներքևի մասում:

Այս հուշարձանում զգացվում է գմբեթի և բազիլիկի ուղղանկյուն ծավալի միասնական հորինվածք ստեղծելու ձգտումը, որի համար հյուսիսային և հարավային պատերի հարթություններում ստեղծված են ճակտոններ: Բայց ճակտոնները արևմտյան և արևելյան պատեր չունեն՝



ծածկից վերև չեն բարձրանում, ինչպես ընդունված է խաչաձև գմբեթավոր կառուցվածքներում:

Գմբեթը տեղադրված է ընդհանուր ծավալի համարյա մեջտեղում: Այս նպատակով բազիլիկի արևելյան կամարների թռիչքը զգալի փոքր է մյուս երկու ընդերկայնական կամարներից, որոնք իրար հավասար են:

Եթե համեմատենք գմբեթի և ամբողջ հուշարձանի բարձրությունների հարաբերությունը հայ ճարտարապետության գմբեթավոր բազիլիկների դասական ներկայացուցիչներից մեկի՝ Էջմիածնի Գայանե եկեղեցու համապատասխան հարաբերության հետ (Մեղրիում գմբեթը հարաբերում է ընդհանուր բարձրությանը ինչպես 1:2, իսկ Էջմիածնում՝ 1:2, 5), կտեսնենք, որ Մեղրու եկեղեցում հորինվածքի գերիշխողը գմբեթն է և ամբողջ կառուցվածքը ծառայում է պատվանդան գմբեթի համար:

Թվում է, որ իր բարձրությամբ դահլիճի բարձրությանը հավասար այս ծավալը պետք է ճնշող տպավորություն թողնի, մանավանդ գմբեթի տրամագիծը հարաբերում է շենքի լայնությանը, ինչպես 1:1, 8 (Գայանեինը՝ 1:2, 4): Բայց այս խոշոր ծավալը տեղում միանգամայն հակառակ ազդեցություն է թողնում դիտողի վրա՝ գմբեթը ոչ թե ճնշում է հուշարձանի հիմնական ծավալին, այլ պոկվում է նրանից, վեր է խոյանում: Այսպիսի տպավորությունն արդյունք է առաջին հերթին գմբեթի շինանյութին: Կոնստրուկտիվ և էկոնոմիկական խնդիրներից ելնելով թմբուկը և գմբեթը կառուցված են աղյուսից: Այս շինանյութը, թեթևացնելով կոնստրուկցիան, միաժամանակ խոշոր էսթետիկական նշանակություն ունի հուշարձանի ընդհանուր կերպարի գեղարվեստական մշակման գործում:

Աղյուսի բաց դեղնակարմրավուն գույնը հակադրության մեջ մտնելով հուշարձանի գորշակապտավուն բազալտից կառուցված ուղղանկյուն ծավալի հետ, ստեղծում է թեթևություն, կենսուրախության տպավորություն, թվում է, թե գմբեթը կախված է օդում: Թմբուկի թեթևացման, նրա ծավալին սլացիկ տեսք տալու համար նիստերը

մշակված են ուղղաձիգ համաչափություններով, իրար մեջ ներգծված որմնախորշերով: Իսկ նիստերն իրենց հերթին վերևում վերջանում են սրածայր ճակտոններով, որոնց գագաթներից սկսվում են գմբեթի բրգաձև սրածայր ծավալի կողերը:

Հուշարձանի հարավային կողմից ճակտոնի երկթեք ծածկի վրա կառուցված է փոքրիկ զանգակատուն: Սա քառանկյուն, աղյուսաշեն ռոտոնդա է, որը պսակված է քառանիստ վեղարով: Պետք է նշել, որ Մեղրու Մեծ թաղի եկեղեցին կառուցված է բնակավայրի բարձրադիր մասում՝ Մեղրու հյուսիսային ծայրում և հուշարձանն ավանից դիտվում է իր հարավային ճակատով: Այդ պատճառով էլ զանգակատունը կառուցված է հարավային կողմում, մի բան, որ համարյա չի հանդիպում նույն ժամանակաշրջանի հուշարձաններում (ընդհանրապես զանգակատները կառուցվում են եկեղեցիների արևմտյան մասում): Մեղրու եկեղեցու զանգակատան դեկորատիվ բնույթը հաստատում է նաև այն, որ զանգը կախվել է գմբեթից, որի համար թմբուկի վերևում թողնված են փայտե հեծաններ:

Տվյալ դեպքում զանգակատունը միջանկյալ ծավալի դեր է խաղում, ստեղծում է աստիճանական անցում բազիլիկի ուղղանկյուն ծավալից դեպի թմբուկի ուղղաձիգ ծավալը, վերջինիս համար միաժամանակ ծառայելով որպես մասշտաբ:

Եկեղեցու բազալտե պատերը հիմնականում հարդարանքից զուրկ են: Միակ դեկորատիվ տարրը խոյի գլուխն է, որը հագցված է հարավային ճակատի պատում՝ արևմտյան լուսամուտի մոտ: Պատերը գորշակապտավուն են, հարթությունները աշխուժացված են լուսամուտների բացվածքները շրջապատող քարերի գույնով՝ բացվածքն ունի դեղնավուն ավազաքարից «շրջանակ»՝ երկու քար կողքերում, մեկը ներքևում, իսկ վերևինի՝ բարավորի քարի մեջ փորված է լուսամուտի կամարը: Մուտքերի մշակումը համեստ է, առանց դեկորի, այս դարի հուշարձանների համար «տիպային» սխեմայով՝ ուղղանկյուն բացվածք ներգծված կամարակապ խորշերի մեջ:

Հիմնական մոտեցումը արևմուտքից է, որտեղ պահպանվել են գավթի մնացորդներ: Հարավից եկեղեցու հատակը, տեղանքի խիստ թեքության պատճառով, գետնից 2, 5 մ բարձր է: Բայց այս կողմում հուշարձանին կից կառուցված են նկուղային սենյակներ, որոնց կտուրը եկեղեցու համար ծառայում է որպես բակ: Սա հնարավորություն է տվել հուշարձանի երկրորդ մուտքը բացել հարավային պատում: Այս մուտքի ֆունկցիոնալ խիստ անհրաժեշտություն չկար, բայց, որովհետև բնակավայրի նկատմամբ ունեցած դիրքի պատճառով հարավային ճակատը դարձել էր գլխավոր, ապա կոնստրուկտիվ-շինարարական այս լրացուցիչ միջոցներով հարավային կողմում նույնպես մուտք են բացել:

Եկեղեցին ներսից սվաղված է: Բեմի պատը, մույթերը, ավանդատները զարդարված են 19-րդ դարի որմնանկարներով: Դրանք հայ կերպարվեստի այդ ժամանակաշրջանի լավագույն ստեղծագործություններից են և աչքի են ընկում կատարման բարձր վարպետությամբ:

Ավելի վաղ շրջանի և բավական արժեքավոր որմնանկարներ կան Մեղրու Փոքր թաղի եկեղեցում: Այն կառուցված է 17-րդ դարում և պատկանում է այդ ժամանակաշրջանում ողջ Հայաստանում տարածված եռանավ բազիլիկների տիպին: Ուղղանկյուն դահլիճը երկու զույգ T-աձև մույթերով բաժանվում է երեք նավի: Կիսաշրջանաձև խորանի երկու կողմում երկհարկանի թաղածածկ ավանդատներն են, որոնց երկրորդ հարկը կարելի է բարձրանալ խորանի պատերի որմնանկարների միջով: Տանիքի վրա, շենքի կենտրոնում տրված է զանգակատան աղյուսե 6 սյունանի ռոտոնդան, որը որոշ չափով աշխուժացնում է կիսամշակ բազալտից կառուցված եկեղեցու հակիրճ ծավալային հորինվածքը: Որմնանկարները, որ նույնպես պատկանում են 17-րդ դարին, ցավոք, վատ են պահպանվել՝ դրանց վնասել են թե՛ անձրևները, թե՛ մարդիկ: Այժմ շտապ պետք է միջոցներ ձեռնարկել հայ կերպարվեստի այդ հետաքրքրական ստեղծագործությունները փրկելու և նորոգելու համար:



Երկու զույգ T-աձև մույթով եռանավ բազիլիկներ են նաև Լիճքի սբ Կարապետ ու Մալևի Ամենափրկիչ անապատ եկեղեցիները:

Մեղրու շրջանում 17-րդ դարում կիրառվել է պաշտամունքային կառուցվածքների մի հետաքրքրական ենթատիպ՝ որմնախորշերով թաղածածկ դահլիճի հորինվածք, որը այդ ժամանակաշրջանում ողջ Հայաստանում հանդիպում է միայն Մեղրիում: Այդ տիպի լավագույն օրինակներ են Վահրավարի Կարմրավանքը և Լիճքի Զվարավանքը:

Լիճքի Զվարավանքը թաղածածկ ուղղանկյուն դահլիճ է, երկթեք ծածկով և արևելյան մասում խորանի երկու կողմում զույգ ավանդատներով: Ինտերիերում աղոթասրահի երկայնական պատերից դուրս են գալիս երկու զույգ հզոր մույթեր, որոնց միջև և դեպի եկեղեցու արևմտյան պատը ու բեմը գցված են կամարներ: Սրանք ավելի շուտ թաղեր են հանդիսանում շնորհիվ իրենց զգալի լայնության՝ 1, 50 մ: Մույթերի միջև՝ եկեղեցու երկայնական առանցքին ուղղահայաց ընկած են զույգ թաղակիր կամարներ, որոնք ձուլվում են մույթերին աղոթասրահի կողմից կից որմնասյուներին: Մույթերը և թաղակիր կամարները հուշարձանի ինտերիերը բաժանում են երեք մասի, որոնցից երկուսը հավասար են միմյանց, իսկ երրորդը՝ արևելյանը, կարճ է: Մույթերի միջև երկայնական պատերին կից ստացվում են թաղածածկ

խորշեր, որոնք զգալի մեծացնում են աղոթասրահի ինտերիերը՝ խորշի գագաթը գտնվում է 3, 70 մ բարձրության վրա:

Կարմրավանքի եկեղեցին ավելի փոքր է (9, 45X14, 50): Աբսիդի երկու կողմում գտնվող ավանդատները լայնացված են ի հաշիվ եկեղեցու հյուսիսային և հարավային պատերի: Միակ դուռը հարավարևմտյան անկյունում է՝ հարավային պատի մեջ բացված: Լուսամուտները (աղոթասրահում թվով չորսը) երկայնական պատերի մեջ են: Ի տարբերություն համանման մյուս հուշարձանների, արևմտյան ճակատում լուսամուտ չկա՝ թեքադիր տեղանքի պատճառով արևմտյան պատը լրիվ թաղված է հողի մեջ:

Ինտերիերում, դահլիճի հյուսիսային և հարավային պատերում, հատակից մոտ 4 մ բարձր պահպանվել են թաղի կառուցման համար օգտագործված փայտե տախտակամածի գերանների բները՝ 20X15 սմ չափի անցքեր: Պատերի շարվածքի տեխնիկան, քարի մշակումը, կոնստրուկցիաները նույնն են, ինչ և Զվարավանքում:

Սյունիքի 17-րդ դարի հուշարձաններին հատուկ է թաքստոցի իրականացումը տանիքի տակ՝ թաղի և կտուրի միջև: Բայց այս տիպի թաքստոցներ կառուցվել են միայն բազիլիկներում: Որմնամույթերով դահլիճում հանդիպում ենք թաքստոցի մեկ դեպքի՝ Կարմրավանքում, որը, սակայն, իրականացված է բեմի հատակի տակ: Այստեղ, ամբողջ մակերեսով կա մի թաղածածկ տարածություն, որը հատակագծում կրկնում է բեմի կոնֆիգուրացիան: Մուտքը բեմի աստիճանների տակից է և դրսից կարող է փակվել ու քողարկվել մեկ ամբողջական քարով: Աբսիդի արևմտյան կողմում թողնված է օդափոխության անցք, որը վերևում դուրս է գալիս բեմի հատակի երեսը և միանգամայն աննկատ է:

Կարմրավանքի ու Զվարավանքի ճարտարապետական հորինվածք ունեն Մեղրու շրջանի մի շարք գյուղերի ու գյուղատեղիների եկեղեցիները, որոնք միմյանցից տարբերվում են միայն չափերով: Ագարակի Ակնախաչ, Թխկուտի, Գուդեմնիսի Աստվածածին եկեղեցիները ունեն միայն մեկ զույգ որմնամույթ, իսկ Կալերի, Կուրիսի, Ափկեսի, Ագարակի Ամենափրկիչ վանքի, Վերին Մալևի, Թոսի եկեղեցիները՝ երկու զույգ որմնամույթ:

Մեղրու շրջանի որմնամույթերով դահլիճները կառուցված են պարզ, անպաճույճ, համարյա առանց որևէ դեկորատիվ հարդարանքի: Միջոցների սղությունը ստիպել է կառուցողներին ուշադրություն դարձնել միայն շինության ուտիլիտար, ֆունկցիոնալ կողմի վրա:

Եկեղեցիներն արտաքինից ուղղանկյուն ծավալ են ներկայացնում՝ երկթեք ծածկով կառուցված անմշակ բազալտից: Պատերի հարթությունների միապաղաղ ֆոնը խախտվում է միայն նեղ լուսամուտների ճեղքերով: Մուտքերը զուրկ են դեկորատիվ միջոցներից և կառուցվում են մաքուր տաշած քարերից: Համեմատաբար խոր արտաքին որմնակամարը ստեղծում է լույս ու ստվերի խաղ և դրանով միայն ընդգծում կառուցվածքի մուտքը: Միակ դեկորատիվ էլեմենտները քարե խոյի գլուխներն են, որոնք հագցվում են կառուցվածքների արևմտյան ճակատում (Մեղրի, Վահրավար, Տաշտոն):

Որմնամույթերով դահլիճներն իրենց չափերով չեն զիջում, նույնիսկ որոշ դեպքերում գերազանցում են 17-րդ դարի Սյունիքի եռանավ բազիլիկներին: Օրինակ, Զվարավանքի, Ագարակի եկեղեցիների ներսի լայնությունը (համապատասխանաբար 8, 60 և 8, 75 մ) հավասար է Մեղրու Փոքր թաղի և Մալևի անապատի եռանավ բազիլիկների լայնությանը, իսկ Մեղրու և Տաշտոնի գմբեթավոր բազիլիկներից մեծ են թե՛ լայնությամբ և թե՛ երկարությամբ: Համեմատական վերլուծության համար հարմար է վերցնել Ագարակի և Մալևի եկեղեցիները, որովհետև այս երկուսի դահլիճի ներսի չափերը համարյա համընկնում են: Սա խոսում է այն մասին, որ նույն չափի տարածությունը եթե եռանավ բազիլիկի դեպքում ծածկվում է առանձին կանգնած մույթերի և երեք թաղի օգնությամբ, ապա որմնամույթերով դահլիճների դեպքում՝ միայն որմնամույթերի ու միաթռիչք թաղի միջոցով: Երկրորդ դեպքում մենք ունենք ճարտարապետական-կոնստրուկտիվ ավելի հաջող լուծում: Սեյսմակայունության տեսակետից էլ այս տիպն ունի մեծ առավելություն, որովհետև բացակայում են սեյսմիկ տեսակետից ամենաթույլ հանգույցները՝ առանձին կանգնած հենակետերը: Իսկ որմնամույթերն իրենց հերթին ընդերկայնական հյուսիսային և հարավային համեմատաբար թույլ պատերին տալիս են լրացուցիչ կոշտություն և միաժամանակ զգալի բեռնաթափում են վերջիններին, որովհետև գլխավոր թաղի ծանրությունը և թաղի հրող ուժը միջմույթային թաղերի միջոցով հիմնականում հանձնվում են որմնամույթերին: Այս հանգամանքը թույլ է տալիս արտաքին պատերն իրականացնել ավելի բարակ, քան եռանավ բազիլիկներում:

Համեմատությունը ցույց է տալիս, որ նույն չափերն ունեցող երկու տարբեր տիպի հուշարձաններում՝ եռանավ բազիլիկում և որմնամույթերով դահլիճում, երկրորդի դեպքում՝ պատերի շարվածքը ստացվում է 15 տոկոսով պակաս: Շարվածքի 1/6-ի չափով տնտեսումը և պատերի կոնստրուկցիայի համապատասխան թեթևացումը զգալի առավելություն են կոնստրուկտիվ և էկոնոմիկական տեսակետից:

Ուտիլիտար-ֆունկցիոնալ տեսակետից նույնպես որմնամույթերով դահլիճի հորինվածքը գերադասելի է: Օրինակ՝ Ագարակի եկեղեցու ներքին մակերեսի՝ 106 մ-ից լիարժեք է (այն մակերեսը, որից երևում է բեմի սեղանը) 74.0 մ^2, այսինքն՝ շուրջ 70 տոկոսը, իսկ Մալևի եռանավ բազիլիկի 110 մ^2-ից՝ միայն 58 մ^2, շուրջ 53 տոկոսը:

Ճարտարապետական-գեղարվեստական տեսակետից մեկ միասնական ներքին տարածությունը, հարստացված որմնամույթերով ու որմնախորշերով, ավելի արտահայտիչ է և ազդեցիկ, քան երկու շարք մույթերով ջլատված եռանավ բազիլիկների ինտերիերը:

Այսպիսով, 17-րդ դարում հարավային Սյունիքում վերցնելով գմբեթավոր սրահի հորինվածքը (հատակագծային լուծումը լրիվ, իսկ ծավալայինը մասամբ առանց գմբեթի), ստացան թաղածածկ դահլիճի մի նոր ենթատիպ՝ որմնամույթերով դահլիճ: Եվ պաշտամունքային կառուցվածքներ այս հորինվածքով հանդիպում են Սովետական Հայաստանի տերիտորիայում միայն Սյունիքում, իսկ իր ավարտուն ձևով՝ Մեղրու շրջանում:

Եվս մի քանի դրվագ Մեղրու հոգևոր-մշակութային կյանքից

ՍԵՐԳԵՅ ՋՀԱՆԳԻՐՅԱՆ

Ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում շատ քչերն են առանձին ուսումնասիրությամբ անդրադարձել Արևիք-Մեղրիի պատմությանը, ճարտարապետությանը, ձեռագիր արվեստին: Պատմագրությունը շատ ժլատ է փոքրիկ, սակայն մեր օրերում մեծ կարևորություն ստացած այս գավառի նկատմամբ: Սյունյաց աշխարհի այս անկյունն ամենամեկուսացվածն ու ուրույնն է: Այն պարփակված է Մեղրու բարձրադիր լեռնաշղթայով, որը որպես պատնեշ, կարծես, գավառն առանձնացնում է Սյունիքի մյուս գավառներից: Որպես աշխարհագրական այդ պարփակվածության արդյունք, ողջ միջնադարում Մեղրիի ցածրադիր բնակավայրերի սոցիալ-տնտեսական և մշակութային կապերն առավելապես սերտաճել ու զուգորդվել են Գողթան գավառի (կամ՝ Օրդվար-Ջուղա-Ագուլիս կենտրոնների) հետ, իսկ բարձր լեռնային Տաշտուն, Լիճք, Զվար, Վանք, Կալեր, Մանլև, Ափկես, Գոմերանց գյուղերինը՝ Կովսական-Չավնդուրի: Եվ չնայած դրան՝ գավառի հոգևոր կյանքն ընթացել ու զարգացել է որպես Սյունիքի և ողջ Հայաստանի թեմական-եկեղեցական կյանքի անքակտելի մի մաս:

Պատմիչ *Ստեփանոս Օրբելյանի*՝ Սյունյաց թեմում աթոռակալելու ժամանակ հոգևոր կյանքը բուռն վերելք ապրեց Մեղրիում. ակտիվ գործունեություն սկսեցին իրականացնել Մեղրու Սուրբ Հովհաննես վանքը, Մանլևի կույսերի Ամենափրկիչ անապատը, Կարճևանի Սուրբ ուխտը, Լուսկեվանքը, Լիեվանքը, ձևավորվել է ամուր կղերաֆեոդալական խավ: Համաձայն պատմիչի հաղորդած տեղեկությունների՝ **Մեղրիից է սերվել XII-XIII դդ. Սյունիքի ամենանշանավոր հոգևորական գերդաստաններից մեկը, որն այդ ժամանակաշրջանում տվել է առնվազն հինգ թեմի առաջնորդ՝ Բարսեղ եպիսկոպոսը, Գրիգոր Ե եպիսկոպոս Մեղրեցին (1148-1168 թթ.), Ստեփանոս Գ եպիսկոպոսը (1168-1216 թթ.), Սարգիս եպիսկոպոսը և Հովհաննես եպիսկոպոսը:** *Գրիգոր Մեղրեցին*, ով հաջորդել է իր եղբորը՝ Բարսեղ եպիսկոպոսին, և իր որդին՝ Ստեփանոս Գ եպիսկոպոսն աթոռակալել են Ամաղուի Նորավանքում և մահանալուց հետո ամփոփվել են այնտեղ՝ Տեր Հովհաննես Կապանեցի եպիսկոպոսի կողքին: *Ստեփանոս Գ եպիսկոպոսը* սիրված էր և հաճախակի ընդունվում էր Ատրպատականի Ելտկուզ աթաբեկի և իր որդիների դռանը, իսկ հետագայում՝ նաև Իվանե աթաբեկի կողմից: Ստեփանոսին հաջորդող քրոջ որդին՝ Տեր Սարգիսը և հորեղբոր որդին՝ Տեր Հովհաննեսը միմյանց միջև կիսում են Սյունյաց թեմը. Վայոց Ձորը Նորավանքով վերցնում է Սարգիս եպիսկոպոսը, Տաթևը՝ Հովհաննես եպիսկոպոսը: Սրանց հետագա սերունդների մեջ նույնպես քիչ չէին բարձրաստիճան հոգևորականները թե՛ Նորավանքում, թե՛ Տաթևում:

Հոգևոր կյանքի հաջորդ բուռն վերելքի ժամանակաշրջանը Մեղրիում կարելի է համարել XVII-XVIII դդ.՝ Մովսես Խոտանանցի (կամ՝ Տաթևացի) կաթողիկոսի աթոռակալման տարիներից սկսած և հետագա տասնամյակները: Հիմնականում հենց այդ ժամանակաշրջանին է պատկանում Մեղրու շրջանի հոգևոր կառույցների մի զգալի մասի շինարարությունը կամ վերաշինությունը, հոգևոր կյանքի զարթոնքը, ձեռագիր արվեստի վերելքը, ինչպես նաև մետաքսի առևտրի զարգացումը և հարուստ առևտրական-խոջայական խավի ձևավորումը:

Մովսես Խոտանանցու աշակերտների մեջ քիչ չէին ծագումով մեղրեցիները: Հատկապես հիշատակության են արժանի Իսրայել վարդապետ Մեղրեցին, *Եսայի վարդապետ Կարճևանցին*: Վերջինս Երնջակի կամ Ապրակունիսի նշանավոր Սուրբ Կարապետ վանքի առաջնորդն էր: Եսայի Կարճևանցու անմիջական ջանքերով XVII դարի կեսերին այդ համալիրն ամբողջությամբ հիմնանորոգվեց՝ «*ի գեղջէն Կարճաւան կոչեցեալ, առաջնորդ Երնջակայ Սուրբ Կարապետին, որ և սա բազում աշխատութեամբ և անհանգիստ տքնութեամբ ի հիմանց ի վեր նոր իմն սքանչելատեսութեամբ շինեաց զեկեղեցի Սրբոյ Կարապետին պարսպաւն ամենայնիւ, կոփածոյ վիմօք և ձուլածոյ կրով՝ ի փառս փրկչին մերոյ և Աստուծոյ*»[1]:

Այս Եսայիի (հետագայում եպիսկոպոս) եղբայրը՝ *Օհան (Յօհան) Կարճևանցին*, ակտիվորեն զբաղվում էր գրչության հովհանավորությամբ և մի շարք ձեռագրերում թողել է հիշատակարաններ կամ հիշատակվել է որպես հովանավոր-պատվիրատու՝ «*Արդ՝ ես Յոհան զառածեալ մեղօք, անպիտան ի գործ պաշտաման բանին քարոզութեան, եղբայր ըստ մարմնոյ տեառն Եսայեայ շինողի Սրբոյ Կարապետին Ապրակունեաց, բայց քեցեալ և տարակացեալ ի գործոց արիութեանց և քաջաորդութեանց, սորին գաւառաւ Մեղրոյ և գեղջաւ Կառճաւանցի, լսէի միշտ ի գիրս ամենայն պատմագրութեանց Հայոց յաղագս Յովսէփոսի. և տեսանէի զվկայութիւնսն առ ի նմանէ. և ցանկայի բազում տարփանօք և ոչ երբէք տեսանէի ի մէջ ազգիս մերոյ: ... Եւ զսա որ իւրով ձեռամբ է գրեալ, առեալ վասն իմ՝ պահեցի. զի եղիցի սա յիշատակ յաւիտենական նորին և ծնողացն բարեպաշտից և ինձ եղկելի բանասիրիս Կարճաւանցւոյ ...*»[2]: Նույն Օհան վարդապետը 1675 թվին հանդիսացել է Մատենադարանի թիվ 199 (1271 թ.), թիվ 282 (1311 թ.) ձեռագրերի վերանորոգության պատվիրատուն, թիվ 1714 ժողովածուի ստացողը՝ «*...Յոհանս բանի սպասաւոր, տեղեաւ Կարճաւանցի, որ ի յԱրեւիք գաւառի, որ այժմս Մեղրի ասի...*», Հովհաննավանքում 1631 թվին գրված ժողովածուի (թիվ 2381) ստացողը[3]: Նշված ժամանակաշրջանում հոգևոր դասի մի ամբողջ սերունդ է սերվել Կարճ-

Եանի սուրբ ուխտից: Երևանի Սուրբ Անանիա վանքում XVII դարի 20-ականներին գործել ու վարդապետի մեծ հռչակ է վայելել Կարճևանցի որաբուն Մովսեսը:

Արևիքի հոգևոր կյանքի կենտրոններից էր նաև *Մանլևի* (կամ՝ Մալևի) Ամենափրկիչ կուսանաց անապատը, որը կրթության և գրչության կենտրոնի համբավ էր վայելում: Այստեղ է իր նախնական կրթությունը ստացել 1763 թվին Սիմեոն Ջուղայեցու «Մեկնութիւն Պրոկղի» ձեռագրի գրիչ Մինաս աբեղա Մալևեցին: Նույն այս կրթարանից է իր աստվածաբանական աշխատանքը սկսել Գևորգ վարդապետը, ում ծագման մասին հիշատակվում է «*Ղափանցի՝ ի գեղջէն Մալեւեցոյ*» և ով իր հետագա գործունեությունը ծավալել է Լոռվա նշանավոր Պղնձահանքում:

Վերջապես՝ Մեղրին նաև պատրիարք է տվել. խոսքը Կոստանդնուպոլսի 1670-1674 թթ. հայոց պատրիարք *Ստեփանոս Մեղրեցու* մասին է, ով Հակոբ Ջուղայեցու հետ մեկտեղ համարվում էր իր ժամանակների Հայ առաքելական եկեղեցու ամենաազդեցիկ ու նշանավոր ներկայացուցիչներից մեկը:

Այդուհանդերձ Մեղրուց ծագած հոգևոր մշակութային գործիչներից ամենանշանավոր անունը կարելի է համարել *Երեմիա Մեղրեցի* վարդապետին՝ հայ միջնադարյան բառարանագիտության ամենանշանավոր գործչին:

Երեմիա Մեղրեցին XVII դարի հայ մատենագրության մեջ հայտնի է որպես բառարանագիր և հրատարակիչ: Նրա կյանքի ու գործունեության մասին տեղեկությունները սուղ են, հայտնի չեն ծննդյան ու մահվան տարեթվերը: Երեմիա Մեղրեցին հավանաբար ծնվել է XVII դարի առաջին քառորդում: Նա ծնվել, մանկությունն անց է կացրել և նախնական կրթությունը ստացել Մեղրիում, որտեղից էլ՝ նրա Մեղրեցի անունը: Թե որքան ժամանակ է ապրել ծննդավայրում և հետագայում ինչպես կապվել Էջմիածնի հետ ու վարդապետ դարձել՝ դեռևս պարզված չէ: Բանասիրական ճանապարհով պարզվել է, որ Աստվածաշնչի բառարանը կամ որ ինքն է կոչել՝ «Համառօտ գումարումն և լուծումն բառից», որը Երեմիա Մեղրեցու գրչին պատկանող հիմնական երկն է՝ գրվել է XVII դարի 60-ական թվականներին: Այդ ժամանակներից էլ Երեմիան եղել է Էջմիածնում, որտեղ ծավալել է իր գիտական-հրատարակչական աշխատանքը մոտակա առնվազն չորս տասնամյակներում: Նա կենդանի է եղել մինչև XVII դարի վերջը: 1698 թվին, որպես հրատարակիչ, լույս է ընծայել «Աղուէսագիրք»-ը և «Բառգիրք Հայոց» բառարանը: Երեմիա Մեղրեցու «Համառօտ գումարումն և լուծումն բառից» կամ Աստվածաշնչի բառարանը՝ XVII դարի հայ բառարանագրության նվաճումն է՝ թե՛ բովանդակության ու բառարանագրական տեխնիկայի տեսակետից, թե՛ հայ մտավորականության առօրյա գործունեության բնագավառում ունեցած իր նշանակությամբ: Այդ երկը մոտ մեկ դար՝ մինչև Մխիթար Աբբայի բառարանը, եղել է սուրբ գրքեր նաև այլ գրքեր ընթերցողների համար միակ բառարանը, լայնորեն տարածված լինելով Հայաստանում և արտասահմանի հայաբնակ վայրերում: Վերջապես Երեմիա Մեղրեցու բառարանը կարևոր աղբյուր դարձավ հայերեն մյուս ընդարձակ «Բառգիրք Հայոց» կոչվող բառարանի համար: Մատենադարանում պահպանվում են Երեմիա Մեղրեցու հրատարակած և հեղինակած բառգրքերի բազմաթիվ արտագրություններ:

Եվ, անկասկած, Մեղրիից սերված միջնադարյան հոգևոր-մշակութային գործիչների թվարկումը թերի կլիներ առանց XVII դարի անվանի տաղասացներից մեկի՝ *Մխիթար Մեղրեցու* անվան: Ցավոք, Մխիթարի կյանքից տեղեկություններ չեն պահպանվել: Հայտնի է, որ նա Էջմիածնում ձեռնադրվել է ավագ սարկավագ: Նրա տաղերը ներառվել են 1647 թվին Նոր Ջուղայում խոջա Գասպարի կողմից պատվիրված և գրիչ Մարգար դպիրի կողմից կերտված տաղարանում այնպիսի նշանավոր հեղինակների հետ մեկտեղ, ինչպիսիք են Առաքել Բաղիշեցին, Առաքել Սյունեցին, Առաքել Դավրիժեցին, Մկրտիչ Նաղարշը, Հովհաննես Պլուզը, Հովհաննես Թլկուրանցին, Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Ախթամարցին, Գրիգոր Պահլավունին, Ներսես Շնորհալին: Մխիթարի տաղերը մենք հանդիպում ենք նաև ԺԷ, ԺԸ դարերին թվագրվող Ստեփանոս Համադանցի գրչի կողմից կազմված մեկ այլ տաղարանում:

Նախքան Մեղրիի գրչությանն անցնելը՝ մի փոքր շեղվենք հոգևոր կյանքից դեպի տնտեսական կյանք, քանի որ ձեռագիր արվեստն էապես կրել է նաև առևտրատնտեսական բաղադրիչի ազդեցությունը: Հոգևոր կյանքից բացի XVII դարը Մեղրիում բնորոշվեց *մետաքսագործության և առևտրի* բուռն զարգացումով: Այս գավառում հնուց ի վեր պտղաբուծությունից ու գինեգործությունից զատ ակտիվորեն զբաղվել են շերամապահությամբ, ինչպես հարևան Ղարադաղի Արաքսպար գավառակում: 1962 թվին Ագարակում, Արաքսամերձ ժայռերից մեկի վրա Ս. Խանզադյանը կարդացել է հետևյալ վիմագիրը. «*Թվ ՈՂ (1241) ես Ամիր Սարգիս ՉԵ բեռ (600) ապրեշում (մետաքս) տարի գետովս*»[4]: Որպեսզի հասկանանք, թե դա ինչ քանակ է, համեմատության համար ասենք, որ XVII դարում Պարսկաստանը տարեկան մոտ 22000 բեռ մետաքս էր արտադրում[5]: Իրանի հյուսիսային շրջանների հայաբնակ քաղաքները՝ Ջուղան, Վանանդը, Բիստը, Ագուլիսը Նախիջևանը, Օրդուբադը, Մեղրին վաղ ժամանակներից հայտնի էին որպես առևտրական-քարավանային ճանապարհների հանգուցակետեր, որոնք կարևոր դեր էին խաղում Իրանի, Կովկասի, Միջին Ասիայի, Մերձավոր Արևելքի միջև կատարվող առևտրում, որի հիմնական վերջնակետը՝ Եվրոպայի առևտրային դարպասների վերածված Զմյուռնիայի (Իզմիրի) նավահանգիստն էր[6]: Պատահական չէ, որ Կապանի և Մեղրիի շատ առևտրականներ (և ոչ միայն, նաև՝ բեռնակրությամբ, զանազան արհեստներով գումար վաստակող հասարակ գյուղացիներ) հայտնվում էին Զմյուռնիայում. տարածաշրջանը գտնվում էր Թավրիզ-Երևան-Էրզրում-Թոխաթ-Զմյուռնիա՝ այդ ժամանակներում ամենաբանուկ առևտրային, քարավանային ճանապարհի վրա, որտեղ, վերջիվերջո, հասցվում էր արտադրված մետաքսը: Առևտրականներն անցնում էին Մեղրիով նաև Թավրիզից Շամախի ու Գանձակ մեկնելու համար: Փաստացի այս աշխուժությունը պայմանավորված էր այն ժամանակներում 500 հազար բնակչություն ունեցող առևտրային խոշոր Թավրիզի հարևանությամբ: Զմյուռնիան այդ ժամանակվա մերձավորարևելյան կամ լևանտյան առևտրի գլխավոր կայանն էր թե՛ ծովային, թե՛ ցամաքային առևտրի համար, իսկ մետաքսը՝ գլխավոր ապրանքը, որի առևտրի մի զգալի մասը կենտրոնացած էր հայերի ձեռքում: Զմյուռնիայի և շրջակայքի հայաշատ քաղաքների արձանագիր տապանաքարերն ամենաշատը մեղրեցիների անունով են: Ըստ XIX դարի վերջին իրականացրած մի ուսումնասիրության՝ Թուրքիայի արևմտյան՝ Ադրիատիկ ծովեզերքի հայությունը հիմնականում Սյունիք-ատրպատականյան ծագում ուներ: XIX դարի վերջում, Զմյուռնիայի և շրջակա քաղաքների արդեն մեծամասամբ ավերված ու անհետացած հայկական գերեզմաններից հաշվառել և գրանցել է մեղրեցիների 46 արձանագիր տապանաքար, որոնցից 12-ը՝ կալերցու, 7-ը՝ շվանիձորցու, 6-ը՝ մանլևեցու, 5-ը՝ քուջերդեցու, 3-ական՝ վանքեցու, կառավնեցու, ափկեսեցու, 2-ական՝ տաշտունեցու, գոմերանցցու, մեկական՝ լիճքեցու, կարբաթաղեցու, սևդարեցու: Դրանց մեծ մասը գտնվում է Զմյուռնիայի մեր-

ձակա Օթեմիշ, Նազիլի քաղաքներում:

Ինչպես արդեն նշել ենք, առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումն իր ազդեցությունն է ունեցել արվեստի այնպիսի ուղղության վրա, ինչպիսին *գրչությունն է*: Առանց մետաքսագործության զարգացման և առևտրի արդյունքում ձևավորված բարեկեցիկ խոջայական խավի չէր լինի **Քուջերդի ավետարանի բարձրաքանդակ արծաթյա կազմը, Վահրավարի ավետարանի մետաքսյա ներքնաշապիկը (որը, ըստ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի՝ Մեղրիում արտադրված մետաքսից է):** Ձեռագրերը, որպես առևտրի առարկա, բավական մեծ արժեք են ունեցել, հատկապես բարձրարվեստ մանրանկարներով նմուշները և առանց հարուստ խոջայական հովանավորչության Մեղրիի տարածաշրջանի վանքերում չէին հայտնվի հայկական ձեռագիր արվեստի առանձին գլուխգործոցներ: Վստահաբար՝ մեծ վճար էր անհրաժեշտ, որպեսզի ձեռք բերվեր և **Կալեր տեղափոխվեր XIV դարում՝ ենթադրաբար Գլաձորում կերտված ու մեծահռչակ Թորոս Տարոնացու կողմից ծաղկված ավետարանը,** որը 1493 թվին Կալերում ենթարկվել է վերանորոգության: Այն, անկասկած, կարելի է դասել հայկական ձեռագիր արվեստի լավագույն օրինակների շարքին: Մինչև 1930-ական թվականների սկիզբը **Մանլևի եկեղեցում էր պահպանվում Գլաձորում 1313 թվին արտագրված մի ավետարան, որի ծաղկողը մեծանուն մանրանկարիչ, ճարտարապետ և** քանդակագործ Մոմիկն էր: Այն 1930-ականների սկզբին ձեռք է բերվել Պատմության թանգարանի արշավախմբի կողմից և տեղափոխվել թանգարան: Նույն արշավախմբի կողմից **Շվանիձորի Սուրբ Աստվածածին եկեղեցուց գնվել է և թանգարան տեղափոխվել Եղեգիսում 1297 թվին արտագրված մի ավետարան, որը 1378 թվին նկարազարդվել է Հայ առաքելական եկեղեցու սրբերի շարքը դասված Գրիգոր Տաթևացու կողմից:** Գրիգոր Տաթևացի ծաղկողի նկարչական վարպետությունը, հարուստ գունապնակն ու ոսկու առատ կիրառությունն այս ավետարանը կարգել են ոչ միայն Սյունիքի, այլև ողջ հայկական միջնադարյան մանրանկարչության լավագույն օրինակների շարքը, իսկ արծաթյա քանդակներով ու նախշերով զարդարված կազմը կարելի է հայկական գրքակազմության ամենաշքեղ օրինակներից համարել: Մանրանկարներում գերիշխող կարմիր գույնի համար՝ հոգևոր և գիտական շրջանակներում այս մատյանը ստացել է **«Շվանիձորի կարմիր ավետարան» անվանումը:**

Մաշտոցի անվան Մատենադարանում և աշխարհի տարբեր գրապահոցներում պահվող Մեղրիի ձեռագրերի և դրանց բնութագրերի վերաբերյալ ոչ մի ուսումնասիրություն մեզ ծանոթ չէ: Մեր օրեր են հասել Մեղրու տարածաշրջանի վանքերում և եկեղեցիներում միջին դարերում կերտված մեկ տասնյակից ավել ձեռագիր մատյաններ՝ որոնց մեծ մասը՝ Տաշտունի և Մեղրիի վանքերում: Ձեռագրերի այս սակավ թիվը վկայում է ոչ թե Արևիքի վանական հաստատություններում գրչության քիչ զարգացվածության մասին, այլ՝ գավառին բաժին հասած ասպատակությունների, թալանի և ավերածությունների, որոնք կրկնվում էին ողջ միջնադարում: Մեղրիի Սուրբ Հովհաննես վանքի՝ կամ Անապաստանաց վանքի 2016 և 2018 թթ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից իրականացված պեղումների ժամանակ բացված գաղտնարանից հայտնաբերվել են XV-XVI դդ. թվագրվող ձեռագիր պատառիկներ, որոնք ժամանակին ամփոփվել էին վանքի գաղտնարանում՝ հնարավոր ոչնչացումից կամ թալանից փրկելու համար:

Մեր օրեր հասած Մեղրիի ձեռագրերը հիմնականում ավետարաններ են, սակայն կան նաև ժողովածուներ, հայսմավուրք, Մաշտոց, ճաշոց: Դրանց մեծ մասը Մաշտոցի անվան Մատենադարանում են, սակայն կան նաև արտասահմանյան հավաքածուներում: Ի տարբերություն Կալերի, Մանլևի և Շվանիձորի եկեղեցիներում ժամանակին պահվող վերոնշյալ բարձրարվեստ ձեռագրերի, սրանց մեջ առկա չեն այսպես կոչվող ակադեմիական մակարդակի մանրանկարչությամբ ձեռագրեր: Դրանք բոլորը կարելի է բնորոշել որպես ժողովրդական ձեռագիր արվեստի նմուշներ, սակայն դա ամենևին չի նսեմացնում դրանց դերն ու առաքելությունը, այն է՝ Մեղրիի գյուղացիությանը դասական հայոց լեզվով հասու դարձնել քրիստոնեական ուսմունքը: **Մեղրու ձեռագրերից իր բարձրարվեստ արծաթյա կազմով կարելի է առանձնացնել 1678 թվին Քուջերդում կազմված ավետարանը, իսկ ավետարանիչների և խորանների մանրանկարներով՝ Վահրավարի (1322 թ.), Տաշտունի (1661 թ.), Վանքի (1678 թ.) և արդեն հիշատակված Քուջերդի ձեռագրերը: Նկարչական վարպետությամբ մեր ուշադրությունը հատկապես գրավել է Մանլևի (1664 թ.) ճաշոցի և Տաշտունի (1665թ.) ավետարանի լուսանցազարդերը:** Մեղրիի ձեռագրերից միայն չորսն է, որ Մատենադարանը կամ Պատմության թանգարանը ձեռք են բերել Մեղրիից: Մնացած ձեռագրերը որոշակի ճանապարհ են անցել: Այսպես՝ Վահրավարի ավետարանը Մատենադարանի կողմից ձեռք է բերվել Նոր Բայազետից, Մեղրիի 1505 թվականով թվագրվող ժողովածուն՝ 1848 թվին իրանական Ջուղայի մոտի Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքից, Տաշտունի 1665 թվի ավետարանը 1911 թվին բերվել է Թադևոս առաքյալի վանքից, Վանք գյուղի ավետարանը մինչև 1893 թիվը պահվում էր Երնջակի (Ապրակունիսի) Սուրբ Կարապետ վանքում, իսկ Տաշտունի 1687 թվի ավետարանը գնվել է Նոր Նախիջևանից:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում և պատմագիտական ուսումնասիրության մի առանձին ասպարեզ է ձեռագրերի *հիշատակարանների* բովանդակությունը: Մեղրիի գրեթե բոլոր ձեռագրերում դրանք առկա են և հաղորդում են ուշագրավ տեղեկություններ ոչ միայն գրչի, գրչության ժամանակի ու վայրի մասին, այլև՝ գրչի հույզերի, ապրումների, ցանկությունների մասին՝ «*Դարձեալ յիշեցէք զՄինաս վատահամբաւ գծագրող զՍուրբ Աւետարանիս և թողութիւն շնորհեցէք մեղաց իմոյ և ծնօղաց, մանաւանդ խոշորութեան և ապագրութեան Սուրբ գրոյս, զի այս է կար մեր, աղաչեմ աղերսեմ մեծակական արտասուօք յիշել միշտ ի յաղօթս ձեր, որ եմ ես նահանգիւ Աճանանցի և գեղջուվք Խոտանանցի: ... Դարձեալ յիշեցէք զտէր Ալէքսանոսն, ետ գրել զՍուրբ Աւետարանս ի գեղս որ կոչի Մանաշու, ի դուռն նորակնունք Ս. Յովանիսին, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի. ամէն. եղիցի, եղիցի*»՝ կարդում ենք 1660 թվին Մանաշուում՝ խոտանանցի գրչի կողմից գրված ավետարանում, որը ներկայումս գտնվում է Նյու Յորքում՝ մասնավոր հավաքածուներից մեկում: Գրեթե միշտ կրոնավոր գրիչները գրչության վայրի և ժամանակի հետ հիշատակել են նաև աթոռակալող հոգևոր առաջնորդներին և աշխարհիկ իշխանավորներին՝ «*Արդ, գրեցաւ զքառավտակ եւ յորդառատ աղբիւրս եւ աստուածաբան սուրբ Աւետարանս ի յերկրին Գուրհամու՝ ի գեղն, որ կոչի Վանք, ընդ հովանեաւ Սուրբ Ստեփանոսիս եւ ամենայն սրբոց նորա, ի թուաբերութեանն Հայկազեան սեռի ՌՃԻԷ.* (1678), *եւ ի հայրապետութեան սրբազան Յակոբ կաթողիկոսի եւ նետողաց Տաճկաց շահ Սիլէմանի, եւ մերոյ Ստաթէի արհեպիսկոպոսի Յովհաննէս քաջ ռաբունապետի*»: Յուրօրինակ հուզմունք են պատճառում այն հիշատակարանները, որտեղ հիացմունքի ու գովասանքի խոսքեր են հնչեցվում հայրենի եզերքի ու մարդկանց

հասցեին՝ «...*գրեցի զսա ի վայելուչ եւ ի գեղեցիկ ձորս, ի գեաւղս երկայնաձիգ, որ կոչի Վահրաւայ*» (Վահրավար, 1322 թ.) կամ՝ «*Արարիչն աստուած աւրհնէ զԿալեր գաւղն և զժողովուրդն առհասարակ, որ բարի բանի կամակից են*» (Կալեր, 1493 թ.): Շատ հիշատակարաններում արտացոլվել են ժամանակի արհավիրքները, պատերազմները, ավերումներն ու կոտորածները՝ «*Արդ ի թուականիս ՌՄԿԹ* (1820), *ի ազդմանէ չարին եղև խռովութիւն ի մէջ երկուց առիւծահզօր տերանց, այսինքն՝ պարսից և օսմանցւոց: ...* (Որոնք) *յառնիլ զօրաց երկւոց կողմանց բազում քա-ջ սք հանդերձ գիւղօրայիւք ... ոտս հարկանլ-վ ի ներքոյ սմբկաց երիվարաց քայքայելք խղճալի ազգն հայոց ի վէրջի թշվառուե հող և անշունչ լեալք*», կարդում ենք Տաշտունի 1665 թվի ավետարանի 1820 թվին գրված հետագայի հիշատակարանում: Հաճախ այդ ամենի արդյունքում թալանի ու կողոպուտի առարկա էին դառնում ձեռագրերը, որոնցից որոշները հետագայում գտնվում և հետ էին գնվում բարեպաշտ մարդկանց կողմից՝ «... *զայս հրաշագործ և լուսացնցուղ սուրբ աւետարանս անկէլ էր այնմ միջոցն ի ձեռս արեանար այլազգի միոյ վ-սյ չախմախսազ ուսթայ Շայենեան Գրիգորն գութ շարժեալ ի բոլոր սրտէ և բովանդակ մտօք վէրոյ դրել թվ ռջնէ առ զայս աւետարանս և իւր հալալ վաստակովն և ետ յիշատակ ի դուռն Խոյեայ* (Խոյ) *սուրբ Սարգիս եկեղեցուն, ամէն*» (Տաշտուն, 1665 թ., հետագայի հիշատակարան):

Պատմագիտության տեսանկյունից արժեքավոր տեղեկություններ ենք ստանում Մեղրիում 1505 թվով և XVII դարով թվագրվող երկու ձեռագրերի հիշատակարաններից, որոնք բավական լույս են սփռում միջնադարյան Մեղրիում կաթոլիկ քարոզչության ազդեցության վրա: Ինչպես հայտնի է, կաթոլիկ քարոզիչների գործունեությունը Հայաստանում սկիզբ է առել XIII-XIV դդ. սահմանագծին և իր ազդեցության գագաթնակետին է հասել XVI-XVII դարերում: Նրանք Կիլիկիայից աստիճանաբար առաջ շարժվեցին դեպի Հայկական լեռնաշխարհ՝ իրենց քարոզչության կենտրոն վերածելով Նախիջևանի գավառը, որտեղ հիմնվեցին կաթոլիկ համայնքներ: Նախիջևանը վերածվեց մի հենակետի, որտեղից սկսեց ծավալվել կաթոլիկ քարոզչությունը: Արդեն XVII դարի սկզբին Նախիջևանի հայ կաթոլիկների թվաքանակը հասել էր 19400-ի[8]: Այդ ժամանակաշրջանում Նախիջևանի հայ կաթոլիկներն արդեն ունեին 9 գործող եկեղեցի[9]: Նշված ժամանակաշրջանին է վերաբերվում Մեղրու Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հոգևոր սպասավոր Ֆրա Հովհաննեսի թողած հիշատակարանը՝ «*Զֆրա Մկրտիչ, որ ըստացաւ զգիրքս, յիշեցէք ի Քրիստոս Յիսուս Աստուած: Արդ, գրեցաւ սուրբ մատեանս ի գաւառ ի Մեղրի միջումն, ի խնդրոյ տէր Ոհանիսի ի յազգէն Պարոնեա՞ն, որ բնակի Սուրբ Յովհանու Մկըրտչին...: Զտառապեալ եւ զաղքատ ոգի՝ զֆրա Յոհանէս յիշեցէք ի Քրիստոս...*», իսկ մյուս՝ XVII դարով թվագրվող ձեռագրում, որպես ստացող հիշատակվել է «Յիսայ պապ»-ը, կամ՝ Եսայի պապը: «Ֆրա» (իտալ. fra< լատ. frater< եղբայր)՝ կաթոլիկ վանականի անվան վրա դրվող հարգական մակդիր է[10], իսկ «պապ» մակդիրով կոչում են կաթոլիկ եկեղեցու պետերին ու քահանայապետերին[11]: Հիմնվելով այս փաստերի վրա, կարելի է եզրակացնել, որ հիշյալ ժամանակահատվածում Մեղրիի եկեղեցիներից մեկը պատկանում էր հայ կաթոլիկ քարոզիչներին:

Ծանոթագրություններ

1. Մատենադարան, 1660 թ., Ասպահան, Աստուածաշունչ:

2. «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հատոր Գ (1641-1660), ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտ, Երևան, 1984, էջ 933:

3. Մեր ուսումնասիրության ընթացքում Մատենադարանում պահպանվող ձեռագրերի հիշատակարաններում մեզ հանդիպել են նաև այլ մեղրեցի գրիչներ, պատվիրատու-ստացողներ, մասնավորապես՝ Պետրոս Մեղրեցի գրիչը, որը գործել է Արցախի Ծոշ գյուղում (1784 թ.), Հովհաննես Մեղրեցի պատվիրատուն՝ Հռոմելի Փրավատի վանքում (1685 թ.):

4. Խանզադյան Ս., «Հայրենապատում», հ.3, «Հայաստան» հրատ., Երևան, 1984, էջ 92:

5. Հովհաննիսյան Աշոտ, «Զաքարիա Ագուլեցին և իր ժամանակը», ԵՊՀ հրատ., Երևան, 2017, էջ 116:

6. ՀԺՊ, Հ. IV, էջ 325:

7. Կաքավաբերդի գավառի Մանաշու գյուղից հիշատակվել էր նաև Պողոս Մնաշենցի կրոնավորը, որը գործում էր Երուսաղեմում և հանդիսանում էր 1692-93 թթ. ստեղծված կրոնական ժողովածուի գրիչը՝ «*Յիշատակ է գիրքս Ժողովածու Պօղոս աբեղայի եւ անպիտան կրօնաւորի, որ է յերկրէն Սիւնեաց, ի գաւառէն Մեղրու, եւ գեղջէն Մնաշինու, իսկ ով ոք ընթեռնուցու՝ զմի ողորմեա՛յ ասիցէ զվերոյգրեալ սեւերեսին, զի եւ Տէր Քրիստոս ողորմե[ց]է զիւրն յաւուրն Մեծի. թվին ՌՃԽԱ. (1692)»:*

8. Բալդարյան Ս., Նոր Ջուղայից Երևան ու Էրզրում. ճիզվիտ քարոզիչները հայկական բնակավայրերում XVII-XVIII դդ., հեղ. հրատ., Երևան, 2018, էջ 27- 29:

9. Բայբուրդյան Ա. Վ., XVII դարում Արևելյան Հայաստանում կաթոլիկ միսիոներների գործունեության պատմությունից, ՊԲՀ համար 2, 1989, էջ 148:

10. Աշոտ Հայրապետյան, «Օտար բառերի բառարան (շուրջ 10, 000 բառային միավոր)», Հեղինակային հրատ., Երևան, 2011:

11. Անդրանիկ Վրդ. Կռանեան, «Բառգիրք հայերէն լեզուի», Պէյրութ, 1998, էջ 381:

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ՝ ՄԵՂՐԻԻՑ ԱՐՑԱԽ

ՆԱԻՐԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Արցախահայության հերոսական անցյալի արժանահիշատակ դրվագներից է 1917-1920 թվականներին տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ ցուցաբերված աննկուն կամքն ու խիզախությունը: Այդ տարիներին Արցախի թեմը, գտնվելով երկրամասում տեղի ունեցող գործողությունների կենտրոնում, մեծ ջանքեր էր գործադրում՝ հնարավոր միջոցներով նպաստել երկրամասի հետ առնչվող այս կամ այն կնճռոտ հարցերը դրականորեն լուծելուն: Առանձնապես մեծ գործունեություն է ծավալել թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը: Նա ծնունդով մեղրեցի էր: Ծնվել է 1860 թվականին: Սովորել է Սուրբ Էջմիածնի ճեմարանում, ավարտել դասարանական բաժինը: Քահանայական աստիճան է ստացել 1885 թվականին: Կնոջ մահից հետո մտել է վանք: 1913 թ. նշանակվել է Տաթևի վանքի փոխանորդ: 1917 թ. ապրիլի 16-ին ձեռնադրվել է եպիսկոպոս և նշանակվել Արցախի թեմի կառավարիչ: Դա մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ Ռուսաստանում տեղի ունեցած 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո ազգային շարժումը վերելք էր ապրում նաև Արցախ-Ղարաբաղում ու նոր թափ առնում հասարակական-քաղաքական կյանքը: Կամա թե ակամա, երկրամասի հոգևոր կյանքը պետք է առնչվեր այդ ամենին, և, անշուշտ, թողներ իր ազդեցությունը:

Եվ ահա Վահան եպիսկոպոսը, ով Եղիշե Իշխանյանի բնորոշմամբ՝ «շատ համեստ մարդ էր», «հարգված ժողովրդի կողմից» և «հեզ ու համեստ պաշտոնյա էր եկեղեցում», ակտիվորեն մասնակցում էր բազում հարցերի լուծմանը, և չկար որևէ բնագավառ, որտեղ նրա օգնության կարիքը չզգացվեր:

Այդ տարիներին Արցախի թեմի հրատապ խնդիրներից էր ուսումնական գործի կազմակերպումը: Առաջին աշխարհամարտի նախօրյակին՝ 1909-1910 ուսումնական տարում, Արցախի թեմի 226 գյուղում կար 68 երկդասյան ծխական դպրոց, որից 8-ը՝ Շուշի քաղաքում և ավաններում, իսկ 60-ը՝ գյուղերում: Կար նաև 27 պետական տարրական դպրոց: Այդ դպրոցներում սովորողների թիվը հասնում էր 4506-ի, որոնցից 1470-ը աղջիկ էր: Դպրոցներում աշխատող ուսուցիչների թիվը հասնում էր 108-ի:

Առաջին աշխարհամարտը մեծ հարված հասցրեց Արցախի ոչ միայն տնտեսությանը, այլև դպրոցին: Նյութական միջոցների բացակայության պատճառով փակվեցին տասնյակ դպրոցներ: Դպրոցական գործին մեծ վնաս հասցրեցին նաև ազգամիջյան ընդհարումները: Դպրոցները վերաբացելու համար Վահան եպիսկոպոսը բազմիցս դիմումներ և խնդրագրեր է հղել Էջմիածին, Երևան, Բաքու և Թիֆլիս: 1918 թվականի դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղարկած նամակում հաղորդում է, որ վերջին երկու տարում Արցախում դրությունն շատ ծանր է. գլխավորապես տնտեսական տեսակետից, որ երկրամասի կրթական հիմնարկները, ամենից առաջ Թեմական դպրոցը, ենթարկվել են վտանգի: «**Այդ կրթարանները**, – շարունակում է թեմի առաջնորդը, – **պահելու համար ժողովուրդը ուժ չունի, իսպառ ցամաքեցին սովորական եկամտի աղբյուրները**»: Եվ ապա՝ «**...Ազգային այս հիմնարկները պահպանելու և մատաղ սերնդին կորստից փրկելու համար մնում է մի ելք, հույսի մի ճանապարհ, որին պետք է ձեռք կարկառվի: Եվ այս հույսը մեր փայփայած Հայաստանի Հանրապետությունն է, որին ստիպված եմ ձեռք մեկնելու**»:

Վահան եպիսկոպոսը խնդրում է օժանդակություն ցույց տալ Արցախի դպրոցներին, որտեղ գյուղական դպրոցներից ոչ մեկը չէր գործում, չէր գործում նաև Շուշիում եղած ծխական հինգ դպրոցը: Իսկ վերջում՝ «Թեպետ գիտեմ, որ Հայաստանի Հանրապետությունը, որպես մի նորածին կառավարություն, որն ունի ավելի մեծ հոգսեր ու կարիքներ, բայց և այնպես հավատացած եմ, որ կրթության գործը պետք է թանկ լինի հանրապետության համար և նա չի խնայի ըստ հնարավորության օգնության ձեռք մեկնելու մեր կրթական հիմնարկներին»: 1919 թ. օգոստոսի 26-ին Գևորգ Ե կաթողիկոսին ուղարկած նամակում հանգամանորեն պատմելով Արցախահայության 6-րդ և 7-րդ համագումարների ընթացքի մասին՝ խոսում է նաև Ադրբեջանից ֆինանսական օգնություն ստանալու հնարավորության մասին և հարցնում. «Արդեօք կարող ենք մենք ընդունել Ադրբէջանի հանրապետութիւնից մեր եկեղեցական-ծխական և միջնակարգ դպրոցների, այլ և կոնսիստորիայի դիւանատան ծառայողների պահպանութեան համար նպաստ ռոճիկ, ինչպէս առհասարակ ընդունուած է հանրապետական երկրներում, և քանի որ, մեր ժողովուրդը միջոց չունի նրանց համար այժմեան պայմաններում պահանջուող մեծաքանակ ծախքերը տալու»: Հետո եզրակացնում է, որ «**Եթէ այդ նպաստը չտրուի, մենք չենք կարող բանալ այս տարի թէկուզ 10 դպրոց**»:

Այս մասին Գևորգ Ե Կաթողիկոսը հայտնելով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին, նշում է, որ Ղարաբաղի ծխական և միջնակարգ դպրոցները վերաբացելու և կոնսիստորիան պահպանելու համար պետք է Արցախի թեմին ցույց տալ օգնություն:

Ակնհայտ է, որ Ղարաբաղը գերադասում է այդ ծախքերը ստանալ ամենից առաջ Հայաստանի Հանրապետությունից: Հայոց Կաթողիկոսն ընդառաջելով Արցախի թեմական առաջնորդ Վահան Տեր-Գրիգորյանի խնդրանքին, ՀՀ արտաքին գործերի նախարարից խնդրում է նրա «աջակցութիւնն ու միջնորդութիւնը Հայկական Հանրապետութեան կառավարության առաջ», որպեսզի կառավարության «միջոցներով գոհացուեն առ ժամանակ այդ ծախքերը, մինչև որ մօտիկ ապագայում կլուծուի Ղարաբաղի քաղաքական դրութեան հարցը»: Հայոց Կաթողիկոսը հավատացած էր, որ ՀՀ կառավարությունը սիրով ընդառաջ կգնա ժամանակաւորապէս այս

նիւթական օժանդակութիւնն ընձեռելու Ղարաբաղին, որի ժողովուրդը հոգով միացած է մեր երկրին և մեր կառավարութեան»:

Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսի 1918 թ. դեկտեմբերի 4-ին Գևորգ Ե Կաթողիկոսին գրած նամակից իմանում ենք, որ բնակչության ծանր պայմանների պատճառով, մանավանդ թուրքերի կատարած ավերիչ արշավանքից հետո, հնարավոր չէր բացել որևէ դպրոց: Միայն Շուշիում նոր բացվել էր Մարիամ-Ղուկասյան դպրոցը, և դեկտեմբերի 1-ից՝ Թեմական դպրոցը, այն էլ «կիսով չափ հավաքված աշակերտներով»: Թեմի առաջնորդը հույս չուներ, թե դրանք կարող էին շարունակել իրենց գոյությունը: Արցախ-Ղարաբաղում քաղաքական վիճակը սկսել էր ավելի բարդանալ, երբ 1918 թ. գարնանը թուրքական զորքերը ներխուժեցին Հայաստան: Հենց նրանց հրահրմամբ թուրք-ազերիները հարձակումներ էին գործում Արցախի հայկական գյուղերի վրա, սրախողխող անում մարդկանց, թալանում ունեցվածքը, տանում անասունները, փակում Բաքու և Գորիս տանող ճանապարհները, հրաժարվում հայերին սննդամթերք վաճառել և այսպես շարունակ:

Այդ ժամանակ շատ լուրջ խնդիր էր անասունների ամառային արոտավայրերի հարցը: Ամեն ամառ ադրբեջանցի անասնապահներն իրենց հոտերով բարձրանում էին Ղարաբաղի լեռները: Նրանք ճանապարհին մեծ վնասներ էին հասցնում արցախցիների արոտավայրերին ու այգիներին: Քոչը սար բաց թողնելու հարցը վճռելու համար 1918 թ. ապրիլի 26-ին Դաշբուլաղ գյուղում հրավիրվում է Ասկերանի շրջանի գյուղացիների համագումար: Համագումար է ներկայանում նաև Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը: Նա միաձայն ընտրվում է համագումարի պատվավոր նախագահ: Սրբազան հայրը «խրախուսանքի խօսք ուղղեց ժողովականներին, որ աչալուրջ լինեն դրուած ծանրակշիռ խնդիրը լուծելիս, և ջանան այնպիսի որոշում կայացնել, որ չխախտի խաղաղութիւնը և չվնասի մեր ժողովուրդը»: Նա կոչ արեց՝ պատգամավորներն իրենց գյուղերը վերադառնալով, «ամէն կերպ ջանան ժողովրդի մէջ համերաշխութեանը զարկ տալ ու խուսափեն անիշխանական քայլերից և թիկունք հանդիսանան ազգային իշխանութիւններին, մեր ժողովրդի կեանքի փրկութեան համար»:

1918 թ. սեպտեմբերի 15-ին թուրքերը գրավեցին Բաքուն: Վահան եպիսկոպոսը դառնությամբ ընդունեց այդ լուրը: Հայ վիճակագիր Բախշի Իշխանյանի հաշվումներով՝ Բաքվում զոհվել է մոտ 30 հազար հայ, իսկ նյութական կորուստը կազմել է 945.724.017 ռուբլի: Քաղաքը թալանելու և հայերին ջարդելու համար թուրքերին երեք օր ժամանակ էր տրվել: Այդ ամենից ոգևորված, թուրք դահիճներն իրենց ուժերը հետո շրջեցին դեպի Արցախ-Ղարաբաղ:

Վրաստանում գտնվող Հայաստանի Հանրապետության հավատարմատարը գերմանացի գեներալ Ֆոնկրեսսի հետ զրույցի ժամանակ նրան զգուշացրել է, որ այդ «ձեռնարկը կարող է թիւրքերին և ադրբէջանցիներին աժան չնստել, որովհետև Ղարաբաղի հայերը ռազմական այլ ընդունակութիւններ ունին, քան ուրիշ վայրերինը»: Հավատարմատարը ենթադրում էր, որ եթե «այդ առաջխաղացումը յաջողութեամբ պըսակուի, դա հաւասար կը լինի հայերի մասսայական բնաջնջումին»:

Եվ ինչ. 1918 թ. մայիսի վերջին Անդրկովկաս ժամանելով՝ հայ ժողովրդի դահիճ Էնվեր փաշայի եղբայր Ֆերիք Նուրի փաշան հրահանգ ուներ ամենից առաջ Արցախ-Զանգեզուրը միացնել նորածնունդ Ադրբեջանին: Բաքուն խեղդելուց հետո հենց Նուրի փաշայի հրահանգով թուրք-ազերիների հրոսախմբերը ներխուժեցին Արցախ: Թուրք դահիճը դեռևս օգոստոսի 18-ին հանդես գալով մի զրպարտչական հայտարարությամբ՝ առաջին անգամ Ղարաբաղը համարեց Ադրբեջանի մաս:

Արցախ-Զանգեզուրի հայերը զայրույթով ընդունեցին Նուրի փաշայի սպառնալիքները: Ոտքի էր ելել ամբողջ Արցախը: Թուրք-ազերիները մի գերխնդիր ունեին՝ Ապշերոնից մինչև Սևանա լիճ հաստատել իրենց գերիշխանությունը: Իսկ դրան մեծապես խանգարում էր Արցախը: Ուստի թուրքական մի բրիգադ, ազգությամբ չերքեզ Ջեմիլ Ջահիդ բեյի հրամանատարությամբ և տեղական թուրք բեկերի առաջնորդությամբ՝ Եվլախից շարժվում է դեպի Շուշի՝ ճանապարհին ռմբակոծելով և զինաթափելով հայկական գյուղերը:

Դավիթ Անանունը (իսկական անունը՝ Դավիթ Հովհաննեսի Տեր-Դանիելյան) գրում է, թե թուրքերը հասնելով Աղդամ, երկու գրություն են ուղարկում Ղարաբաղի հայոց հոգևոր առաջնորդ Վահան Տեր-Գրիգորյանին և հայ ազգաբնակչությանը: Թուրք հրամանատարն արցախահայերից պահանջում էր ենթարկվել իրեն, հակառակ դեպքում սպառնում էր բոլոր բնակավայրերն ավերել:1918 թ. սեպտեմբերյան այդ օրերին հրավիրված Ղարաբաղի հայության 2-րդ և 3-րդ համագումարները՝ քննարկելով թուրքերի պահանջները, մերժում են և երկրամասի բնակչությանը կոչ անում ոտքի ելնել հայրենի հողը պաշտպանելու համար: Երրորդ համագումարի որոշմամբ ստեղծվում է երկու հանձնախումբ. ա) Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյան, Տիգրան Յուզբաշյան և Բախշի Մուրադյան՝ Ասկերանի և նրա ձախ թևի երկարությամբ գտնվող Խաչենի գյուղերը գնալու և բ) Ասկերանի աջ կողմի՝ Վարանդայի գյուղերը գնալու համար՝ Գարեգին քահանա Հովհաննիսյան, Եղիշե քահանա Թարխանյան և Կարապետ քահանա Վարդապետյան:

Այդ հանձնախմբերը խնդիր ունեին համագումարի որոշումները հասցնել բնակչությանը և «ժողովրդի մտքերը խաղաղեցնել»: Ուժերն անհավասար էին: Ոսոխը ներխուժելով Արցախ-Ղարաբաղ, ավերելով բազմաթիվ բնակավայրեր՝ շարժվում էր դեպի Շուշի: Նրանք զինաթափ արեցին և 24 գյուղից տարան 715 մոսին, 406 բերդան և 50830 փամփուշտ: Հակառակորդին օգնում էին թուրքական գյուղերի և քաղաքի ազերիները: Աղդամից Շուշի՝ երկու կողմի հայկական գյուղերն ավերելով, Ջահիդ բեյի զորամասը սեպտեմբերի 26-ին մտնում է Շուշի: Թուրք բարբարոսները ստիպված էին մարտերով գրավել յուրաքանչյուր բնակավայր: Ամբողջ Արցախը ոտքի ելավ հայրենի հողը պաշտպանելու համար: Այսպիսով՝ «սկսվեց արցախահայության փառապանծ հերոսապատումը թուրքական նվաճողների դեմ»: Թուրքերը գրավելով Շուշին, փորձում էին «լուծել Ղարաբաղի հարցը հակառակ սահմանափոխութեան ծրագրի և մեզ դնել կատարուած փաստի առաջ», այդ օրերին գրել է «Ժողովուրդը» և շարունակել. «Մինչդեռ Զանգեզուրի և Շուշու գաւառի հայկական մասում կար մօտ 250.000 հայ ազգաբնակութիւն և միայն 15 հազար մահմեդականութիւն, և այդ շրջանները պատմականօրէն և տնտեսապէս կապուած են Հայաստանի Հանրապետութեան հետ... Հայ ժողովուրդը չի կարող ոչ մի դէպքում զիջել այս գաւառները...»: Թուրքերը ներխուժելով Շուշի՝ ձերբակալեցին և բանտ նետեցին ավելի քան 50 անվանի մարդկանց, որոնց բանտում ենթարկում էին կտտանքների: Ջահիդ բեյը նույնիսկ փորձում էր ստանալ Վահան եպիսկոպոսի աջակցությունը, սակայն ստանում է մերժում: Եվ չնայած Շուշին անձնատուր եղավ, սակայն Արցախ-Ղարաբաղի գավառները մնացին անառիկ: Թուրք-ազերիների չորս հազարանոց մի բանակ հոկտեմբերի 5-ին ներխուժեց Ջրաբերդ, սակայն Մարտակերտի մոտ այն ջախջախվեց: Արցախցիներից վրեժխն-

դիր լինելու համար, թուրքական մեկ ուրիշ զորամաս, ավելի քան 400 հոգի, հոկտեմբերի 18-ին ներխուժեց Վարանդա, որոնք լիովին ջախջախվեցին Մսմնա գյուղի մոտ:

Այդ հերոսական պայքարում ժողովրդի հետ էր Արցախի թեմը: Նույնիսկ շատ հոգևորականներ զենքը ձեռքին խիզախաբար կռվում էին թշնամու դեմ:

Առաջին աշխարհամարտում թուրքերը պարտություն կրեցին և հեռացան նաև Արցախից: Այստեղ լուծարվել էր Ազգային խորհուրդը, երկրամասը գտնվում էր տնտեսական և քաղաքական ծանր վիճակում: Վահան եպիսկոպոսը Գևորգ Ե Կաթողիկոսին 1918 թ. դեկտեմբերի 4-ին գրած վերոհիշյալ նամակում հաղորդում է, որ տաճկաադրբեջանական արշավանքի ժամանակ Արցախում և Նուխու փոխանորդության Գեոգչայի գավառում ավերվել է 35-ի չափ հայկական գյուղ, ավերվել է Ամարասի վանքը և լիովին թալանվել, նույնիսկ տարել են տանիքի թիթեղը, վանքի այգիները և վարելահողերը զավթել են մոտիկ գտնվող թուրքական գյուղերի բնակիչները: Նաև հաղորդում է, թե երեկ Շուշի է հասել անգլիական զինվորական շտաբը, որն իբրև «նպատակ ունի խաղաղութիւն վերականգնել երկրում և ճանապարհները բանալ՝ թողնելով երկրի ներքին կառավարութիւնը տակաւին Ադրբէջանի հանրապետութեան»: Արցախ-Ղարաբաղում տիրում էր անիշխանություն: Հայաստանի կառավարությունը մի կողմ էր քաշվել և ոչ մի միջամտություն չէր ցուցաբերում: Դրանից, անշուշտ, օգտվում է մուսավաթական Ադրբեջանը: Բաքվում գտնվող անգլիական բանակի հրամանատար, գեներալ Վ. Թոմսոնը, կապի մեջ լինելով Ադրբեջանի իշխանությունների հետ, խոստանում է Արցախ-Զանգեզուրը ենթարկեցնել Ադրբեջանին: Եվ ահա Թոմսոնի ներկայացուցիչ մայոր Գիբոնը՝ դեկտեմբերի սկզբին գալով Արցախ, նախ ներկայանում է Վահան եպիսկոպոսին և նրան բացատրում իր գալու նպատակը: Իբրև եկել էր Ղարաբաղ-Զանգեզուրի գաղթականների վիճակի հետ ծանոթանալու և անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար: Հետո խնդրում է Սրբազանին՝ կարգադրություն անել, որպեսզի գործին ծանոթ մարդիկ օժանդակեն իրեն և «արդարութեամբ բաշխեն նպաստները»:

Անշուշտ, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, անգլիական միսիան երբեք էլ նպատակ չուներ զբաղվել գաղթականների հարցով: Պարզապես անգլիացիները մի հիմնական խնդիր ունեին՝ ամեն ջանք գործադրել՝ Արցախ-Զանգեզուրը թողնելու Ադրբեջանի իշխանության տակ: Խորաթափանց Սրբազանը անգլիական մայորին պատասխանում է, որ Արցախում ամեն տեղ գործի գլուխ կանգնած են ժողովրդից ընտրված և իրենց պարտականությանը գիտակ մարդիկ, որոնք ցույց կտան անհրաժեշտ աջակցություն:

Արցախի քաղաքական վիճակը հստակեցնելու և նոր ազգային խորհուրդ ստեղծելու համար Ղարաբաղի գյուղացիության չորրորդ համագումարի հրավիրումը դարձել էր ամենահրատապ խնդիրներից մեկը, որի նախապատրաստմանը ձեռնամուխ եղան Արցախի թեմը և երկրամասի առաջադեմ ուժերը: Այդ օրերին հնարավոր չէր հրավիրել համագումար, այլ նպատակահարմար էր ստեղծել ժամանակավոր Ազգային խորհուրդ, որը պետք է միավորեր երկրամասի բոլոր քաղաքական ուժերը և նախապատրաստվեր համագումարին: Դրա հիմնական նախաձեռնողներից մեկը հանդիսացավ թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը:

1918 թ. դեկտեմբերի 2-ին նրա մոտ են հավաքվում Արցախի զորահրամանատարների կողմից նշանակված ներկայացուցիչները և երկրամասի քաղաքական ուժերի պատվիրակները: Այդ հավաքը բացում է Հայ հեղափոխական դաշնակցության Ապառաժի ԿԿ ղեկավար Հայրապետ Մուսայելյանը: Նա զգուշացնում է, որ հնարավոր է անգլիական հրամանատարությունն արցախահայությունից պահանջի ենթարկվել Ադրբեջանին: Դրա համար պետք է պատրաստի պատասխան ունենալ, մանավանդ որ Ջանգեզուր-Ղարաբաղը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության անբաժան մասը (1920թ. ապրիլի 25-ին Արցախահայերի 9-րդ համագումարը հռչակել էր Արցախը Հայաստանի Հանրապետության մաս): Հայրապետ Մուսայելյանին պաշտպանում են թե՛ թեմի առաջնորդը և թե՛ մյուս բոլոր ներկաները: Հավաքի մասնակիցները հանգում են այն մտքին, որ ընտրվելիք ժամանակավոր Ազգային խորհուրդը պետք է առաջնորդվի այդ վճռականությամբ:

1918 թ. դեկտեմբերին Շուշիի քաղաքագլուխն էր Գերասիմ Մելիք-Շահնազարյանը: Ժամանակակիցների բնորոշմամբ նա «նիւթամոլ ու կաշառակեր չէր... սակայն ջղագար, քմահաճ ու կամակոր, հիւանդագին անձնասէր, դիտողութիւն չհանդուրժող մեկն էր»: Այդ նա էր, որ Վարանդայի զորահրամանատար Սոկրատ Մելիք-Շահնազարյանի հետ խոչընդոտեցին Անդրանիկի մուտքը Շուշի: Քաղաքագլխի այդ և այլ արարքներ քննադատության էին ենթարկվել Հայրապետ Մուսայելյանի կողմից: Դրա համար էլ Գերասիմ Մելիք-Շահնազարյանը չէր ցանկանում տեսնել Հայրապետ Մուսայելյանին:

Բնիկ Դաշբուլաղ գյուղացի, Վարարակնում բնակվող Հայրապետ Մուսայելյանն ավարտել էր Շուշիի թեմականը, ապա 1903 թ. ընդունվել Լայպցիգի համալսարանի պատմափիլիսոփայական ֆակուլտետը և 1907 թվականին ավարտելուց հետո վերադարձել հայրենիք ու զբաղվել ուսուցչությամբ:

1918 թ. դեկտեմբերյան այդ օրերին Արցախի զորահրամանատարների ներկայացուցիչները մի քանի անգամ հանդիպում են քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանի հետ և փորձում նրան համոզել մտնել ժամանակավոր Ազգային խորհրդի կազմի մեջ, մանավանդ որ դա Վահան եպիսկոպոսի բուռն ցանկությունն էր: Սակայն քաղաքագլուխը հրաժարվում է մտնել մի ազգային մարմնի մեջ, որի անդամ կարող էր լինել Հայրապետ Մուսայելյանը:

Քաղաքական ուժերի և զորահրամանատարների ներկայացուցիչները կրկին հավաքվելով՝ որոշում են դիմել Վահան եպիսկոպոսին, որ նա իր վրա վերցնի ժամանակավոր Ազգային խորհուրդ կազմելու պատասխանատվությունը: Սրբազանը գիտեր քաղաքագլխի վճռի մասին: Նա խոր ցավ էր ապրում, երբ պատմական մի այդպիսի ժամանակաշրջանում հանդես էին եկել եսակենտրոն մարդիկ, որոնք չէին կարողանում լինել համբերատար և իրար հանդուրժող: Չնայած դրան, Սրբազանը սիրով համաձայնվում է իր ձեռքը վերցնել ժամանակավոր Ազգային խորհուրդ ստեղծելու խնդիրը: Եվ ահա 1918 թ. դեկտեմբերի 15-ին, երեկոյան, Վահան եպիսկոպոսի հրավերով Արցախի զորահրամանատարների ներկայացուցիչները, քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանը, քաղաքական բոլոր ուժերի ներկայացուցիչները և միջկուսակցական խորհրդաժողովի ներկայացուցիչ Հայրապետ Մուսայելյանը հավաքվում են թեմի առաջնորդարանում: Վահան եպիսկոպոսը կարճ հայտնում է հավաքի նպատակը և առաջարկում ընտրել ժամանակավոր Ազգային խորհուրդ, որը պետք է նախապատրաստեր և կարճ ժամանակամիջոցում հրավիրեր Ղարաբաղի հայության չորրորդ համագումարը, որտեղ կընտրվեր նոր Ազգային խորհուրդ, որը«իր սեպուհ պարտականութիւնն է՝ հակառակութիւնները վերացնել հասարակութեան մէջ» և հենց այդ նպատակով էլ բոլորին հրավիրել է իր մոտ և իր անկեղծ ցանկությունն է, որ «մոռացու-

թեան տանք մեր միջև եղած թիւրիմացութիւնները, ձեռք-ձեռքի տանք և համբերութեամբ աշխատենք մինչև չորրորդ համագումարը, որից յետոյ իւրաքանչիւրը ազատ կըլլինենք»: Երկարատև վիճաբանությունից հետո Հայրապետ Մուսայելյանը չի մտնում ստեղծված ժամանակավոր Ազգային խորհրդի մեջ, որպեսզի քաղաքագլուխն անպայման մնա: Իսկ դա անհրաժեշտ էր, մանավանդ որ ժամանակավոր Ազգային խորհրդին հարկավոր էր քաղաքագլխի ֆինանսական աջակցությունը: Սրբազանի առաջարկությամբ խորհրդի հաջորդ նիստը տեղի է ունենում դեկտեմբերի 16-ին՝ քաղաքագլխի բնակարանում, որտեղ լուծվում են հետևյալ հարցերը. ա) Դիվանի ընտրություն, բ) Ժամանակավոր Ազգային խորհրդի գործի անցնելու մասին ծանուցում տալ ժողովրդին և գ) Հարաբերության մեջ մտնել Բաքվի, Գանձակի, Գորիսի և, վերջինիս միջոցով, Երևանի հետ: Ժամանակավոր Ազգային խորհրդի դիվանի նախագահ է ընտրվում Եղիշե Իշխանյանը:

Արցախում ստեղծված այդ մարմինն անվանվում էր Ղարաբաղի հայոց ժամանակավոր Ազգային խորհուրդ: Այն գոյություն ունեցավ մինչև 1919 թ. փետրվարի 10-ը, մինչև չորրորդ համագումարի բացման օրը:

Ազգային խորհուրդը համագործակցում էր Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանի հետ: Վերջինիս պահանջով թեմի ողջ հոգևորականությունը նպաստում էր Ղարաբաղի հայության չորրորդ համագումարի նախապատրաստական աշխատանքներին: Թե՛ արցախահայության և թե՛ նրա թեմի համար առանձնապես ծանր էր, երբ 1918 թ. դեկտեմբերի 8-ին Շուշի եկած գեներալ Թոմսոնի մեկ ուրիշ ներկայացուցիչ՝ կապիտան Սերրայտը, դեկտեմբերի 23-ին ժամանակավոր Ազգային խորհրդին է ներկայացնում գեներալ Թոմսոնից ստացված հրամանը, ըստ որի արցախցիները ժամանակավորապես պետք է ճանաչեն Ադրբեջանի գերիշխանությունը, մինչև Ղարաբաղի հարցի վերջնական լուծումը: Ժամանակավոր Ազգային խորհուրդը մերժում է Թոմսոնի պահանջը՝ պատասխանելով, որ այդ հարցով պիտի սպասել Ղարաբաղի հայության չորրորդ համագումարի պատասխանին: Ժամանակավոր ազգային խորհրդի այդ դիրքորոշումը պաշտպանում է Վահան եպիսկոպոսը:

Անգլիական հրամանատարությունը լիովին պաշտպանում էր մուսավաթական Ադրբեջանի նկրտումները Արցախ-Ղարաբաղի նկատմամբ:

Բրիտանական զինվորական ներկայացուցչության և Ադրբեջանի կառավարության որոշմամբ 1919 թ. հունվարի 15-ին ստեղծվեց Ղարաբաղ-Զանգեզուրի նահանգապետություն և գեներալ Վ. Թոմսոնի համաձայնությամբ ժամանակավոր նահանգապետ նշանակվեց ազգությամբ քուրդ, մասնագիտությամբ բժիշկ, հայերի դահիճ Խոսրով բեկ Սուլթանովը: Ղարաբաղում ծվարած անգլիական միսիան ատամներով պաշտպանում էր Սուլթանովին, տոն տալիս նրա ավազակային գործողություններին, միևնույն ժամանակ շողոքորթում նաև Ղարաբաղի Ազգային խորհրդին:

Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը Սուլթանովին Ղարաբաղի նահանգապետ նշանակելով՝ Հայաստանի կառավարությանը կանգնեցնում է կատարված փաստի առաջ՝ հուսալով տեր դառնալ Ղարաբաղին:

1919 թ. փետրվարի սկզբին Ադրբեջանի ռազմական նախարար Մեհմանդարովի ուղեկցությամբ Շուշի է ժամանում Ղարաբաղ-Զանգեզուրի ժամանակավոր նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովը: Նա Ղարաբաղ էր եկել՝ իր հետ բերելով մեծ գումար: Նա փորձում էր կաշառել բոլոր ծառայողներին, նրանց տալ աշխատավարձ, միայն պայմանով, որ ստորագրություն տան, թե իրենք 1918 թվականի հունիսի 1-ից ծառայում են Ադրբեջանի կառավարությանը և այսուհետ ևս «կշարունակեն ծառայել ամբողջ եռանդով ու պատվով»:

Այդ պահանջագիրը բլանկի վրա ուղարկվել էր բոլոր ուսումնական հաստատություններին և հիմնարկ-ձեռնարկություններին: Ղարաբաղի թեմը, Շուշիի հայ մտավորականությունը և երկրամասի ամբողջ հայությունը զայրույթով են ընդունում Սուլթանովի այդ պահանջը և մերժում:

1919 թ. փետրվարի 10-20-ը Շուշիի թեմական դպրոցի դահլիճում տեղի ունեցավ Ղարաբաղի հայության չորրորդ համագումարը: Համագումարը միաձայն որոշում է չճանաչել Ադրբեջանի իշխանությունը, քանի որ Ղարաբաղը, լինելով պատմական Սյունիքի մի մասը, հանդիսանում է Հայաստանի տարածքներից մեկը, որը պետք է կցվի Հայաստանին, որպես նրա անբաժան մասը: Համագումարն ընտրում է Ղարաբաղի հայոց Ազգային խորհուրդ, որն իր վրա է վերցնում երկրամասը կառավարելու բոլոր գործառույթները: Այն և՛ Ազգային խորհուրդ էր, և՛ օրենսդիր ու գործադիր մարմին: Վահան Տեր Գրիգորյանն իր աջակցությունն է հայտնում չորրորդ համագումարին:

Սակայն գեներալ Թոմսոնը նահանջելու միտում չուներ, հեռագրով պահանջում է ճանաչել Ադրբեջանի իշխանությունը Ղարաբաղում: Ստանալով համագումարի մերժումը, Թոմսոնը պահանջում է Արցախից Բաքու ուղարկել պատվիրակություն՝ իր հետ հանդիպելու համար: Ղարաբաղի հայության չորրորդ համագումարի կողմից ընտրված Ազգային խորհուրդը գտնում է, որ Բաքու պետք է մեկնեն Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը և Ազգային խորհրդի անդամ Հրանտ Բահաթրյանը: Նրանք անմիջապես մեկնում են Բաքու, որոնց հետ հանդիպումից դժգոհ էր անգլիական հրամանատարությունը: Վերջինս մարտի 19-ին պահանջում է Բաքու ուղարկել նոր պատվիրակություն: Այս անգամ մեկնում են Ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանը, քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանը և էլի երկու հոգի՝ Գրիգոր Մինասբեկյանը և Անուշավան Տեր-Միքայելյանը: Երկու պատվիրակություններին ընդունում է արդեն Թոմսոնին փոխարինած գնդապետ Շատելվորտը, մարտի 26-ին: Վերջինս նրանցից պահանջում է Ղարաբաղը ենթարկեցնել Ադրբեջանին: Սակայն Արցախի պատվիրակները, հենվելով Ղարաբաղի հայության չորրորդ համագումարի որոշման վրա, մերժում են անգլիական հրամ

Շատելվորտը գերազանցելով Թոմսոնին, բոլոր ջանքերը գործադրում էր Արցախ-Ղարաբաղը ենթարկեցնելու Ադրբեջանին և ստիպել կատարել Խոսրովբեկ Սուլթանովի բոլոր պահանջները:

1919 թ. ապրիլի 4-ին Բաքվից վերադառնում են Վահան եպիսկոպոսը, Հրանտ Բահաթրյանը, քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանը և պատվիրակությունների մյուս անդամները:

Շատելվորտը Արցախի Ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանին արգելել էր վերադառնալ Ղարաբաղ:

Ազգային խորհրդի նիստն ապրիլի 5-ին լսելով Վահան եպիսկոպոսի և Հրանտ Բահաթրյանի զեկուցումները Շատելվորտի և Բաքվի հայոց Ազգային խորհրդի ու հասարակական կազմակերպությունների հետ ունեցած հանդիպումների վերաբերյալ, հավանություն է տալիս պատվիրակության գործունեությանը: Թե՛ Վահան եպիսկոպոսը և թե՛ պատվիրակությունների մյուս անդամները Շատելվորտի հետ ունեցած հանդիպման ժամանակ շեշտել էին, որ Զանգեզուր-Ղարաբաղն անբաժան են և հանդիսանում է Հայաստանի մեկ նահանգը: Սակայն Շատելվորտը չի ընդունում Ղարաբաղի պատվիրակությունների

ներկայացրած պատճառաբանությունները և պահանջում անպայման կատարել Թոմսոնի արած կարգադրությունը և ճանաչել Ադրբեջանի իշխանությունը:

Արցախի պատվիրակությունն անգլիական հրամանատարությանը հայտարարել էր, որ Ղարաբաղի հայոց Ազգային խորհուրդը չորրորդ համագումարի կողմից ընտրված գործադիր մարմին է և չի կարող ինքնուրույն որոշում կայացնել, և որ չորրորդ համագումարի ընդունած որոշումը փոխելու համար հնարավոր է հրավիրել նոր համագումար: Ղարաբաղի թեմի առաջնորդի այդ պատասխանը լսելով, Շատելվորտն անմիջապես առաջարկել է հրավիրել նոր համագումար, որին ներկա կլինի ինքը, որպեսզի անմիջապես խոսի ժողովրդի ներկայացուցիչների հետ:

Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարը տեղի ունեցավ 1919 թ. ապրիլի 23-29-ը, Շուշիի թեմական դպրոցի դահլիճում: Գեներալ Շատելվորտը Բաքվից եկել էր համագումարում ելույթ ունենալու համար: Նրա խնդրանքով համագումարի աշխատանքներին մասնակցում էր նաև Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը: Վերջինս առաջին նիստում միաձայն ընտրվում է համագումարի պատվավոր նախագահ: Գեներալ Շատելվորտն իր ելույթում հրապարակում է անգլիական հրամանատարության որոշումը, ըստ որի Ղարաբաղը պետք է ճանաչի Ադրբեջանի իշխանությունը և ենթարկվի նրան՝ մինչև Ադրբեջանի և Հայաստանի սահմանները կճշտվեն հետագայում:

Հիշենք, որ Հրանտ Բահաթրյանը Վահան եպիսկոպոսի հետ Բաքու էին գնացել գեներալ Թոմսոնի հետ հանդիպելու համար: Հ. Բահաթրյանը Բաքվից մի քանի օրով գնացել էր Թիֆլիս, որտեղ հանդիպել էր Հայաստանի վարչապետ Հովհաննես Քաջազնունու և արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանի հետ: Զրույցի ժամանակ Քաջազնունին բացատրել է, որ Հայաստանը գտնվում է քաղաքական և տնտեսական ծանր պայմաններում, հայ ժողովուրդը բոլորովին ուժասպառ է եղել, նա չի կարող ռազմական անհրաժեշտ քայլ կատարել և պաշտպանել արցախցիներին: Նա արցախցիներին խորհուրդ է տվել բանակցության մեջ մտնել Ադրբեջանի իշխանության ներկայացուցիչ Սուլթանովի հետ, համաձայնության եզր գտնել, «քանի որ Ղարաբաղի և մեր այլ հողերի՝ Հայաստանին կցելու հարցը պիտի որոշի հրաւիրելիք համաշխարհային վեհաժողովին»: Իսկ Ալեքսանդր Խատիսյանը տվել էր միանգամայն հակառակ խորհուրդ: Նա արցախցիների բռնած դիրքը համարել է ուղիղ և ճիշտ, պատշաճ ու համապատասխան իր պատմական անցյալին: Նա խորհուրդ է տվել Ղարաբաղը պահել անսասան, շարունակել ընդդիմությունը, չենթարկվել անգլիական հրամանատարության պահանջին և Ադրբեջանի իշխանությանը:

Վահան եպիսկոպոսը, տեղյակ լինելով Հ. Քաջազնունու և Հ. Բահաթրյանի վերոհիշյալ զրույցին, Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարում ունեցած իր ելույթում ասում է. «Սիրելիներ, ինչպէս գիտէք, Ադրբէջանի իշխանութիւնը ճանաչելու և նրան ենթարկելու խնդիրը շատ սուր կերպարանք է ստացել: Զօրավարի առաջարկից պիտի հասկանալ, որ Ադրբէջանի իշխանութիւնը ժամանակաւոր կերպով պիտի ճանաչել, իսկ Ղարաբաղի հարցը պիտի լուծի հետագային, միջազգային վեհաժողովում: Այժմ միայն ժամանակաւոր կերպով Ադրբէջանի իշխանութիւնը ճանաչելու մասին է խօսքը»: Թեմի առաջնորդն իր ելույթում գիտակցաբար շեշտը դնում էր «ժամանակավոր ճանաչելու» առաջարկության վրա՝ համոզված լինելով, որ համագումարի պատգամավորներն իրեն ճիշտ կհասկանան: Սակայն Ջրաբերդից եկած պատգամավորներից մեկը, խոսքն ուղղելով եպիսկոպոսին, ասում է. «Սրբազան Հայր, գեներալը որ ասում է, թէ այսօր մենք ժամանակաւոր ընդունենք Ադրբէջանի իշխանութիւնը, վաղը կը դառնայ մշտական, դրա համար էլ մենք ժամանակաւոր էլ չենք կարող ընդունել Ադրբէջանի իշխանութիւնը»: Մյուս բոլոր ելույթ ունեցողները ևս մերժում են Շատելվորտի պահանջը և պաշտպանում չորրորդ համագումարի ընդունած որոշումը:

Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարը, պատասխանելով գեներալ Շատելվորտի պահանջին, նշում է, որ քանի «Ադրբեջանի կառավարությունը հայերին ճնշելու համար դարձել է պետական սիստեմ», ուստի «Համագումարն անընդունելի է համարում Ադրբեջանի հետ առնչություն ունեցող որևէ վարչական ծրագիր...»:

Կատաղած Շատելվորտն ու Սուլթանովը համագումարից հեռանում են՝ անշուշտ վրեժ լուծելու վճռականությամբ: Եվ դա չուշացավ: Նույն թվականի մայիսի վերջին և հունիսի սկզբին Սուլթանովի դրդմամբ հայ-ադրբեջանական ընդհարումներ են սկսվում Շուշիում և հարևան բնակավայրերում:

Հայոց Ազգային խորհրդի որոշմամբ թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը, Հրանտ Բահաթրյանը և Եղիշե Իշխանյանը հունիսի 4-ի առավոտյան ներկայանում են Շուշիում գտնվող անգլիական հրամանատարության ներկայացուցիչ մայոր Մոնկ Մեսսոնին, նրան բողոքում Սուլթանովի սադրիչ գործողությունների դեմ և պահանջում դադարեցնել հայ-ադրբեջանական ընդհարումները: Մոնկ Մեսսոնը փոխանակ որևէ վճռական քայլ կատարելու, միայն արդարանում է, որ այդ ամենի մասին հեռագրել է Բաքու, Շատելվորտին: Հետո հայտնում է, որ Սուլթանովը պահանջում է քաղաքից հեռանան հայոց Ազգային խորհրդի անդամները:

Սրբազանը քաղաքում գտնվող Ազգային խորհր-

դի անդամներին խնդրում է կատարել Սուլթանովի պահանջը, քանի որ դա կարող է դյուրացնել վիճակը: Շատելվորտը պաշտպանում է Սուլթանովի պահանջը: Քաղաքում գտնվող Ազգային խորհրդի անդամներ Եղիշե Իշխանյանը, Հարություն Թումյանը և Ասատուր Ավետիսյանն անգլիական միսիայի ավտոմեքենայով հունիսի 5-ին տեղափոխվում են Եվլախ, այնտեղից էլ՝ Թիֆլիս: Այդքանը հերիք չհամարելով, անգլիական հրամանատարությունը նույնիսկ հայտարարում է, թե արցախահայերը պետք է Ղարաբաղը թողնեն Ադրբեջանին և տեղափոխվեն Ալաշկերտ, Վան, Բասեն: 1919 թ. հունիսյան այդ օրերին սարսափելի սպանդ կազմակերպվեց Ղայբալիշեն, Կրկժան, Փահլուր, Ջամիլու, Խանածախ, Դաշուշեն և այլ գյուղերում: Ղայբալիշենի 700 բնակիչներից կենդանի մնացին միայն 11 տղամարդ և 87 կին ու երեխա:

Արցախ-Ղարաբաղի խնդիրն ավելի է բարդանում մանավանդ 1919 թ. օգոստոսին, Ղարաբաղի հայության 7-րդ համագումարի օրերին: Օգոստոսի 26-ին Գևորգ Ե կաթողիկոսին Վահան եպիսկոպոսի գրած նամակից իմանում ենք, որ համագումարի օրերին Ղարաբաղի հայոց Ազգային խորհրդի և Սուլթանովի միջև տեղի ունեցած բանակցությունների ժամանակ Վահան եպիսկոպոսը կարևոր դեր է խաղացել: Նա գրում է. «Իմ և Սուլթանովի հետ տեղի ունեցած տեսակցութիւնից ու խօսակցութիւնից յետոյ որոշեց հարցը լուծել խաղաղ ճանապարհով...»: Ապա հաղորդում է, որ Ղարաբաղում մշակված և Ադրբեջանի խորհրդարանում ընդունվելուց հետո Ղարաբաղի և Ադրբեջանի միջև կնքվելիք համաձայնագիրը ետ բերվեց Ղարաբաղ, որը քննարկվեց 7-րդ համագումարում, որի պատգամավորները Սուլթանովից պատասխանատվություն էին պահանջում նրա կատարած հանցագործությունների համար: «Այդ օրը, - շարունակում է Վահան եպիսկոպոսը, - ես գնացել էի Շօշու, որպէսզի համոզեմ համագումարին հարցի խաղաղ լուծման համաձայնութեանը գալու և անգիտակ այդ պահանջագրին՝ յանկարծ ստանում եմ Սուլթանովից մի ուլտիմատում գրութիւն, թէ համագումարի ինձ ուղղած պահանջագիրը ոչ մի կասկած չի թողնում իմ մէջ, որ նա խաղաղ բանակցութեան ճանապարհի վրայ չէ կանգնած, ուստի տալիս եմ ձեզ 48 ժամ ժամանակ կամ ընդունելու պայմանագիրը, կամ մերժելու, որից յետոյ առաջ կը շարժին մեր զօրքերը իրենց պատերազմական գործողութիւններով: Մեծ դժուարութեամբ է լինում ինձ համոզել համագումարին....Օգտվելով այն հանգամանքից, որ գործում էր օգոստոսյան ժամանակավոր համաձայնագիրը, մուսավաթական Ադրբեջանը փորձում էր խաղաղ ճանապարհով տիրանալ Արցախ-Ղարաբաղի բնական հարստություններին: Այսպես, 1919 թ. դեկտեմբերի 25-ին Ղարաբաղի վիճակային կոնսիստորիան հանդես է գալիս մի հայտարարությամբ, որը բողոք էր Ադրբեջանի մուսավաթական իշխանությունների դեմ: Այդ հայտարարությունից իմանում ենք, որ մուսավաթական Ադրբեջանի երկրագործական և պետական գույքերի վարչության նախարարությունը 1919 թ. դեկտեմբե«7-րդ համագումարից հետո Ադրբեջանի կառավարությունը պարբերաբար խախտել է ժամանակավոր համաձայնության ամենագլխավոր կետերը» և շարունակում է հայասպանության իր քաղաքականությունը: Ելնելով դրանից, համագումարը «վճռականապես բողոքում է ամբողջ քաղաքակիրթ աշխարհի առաջ՝ Խանքենդում, Ասկերանում և Շուշի-Եվլախ ճանապարհի վրա տեղի ունեցած կոտորածների առթիվ և քաղաքակիրթ աշխարհին կոչ է անում վերջ տալ Ադրբեջանի այսօրինակ քաղաքականությանը»: Համագումարը զգուշացնում է, որ «նման դեպքերի կրկնությունը Լեռնային Ղարաբաղի հայությանը կստիպի իր կյանքի ու պատվի պաշտպանության համար դիմել համապատասխան միջոցների»: Համագումարը հրաժարվում է օգոստոսյան համաձայնությունից, որովհետև այն կնքվելուց հետո Ադրբեջանի կառավարությունը չէր կարողացել ոչ մի կարգ ու կանոն պահպանել Ղարաբաղում: Համագումարը մերժեց Ղարաբաղն Ադրբեջանին ենթարկելու մուսավաթականների պահանջը:

Մուսավաթական Ադրբեջանը տենդագին նախապատրաստվում էր Արցախ-Ղարաբաղ ներխուժելու համար: Եվ դա չուշացավ: 1920 թվականի մարտի 22-ի լույս 23-ի գիշերը, մուսուլմանական ամանորին (նովրուզ), ընդհանուր հարձակում սկսեցին Ղարաբաղի դեմ: Շուշի ներխուժեցին Խոսրովբեկ Սուլթանովի եղբայր Սուլթանբեկ Սուլթանովի քրդական հրոսակները: Ոմանց վկայությամբ՝ այդ օրերին Ղարաբաղ էին ներխուժել ոչ պակաս 80 հազար թուրք-ազերի դահիճներ: Ամենաողբերգական իրադարձությունները տեղի ունեցան Շուշի քաղաքում: Այնտեղ հայոց քաղաքամասը լիովին ոչնչանալուց բացի, Բախշի Իշխանյանի հաշվումներով՝ զոհվեցին 8988 հայ: Արցախի թեմը, մանավանդ Վահան եպիսկոպոսը, այդ օրերին մեծ աշխատանք էին տանում օգոստոսյան համաձայնագիրը պահպանելու, հայ-ադրբեջանական կոտորածները կանխելու և հայերի կյանքն ապահովելու համար: Հայերի կողմից Վահան եպիսկոպոսին առաջարկվեց հեռանալ քաղաքից, սակայն նա հրաժարվեց՝ պնդելով, որ ինքը կմնա իր ժողովրդի հետ: Վանդալները ներխուժելով Առաջնորդարան, գլխատեցին Ղարաբաղի թեմի առաջնորդին, գլուխը ցից հանեցին և շրջեցրին քաղաքի թուրքական թաղամասում:

Նույն թվականի մայիսի 15-ին այդ վանդալիզմի մասին Ամենայն Հայոց Կաթողիկոսին Կարապետ քահանա Վարդապետյանցի ուղարկած նամակից իմանում ենք, որ «Քաղաքի 12-13 հազար հայերից 6 հազար հոգին փախան գիւղերը, 4 հազար հոգին, մեծ մասը տղամարդ, սրի քաշուեցան, գնդակահարուեցան ու հրկիզուեցան և մօտ 3 հազար հոգի մնացին քաղաքում, գերի՝ թուրքերի ձեռքին, որոնց մի մասը՝ 400 հոգի երիտասարդ ուժեր տներում և բանտում սրածուեցան, 700 հոգի կին և երեխայ, ծեր ու պառաւ, արձակուեցան և հասին գիւղերը, իսկ մնացածը, սիրուն կանանց ու աղջկերանց հետ, գտնուում են թուրքերի տներում, նահանգապետ Սուլթանովի մօտ և բանտում»:

Թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսի մասին հաղորդում է, որ նա «սպանվեց Առաջնորդարանում, չցանկանալով դուրս գալ... Կոնսիստորիայի կողմից սպանուած են անդամ Խորէն Ա. քահ. Իսկանդարեանը, կարգապահ Անանիա Տեր-Դանիէլեանը և դիւանապահ Յովհաննէս Ղարաբէկեանը: Քահանաներից սպանուած է Յարութիւն Ա. քահ. Վարդապետեանը, իսկ Գարեգին ավագ քահանա Յովհաննիսեան ազատուել է բանտից կիսամեռ դրութեան մէջ և միանգամայն մերկ, սպանուած են թեմական, դպրոցի տեսուչ Աղ. Ծատուրեանը, ուսուցիչ Գաբրիել Ղուլիքևխայեանը, հոգաբարձու Անդրեաս բէկ Տէր-Յարութիւնեանը, Ղուկասեան ուսումնարանի տեսուչ բժիշկ Նիկողայոս Եարամիշևանը և այլն»: Ահա թե ինչպիսի ճակատագիր ունեցավ Արցախի թեմը՝ ենթարկվելով թուրք-ազերիների հոշոտմանը:

Մեղրեցի ծխատեր ավագ քահանա, ապա Տաթևի վանքի վանահայր, Արցախի թեմի առաջնորդ Վահան Տեր-Գրիգորյանի ազգանվեր գործունեությունն այլևս ստվերված չէ և շատ արդիական է:

Օգտագործած սկզբնաղբյուրներ.

1. Եղիշե Իշխանյան «Լեռնային Ղարաբաղը 1917-1920թթ», Երևան, 1999 թ.
2. Բախշի Իշխանյան, «Բագուի մեծ սարսափները» Թիֆլիս, 1920 թ.

Ստեփանոս Մեղրեցի

ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՅԻ

Թնելով ժամանակագրությունը, Ալիշանը հաստատել է, որ 1170-1216թթ. Սյունյաց թեմում աթոռակալել է Ստեփանոս եպիսկոպոսը, ով մեր թեմակալների պատմական հոլովույթում 3-րդ Ստեփանոսն էր:

Թեմակալ առաջնորդ էր եւ նրա հորեղբայրը՝ Տեր Բարսեղ Մեղրեցին, ով 1148թ. մի պատահմունքով Աստապատ գյուղի մոտ Երասխ գետն է ընկնում իր հեծած ջորու հետ միասին» (Օրբ. 49): Թուրքատիրության խառը ժամանակներ էին, եւ տեր կամ իշխող չկար, որ առաջնորդի համար որոնումներ կատարեր Տեր Բարսեղի եղբայր, Մեղրու քահանա Գրիգորի կողակիցը՝ Ծամամ խորահավատ երեցկինը, հորդորում է ամուսնուն մեկնել Կիլիկիա, եպիսկոպոս ձեռնադրվել՝ «որ մեր որդյակն էլ քահանայապետի որդյակ դառնա» եւ օրինակ է բերում Գրիգոր Լուսավորչին, նրա որդիներին ու թոռներին, որ բոլորն էլ ամուսնացած էին: Տիկնոջ հորդորին անսալով՝ Գրիգոր քահանան ուղեւորվում է Կիլիկիա, կաթողիկոս Գրիգոր Պահլավունուց (Ներսես Շնորհալու ավագ եղբայրն է) եպիսկոպոս ձեռնադրվում վերադառնում եւ թեմը ղեկավարում 20 տարի Վախճանվել է Վայոց ձորի Խորձա (Շորժա) գյուղում 1168թ. հավատացյալ համայնքի մեջ շրջագայելիս: Թաղված է Նորավանքի ուխտում Տեր-Հովհաննես Կապանեցի եպիսկոպոսի մոտ: Տապանաքարին կա «Զհայր Տեառն Ստեփանոսի տէր Գրիգոր յիշեցէք» մակագրությունը:

Հորը հաջորդում է քանքարաշատ որդին՝ Տեր Ստեփանոսը: Պատմիչ Օրբելյանը նրան «շնորհազարդ Ստեփան» է կոչում (ԿԴ), որովհետեւ մանուկ հասակից լի էր բազում շնորհներով եւ սիրված ու մեծարված էր ժամանակի իշխողների կողմից: Տիրակալ Շամսեդդին Ելտկուզը (Էլդագյազ) եւ այլ երեւելիներ նրան փաղաքշական անվամբ կոչում էին ֆար էլ Մսեհ, որ թարգմանաբար նշանակում է «քրիստոնյաների պարծանք»:

Տեր Ստեփանոսը՝ եպիսկոպոս է ձեռնադրվել ու թեմակալ առաջնորդ կարգվել Ներսես Շնորհալի կաթողիկոսից: Կիլիկիայում ականատես է եղել հայկականության բուռն վերելքին: Վերադառնալով հաստատվել է ոչ թե Տաթեւում, այլ Վայոց ձորի Նորավանքում, որովհետեւ Բաղքի թագավորությունն անկում էր ապրում Տաթեւի վանքի հարստությունը տեղափոխել էին Բաղաբերդ, որն էլ սելջուկները մատնությամբ ավարի մատնեցին 1170թ.:

Ստ. Մեղրեցին հմուտ քաղաքագետ էր Սելջուկ տիրակալները նրան պատվել են տուղրա գրով, ֆարմանով ու մանշուրով (հրովարտակներ), որոնց հիման վրա նա արտոնություններ հաստատեց Սյունիքի հոգեւոր դասի ու բնակչության համար (Օրբ ԿԳ) Ամուր կապեր ստեղծեց վրաց Թամար թագուհու, նրան հաջորդած Գեորգի Լաշայի հետ, սիրված հարգված էր ամիրսպասալար Զաքարեի, Իվանե աթաբեկի կողմից:

Ստեփանոս 3-րդը Տաթեւն անտես չարավ վերանորոգեց Սբ Առաքելոց՝ Պետրոս Պողոս եկեղեցին, որ ավերվել էր 1138թ. երկրաշարժի ժամանակ ու վրան գմբեթ դնել տվեց վանահայր Հակոբ Ճահկեցու միջոցով:

...Իշխան Ելիկում Օրբելյանը Ելտկուզի արքունիքում հասել էր բարձր աստիճանի պարսկական մի քանի քաղաքների ամիրա ու քաղաքագլուխ էր եւ, բնականաբար, կրոնափոխ էր եղել: Երբ Նախիջեւանի տիրակալ էր կարգվել, եկավ Տեր-Ստեփանոսի մոտ, ընկավ նրա առաջ, խոստովանեց մեղքերը եւ հաղորդություն խնդրեց եպիսկոպոսն օրհնեց, դարձի բերեց մոլորյալին: Եվ Ելիկումը որոշ ժամանակ անց՝ եպիսկոպոսից խնդրեց նրա քրոջ դստեր՝ Խաթունի ձեռքը ճշմարտահավատ օրիորդը Ճահուկում էր՝ դուստր ազատատոհմ Աբասի: Եվ եպիսկոպոսը փեսայացրեց Ելիկումին: Զույգը որդի ունեցավ, որին Ելիկումն իր հոր անունով կոչեց Լիպարիտ: Կարճ ժամանակ հետո Ելիկումն աթաբեկի որդու հետ պատերազմելու գնաց Գանձակ եւ այնտեղ զոհվեց: Լիպարիտին եւ մորը պատանդեցին Նախիջեւանում: Հետագայում, Զաքարեի ու Իվանեի խնդրանքով, Տեր-Ստեփանոսը Նախիջեւան գնաց ու մի հնարքով ազատեց գերեվարվածներին պարաններով իջեցնելով պարսպից, եւ բերեց Վայոց ձոր: Վրաց օժանդակությամբ Լիպարիտը գլխավորեց Սյունիքի եւ հարակից վայրերի ազատագրումը, նշանակվեց կուսակալ: Այս Լիպարիտի չորս որդիներից Տարսայիճի որդին էր համբավանուն պատմիչ, մետրոպոլիտ Ստ. Օրբելյանը: Արդ, անգիտելի չէ, որ պատմիչը մեղրեցու շառավիղ էր՝ Ստ Մեղրեցու քրոջ ծոռը:

... Աբրահամ վրդ Մկրտչյանի եզրահանգմամբ՝ «Սյունիքում Օրբելյանները հաստատվում են շնորհիվ Սյունիքի աթոռակալ Ստեփանոս Գ-ի Ստեփանոս Գ ֆար էլ Մսեհը Տաթեւի շինությունների ավերակ լինելու պատճառով, Ամաղու Նորավանքը հաստատում է որպես աթոռանիստ» (էջ 74):

Ստ. Օրբելյանի «Սյունիքի պատմություն» երկի ԿԱ գլխից մակաբերում ենք, որ Ստ.Մեղրեցին Սյունիքի թագավորության վերաբերող մի պատմության հեղինակ էր. «Այն տարում, երբ հայոց 552 թվականն էր (իմա 1103թ. Քս), եղավ Կապան գավառի եւ Բաղաց ամուր աշխարհի ավերման ու նրանց թագավորների եւ իշխանների տիրապետության վերացման սկիզբը, որի մասին կարդացինք ու իմացանք Սյունյաց եպիսկոպոս Տեր-Ստեփանոսի թղթից»: Այս երկին ծանոթ է եղել նաեւ Վարդան Արեւելցին: Ցավոք, այն այժմ կորուսյալ գանձ է:

Ստեփանոս ֆար էլ Մսեհը վախճանվել է 1216թ. Արփա (այժմ՝ Արենի) գյուղում եւ թաղվել Նորավանքում՝ հոր՝ Տեր-Գրիգորի մոտ: Նրան փոխարինել է իր քրոջորդի Տեր-Սարգիսը, ով աթոռակալել է 20 տարի եւ նահատակվել Երուսաղեմում:

Հպարտանալու է, որ Ստեփանոս Մեղրեցին Սյունիքի պատմության երեւելիների ոսկե բազումքի մեջ է:

ՀԱՅԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեղրի, օրհնյալ եզերք՝ նվիրագործված ձայնապետ ու ձայների արքա Կոմիտասի հուշով

ԼԻԼԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Մեղրեցիները հնուց ի վեր մեծ հակում են ունեցել երգարվեստի և երաժշտության նկատմամբ: Այս տեսակետից Մեղրու մշակութային կյանքում մեծ դեր են խաղացել պատմական գողթնեցիները: (Ի դեպ, Նաղաշ Հովնաթանը լինելով մեղրեցու փեսա, հաճախ է Մեղրի եկել, իսկ հետագայում այդ կապը պահել է որդին՝ Հակոբը):

Հովնաթանյան գերդաստանի մտերմիկ կապն ու բարեկամությունը 17-18-րդ դարերում դրական դեր են խաղացել Մեղրու ոչ միայն երգարվեստի, այլ նաև կերպարվեստի կյանքում:

Ովքեր գեթ մեկ անգամ եղել են պատմական Ագուլիս քաղաքի եկեղեցիներում, հաստատապես կհավաստեն տարեց մեղրեցիների ասածն այն մասին, որ Հովնաթանյանին են պատկանում Մեղրու եկեղեցիների որմնանկարները նույնպես:

Մեղրեցիների հիշողության մեջ սերնդեսերունդ պահպանվել է գողտրիկ մի պատմություն այն մասին, թե 1908թ. Մեղրիում ինչպես են ընդունել Մեծն Կոմիտասին, ով Գողթն գավառով եկել էր Մեղրի, որտեղից էլ Տաթևի վանք պիտի գնար՝ Վեհափառի որոշ հանձնարարականներ կատարելու:

Ագուլիսեցի պատմիչ Ազարիա Մահտեսն իր ձեռագիր հիշատակարանում նշել է. «Պատմական Հայաստանի Գողթն գավառի Ցղնա գյուղից էին Կոմիտասի նախնիները: 18-րդ դարում գաղթել էին Քյոթահիա՝ Կատինա, ուր էլ 1869-ին ծնվել է Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը: Կոմիտասը բուռն ցանկություն ուներ լինելու իր նախնյաց սրբազան վայրերում և ահա 1908-ին հանգրվանում է Ցղնայում: Սոսիներով, սառնորակ աղբյուրներով, առատ թթվածնով հարուստ գյուղը հմայում է նրան: Այցելում է գերեզմաններ, մտնում գյուղի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին, մոմեր վառում, հետո նստում եկեղեցու բակի թթենու տակ դրված սալատակ քարին և երգում իր «Մոկաց Միրզան»: Նրան է մոտենում հայկական հին տարազով մի ծեր կին, շոյում նրա գլուխը, հետո հեկեկոցով լաց լինում՝ իմանալով «անծանոթ հյուրի» ով լինելը»:

Հենց այս գյուղից Օրդուբաթով Մեղրի է գալիս հանճարեղ երգահանը...

Սրանից 30-40 տարի առաջ՝ Մեղրու հրապարակի մերձակայքում ապրող Վահան Դավթի Խաթունյանը խանդավառությամբ էր պատմում այն մասին, թե Կոմիտասին ինչպիսի ջերմությամբ են ընդունել մեղրեցիները ճիշտ նույն թվականին և մեծ բավականություն պատճառել նրան՝ նրա իսկ հրաշք-երգերը կատարելով:

Հայաստանի ԳԱ հիմնադիր անդամներից Մանուկ Աբեղյանը, ով պատմական Գողթն գավառի Աստապատ գյուղից էր, ակնածանքով է գրել Կոմիտասի ու նրա նախնյաց մասին և հուշագրությամբ տեղեկացրել, որ խենթ ջերմությամբ են նրան ընդունել Գողթն և Արևիք (Մեղրի) գավառների բնակիչները 1908թվականին:

Մեղրիում մինչև 1900-ական թվականները գործել է եկեղեցական երգչախումբ, որի ղեկավարն է եղել Վերին Ագուլիսից եկած Թևատրոս Վարդապետյանը: Թե ով է եղել Թևատրոս Վարդապետյանը, գրեթե ոչինչ հայտնի չէ:

1911-12թթ. եկեղեցուց անջատ գործել է քառաձայն երգչախումբը, որը ղեկավարել է Պողոս Բոռուլյանը: Երգչախմբում հետագայում ընդգրկվել են և հրաշալի ձայն են ունեցել Վարշամ Փարսադանյանը, Բարդուղ Տոշյանը, Ավետիս Ազարյանը, Մաթևոս Վաչյանը, Մկրտիչ Աղավելյանը, Սամոսա Դանիելյանը, Իգնատիա Մելիք-Մկրտչյանը:

«Նրանք կոմիտասյան երգերի կրքոտ սիրահարներ էին»,– պատմում էր տարեց բժիշկ, Մեղրիում շատ հարգված Սերգո Պետրովիչը (Խոնդյանը):

Սերգո Պետրովիչի պատմածից (այդպես էին Մեղրիում նրան կոչում) բառացիորեն բերում եմ մի հատված՝ «Մեղրու շրջանի Կարճևան գյուղացի Վաղարշակ Տեր-Վահանյանը, ով 1932-1935թթ. Մոսկվայի Կրեմլի պալատում Ֆինանսների մինիստրն էր և անձամբ ստորագրում էր սովետական «Червонец» դրամի վրա, 1934 թվականին գալիս է Մեղրի և մի խումբ երիտասարդների հետ լինում Լիճքվազ կոչվող հանդամասում՝ հանգստանալու նպատակով: Զրույցի ժամանակ հանկարծ լսվում է Կոմիտասի «Սիրտս նման է էն փլած տներ» երգը և ծիծաղում՝ ասելով. «Հնարամիտ տղաներ, էդ ինչպե՞ս եք Կոմիտասի ձայնապակն այստեղ միացրել»: Տղաներից մեկն ընդհատելով նրան, ասում է, թե երգողը մեղրեցի Աստղիկ Խոնդյանն է:

Վահանյանը, փոքր-ինչ շփոթվելուց հետո, ժպտալով ասում է. **«Ես անսահման ուրախ եմ և երջանիկ, որ իմ ծննդավայրում արքայավայել ապրում, շնչում է Կոմիտասը»:**

«Մեղրիում հրաշալի ջութակ էին նվագում Դրո և Միսակ Վարդանյանները, թառ՝ Գուրգեն Չարչյանը, լավ համբավ և հեղինակություն ուներ նաև շեփորահարների խումբը»,– ոգևորությամբ պատմում էր տարեց Վահան Խաթունյանը:

1880-ական թվականներից Մեղրիում օգտագործել են սաքսոֆոն գործիքը: Այն առաջին անգամ Մեղրի են բերել Հարությունյանները:

Ձայնասփյուռ էլ օգտագործել է դպրոցի հոգաբարձու և դեղագործ Գևորգ Իսրայելյանը, ով այն բերել էր Փարիզից:

Մեղրեցիներն իրենց կուլտուրայի մասին

Կոմիտաս Վարդապետ, Երևան, 1901, դեկտեմբերի 10

Խոսելիս հպարտությամբ էին նշում, որ 1895-1896թթ., երբ Հայաստանի գրեթե շատ վայրերում չէին տեսել դաշնամուր գործիքը, իրենք բախտ ունեին օգտագործելու այն:

Մեղրեցի հարգարժան Աղանի որդին՝ Մկրտիչ Վաչյանը, ամուսնացել էր ագուլիսցի Եղիսաբեթի հետ: Վաչյանների ընտանիքին մոտ մարդիկ, մոտ 25-30 հոգի, Մեղրուց ուղևորվում են Ագուլիս՝ օժիտ-դաշնամուրը բերելու նպատակով:

Նրանցից էին՝ Աղան և Լևոն Փարսադանյանները, Հովհաննես Թումանյանը, Թևատրոս Մկրտչյանը, Հովհաննես Սեթյանը և այլք:

Զարմանալին այն է, որ օժիտի տերը՝ տիկին Եղիսաբեթը, նվագել չի իմացել: Դաշնամուրն օգտագործել են Եվրոպայում ուսանող մեղրեցի երիտասարդները, երբ արձակուրդի օրերին վերադարձել են Մեղրի: Նրանք շատ հաճախ տեղացիների հետ հավաքվել են Վաչյանների տանը, նվագել, պարել, զվարճացել: Հետագայում դաշնամուրն օգտագործել են մասնագիտական առումով:

Կուլտուրական բարձր մակարդակով են կազմակերպվել Մեղրիում բոլոր տոները: Սիրով են երգել գողթան երգերը:

Ճարտարապետական հետաքրքիր ոճով են կառուցվել Մեղրու եկեղեցիները, հին տները՝ կամարաձև դարպասներով ու պատուհաններով, պատերի մեջ կառուցված փայտյա նախշավոր պահարաններով:

Մեղրին իր պատմամշակութային արժեքներով ուսումնասիրության կարիք ունի. այն փոքրիկ Հայաստան է Հայաստանի մեջ:

Հ.Գ. «Սյունյաց երկրի» բարեկամ, ճանաչված մանկավարժ, լուսահոգի Լիլիկ Պողոսյանի հեղինակած այս հոդվածը հրապարակվում է առաջին անգամ: Հարգանք Լիլիկ Պողոսյանի հիշատակին, ով գեղեցիկ այս պատմությունը փոխանցել է սերունդներին:

23.06.2022 Թ.

ԱՆՐԱԿԱՐՈՒՄՈՒԹՅՈՒՆ

Վահրավարի ավետարանը



ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ Մեղրիի տարածաշրջանը, որը պատմական Սյունյաց աշխարհի Արևիք գավառի մասն է, թերևս ամենաքիչն է արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը: Բավական է ասել, որ Մեղրիի և հարակից բնակավայրերի գրավոր ժառանգությունը ցայսօր համալիր ուսումնասիրության նյութ չի դարձել: Այս տեսանկյունից՝ սույն հետազոտության նպատակն այդ երկրամասի միջնադարյան պատմության ուշագրավ էջերից մեկը լուսաբանելն է:

Ուսումնասիրության խնդրո առարկան Վահրավար գյուղի երբեմնի Ս. Գրիգոր Լուսավորիչ անունով հայտնի եկեղեցու հովանու ներքո՝ 1322 թ. ընդօրինակված Ավետարանն է, որն այսօր Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրական հավաքածուում է (ՄՄ 7450): Տիրանուն քահանայի պատվերով Հակոբ կրոնավորի գրչագրած Ավետարանը նկարազարդ է, ունի ինչպես գրչության, այնպես էլ հետագայում գրված հիշատակարաններ, որոնք ձեռագրի պատմության վավերագրերն են: Քննության նյութ ենք դարձրել Ավետարանի գրչական ու մանրանկարչական արվեստը, տեղից տեղ փոխադրումը, կապը հնամենի գյուղի



ու տեղի եկեղեցու հետ: Վահրավարի Ավետարանն այսօր էլ մեծ համբավ ունի ինչպես մեղրեցիների, այնպես էլ բուն վահրավարցիների շրջանում: Ավետարանի գիտական ուսումնասիրությունն առավել կմեծացնի ձեռագրի պատմագիտական-աղբյուրագիտական արժեքը:

Տաշտունի ավետարանը

ՍԵՐԳԵՅ ՋՀԱՆԳԻՐՅԱՆ

17-րդ դարի երկրորդ կեսին Արևիքի Տաշտուն գյուղում հովվություն էր անում բարգուշատցի Եսայի քահանան, ով 1661 թվականին կերտել է բավականին գեղեցիկ բոլորագրով և գունազարդ մանրանկարներով մի ավետարան, որը 18-րդ դարի սկզբում հայտնվել է Սրաշենում, իսկ ներկայումս պահպանվում է Մատենադարանում (319):

Դավիթբեկյան ազատագրական շարժման ժամանակաշրջանին և իրադարձություններին վերաբերող բավական ուշագրավ և արժեքավոր տեղեկություններ է մեզ հաղորդում Եսայի Բարգուշատցու կողմից Տաշտունում գրված ավետարանի հետագայի՝ 1726 թվականի հիշատակարանը. «Յիշատակ է կենսաբեր, փրկագործ սուրբ Աւետարանս Սրաշնեցի Անդրէասին եւ ծնողաց, հօրն՝ Պալասանին եւ մօյրն՝ Հեղինարին, եւ պապն իմ Ասլանին եւ հօրեղբայրն իմ՝ Ալիքսանին եւ կողակցին իմոյ՝ Հուրիխանին, եւ արեւշատ որդին իմոյ՝ Պալասանին: Եւա զանբիտան վերոյգրեալ Անդրէաս առայ զայս սուրբ Ավետարանս ի դառն եւ ի նեղ ժամանակիս, որ սմանլուն եկաւ առաւ յերկիրս Պարսից, եւ եղեւ աւերումն Պարսից քաղաքաց եւ գեղորէից, եւ եղեւ կերութիւն եւ սրածութիւն քրիստոնէից. եւ այսպիսի վշտապատում ժամանակիս առայ: Յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր, եւ դուք՝ յիշօղտ յիշեալք լիջիք ի Քրիստոսէ յոյսն մերմէ. ամէն: ՌՃՀԵ (1726) թվին յունվարի Ժ»1:

1726 թվականին, երբ տարածաշրջանում ընթանում էր դավիթբեկյան ազատագրական պատերազմը, և Կապան էին ներխուժել օսմանյան զորքերը, այս ավետարանը ձեռք է բերել սրաշենցի Անդրեասը: Վերջինս հավանաբար մելիքական կամ առևտրական-խոջայական ընտանիքի ներկայացուցիչ էր:

Ծանոթագրություն

Մատենադարան 319, էջ 221 բ:

«ԿԱՊԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՉՕՋԱԽՆԵՐԸ», ԵՐԵՎԱՆ 2023

ՄԱՐԱԿԱՐՈՒՄՈՒԹՅՈՒՆ

Քուջերթի ավետարանը

1678 թ.: Քուջերթ: Գրիչ՝ Յակոբ: Ստացող՝ Մովսէս Քուջերթցի: Թերթ՝ 262: Թուղթ: 15, 2X11: Երկսյուն: Բոլորգիր: Տող՝ 23: Մանրակր՝ աւետարանիչ 4, խորան 10, կխ, լգ: Կազմ՝ կտդ, մետաղյա տերունական բարձրաքանդակ զարդերով: Աստառ՝ կարմիր կտավ: Հշտկրն գրչի՝ 127 ա, 129 բ, 262 ա, հետագայի՝ պահպանակ Ա (1755 թ.):

Մեղրու եկեղեցիների նկարազարդման առանձնահատկությունները

ՔՆԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու, դոցենտ

17-18-րդ դարերում համեմատաբար բարենպաստ պայմաններ էին ստեղծվել հայ արվեստի զարգացման համար, որը նշանավորվում է ճարտարապետության ու կերպարվեստի նոր վերելքով. վերականգնվում են ասպատակությունների և բնական աղետների հետևանքով վնասված եկեղեցիներն ու վանքերը, ինչպես նաև Այրարատում, Սյունիքում, Շիրակում, Վասպուրականում, Նախճավանում, Արցախում, Պարսկահայքում կառուցվում են նոր եկեղեցիներ, հիմնադրվում վանքեր ու մենաստան-անապատներ:

Հատկանշական է այն, որ 17-րդ դարում կառուցված եկեղեցիների մեծ մասը պատկանում է գմբեթավոր բազիլիկների տիպին և հիմնականում նկարազարդված է:

Հայկական միջնադարյան որմնանկարչության զարգացման ընթացքին հետևելով՝ նկատում ենք, որ 17-19-րդ դարերի եկեղեցիների ներքին հարդարանքի համակարգում նկատելի փոփոխություններ են տեղի ունեցել՝ ինչպես թեմատիկ տեսարանների ընտրության և տեղաբաշխման, այնպես էլ դեկորատիվ հարդարանքի, այն է՝ ծաղկանկարների առատ գործածման մեջ: Նկարազարդման այդ նոր մոտեցումները ցայտուն կերպով դրսևորվում են Արևիք, Գողթն, Երնջակ գավառների և Պարսկահայքի եկեղեցիների (օրինակ՝ Մեղրու Սբ Հովհաննես և Սբ Աստվածածին, Ագուլիսի Սբ Թովմա և Սբ Քրիստափոր, Աբրակունիսի Սբ Կարապետ, Դարաշամբի Սբ Ստեփանոս և այլն) եկեղեցիների որմնանկարչության մեջ:

Թեմատիկ-պատկերագրական և ոճական առումով իրար շատ նման են Մեղրու վերոհիշյալ եկեղեցիների հարդարանքը: Փոքր թաղի Սբ Հովհաննեսը տարածաշրջանի այն բացառիկ կառույցներից է, որն ամբողջությամբ որմնազարդ է: Ըստ մասնագետների՝ նկարազարդումները կատարվել են մի քանի փուլով՝ 1700, 1793, 1866 թվականներին: Ավագ խորանի գմբեթարդը, բոլոր պատերը, երեք նավերի գլանաձև թաղերը, չորս սյուներն ու դրանք իրար կապող կամարները, որմնախորշերն ու լուսամուտների կողապատերը ծածկված են օվալաձև, ռոմբաձև ուրվագծերում ամփոփված լուսավոր կարմիր, կապույտ, կանաչ, դարչնաշագանակագույն զարդանկարներով ու խաչերով, ինչպես նաև ոլորուն բարակ ցողունների վրա աջ ու ձախ թեքված ծաղկանկարներով: Այդ զարդանկարների միջոցով ստեղծվում է պայծառ ու գունագեղ, յուրօրինակ միջավայր՝ սակավաթիվ թեմատիկ տեսարանների և սրբերի առանձին պատկերների համար:

Այստեղ և Մեծ թաղի Սբ Աստվածածնում ավագ խորանի նկարազարդումը պատկերագրական յուրօրինակ հորինվածք ունի, որն ամբողջովին տարբերվում է 10-14-րդ դարերի եկեղեցիների (Աղթամարի Սբ Խաչ, Անիի Տիգրան Հոնենցի Սբ Գրիգոր, Հաղպատի Սբ Նշան, Ախթալայի Սբ Աստվածածին և այլն) ավանդական հարդարանքից: Զարգացած միջնադարի եկեղեցիների ավագ խորանի գմբեթարդում՝ «Քրիստոս Փառքի մեջ», ավելի հաճախ՝ «Բարեխոսություն» կամ «Աստվածածինը մանկան հետ», խորանի պատի վերնամասում՝ «Հաղորդությունը», երբեմն «Ծնունդ» և «Տյառնընդառաջ» տեսարաններն են, որին հաջորդում է մարգարեների, առաքյալների, Ընդհանրական Եկեղեցու հայրերի միաֆիգուր պատկերների շարքը:

Մեղրու եկեղեցիների ավագ խորանի գմբեթարդը պատված է ծաղկանկարով, որի խորքի վերնամասում թևատարած աղավնու տեսքով Սբ Հոգու, դրա ներքևում մեծադիր չորս զարդանկար խաչի, խորանի հարավային պատի վերնամասում Սբ Գիրքը կրծքին բռնած լուսապսակով հոգևորականի, ստորին մասում՝ Սբ Ստեփանոսի, հյուսիսային պատին՝ Սբ Հովհաննեսի, խորանին հարող որմնասյուներից մեկի վրա՝ Պողոս առաքյալի, մյուսի վրա՝ Պետրոս առաքյալի պատկերներն են տեղադրված՝ խախտելով նաև պատկերների սիմետրիկ դասավորությունը (նկ. 1): Ինքնատիպ ձևավորում ունեն արևելյան կենտրոնական նավի պատերը՝ աջից զարդանկար կամարների տակ՝ ձեռքերին մեծ խաչեր, հասակով մեկ կանգնած հռիփսիմյան կույսերի, ձախից՝ նույնպիսի կամարների տակ Ավետարանը կրծքին բռնած չորս ավետարանիչների պատկերներն են՝ գլխավերևում յուրաքանչյուրի անվան մակագրությունը:

Սբ Հովհաննես եկեղեցում ավետարանական տեսարանների պատկերագրական շարքը սկսվում է հարավարևելյան ավանդատան դռան վերնամասում տեղադրված «Հարություն» ավանդական հորինվածքով, հարավային պատին՝ «Աբրահամի զոհաբերությունը», «Հովնանին ծով նետելը» (որմնախորշի վերնամասում է), «Մուտք Երուսաղեմ», «Սբ Ստեփանոսի քարկոծումը» և «Միքայել հրեշտակապետը կշեռքով», հյուսիսարևելյան ավանդատան դռան վերնամասում «Խաչելություն», պատի վրա՝ «Մկրտություն», «Աստվածամայրը մանկան հետ», «Ահեղ դատաստան» և «Սատանային կուրացնող Միքայել հրեշտակապետը» պատկերներն են: Տեսարանների ոչ ամբողջական շարքի թվարկումից արդեն պարզ է դառնում, որ այստեղ նկարազարդման ծրագրում խախտված է դրանց ընտրության և տեղաբաշխման ավանդույթը, ըստ որի՝ Հին ու Նոր Կտակարանների սյուժետային նկարները խմբավորվում են ժամանակագրական կարգով և, խորհրդաբանական բովանդակությամբ պայմանավորված, պատկերաշարում ունեն իրենց կոնկրետ տեղը:

Ազատ խմբավորում ունեն նաև գմբեթի ծանրությունը պահող քառանիստ սյուների վրա վերից վար մեկ, երկու կամ երեք շարքով

տեղադրված տեսարաններն («Ավետում», «Ադամը և Եվան դրախտում», «Աստվածածնի նինջը» և այլն) ու սրբերի պատկերները (Սբ Հովնան Ոսկեբերան, Դավիթ մարգարե, Սբ զինվոր, հայ եկեղեցու հովվապետ և այլն): Որմնասյուների ու սյուների նկարազարդման նման օրինակներ հանդիպում են դարաշրջանի այլ եկեղեցիների հարդարանքում (Գնդեվազի Սբ Աստվածածին, Մուղնու Սբ Գևորգ, Աստապատի Սբ Ստեփանոս, Ազնաբերդի Սբ Գրիգոր և այլն)՝ փաստելով այն, որ ուշ միջնադարյան հայկական որմնանկարչության մեջ ընդունված է եղել ավետարանական տեսարանները տեղադրել նաև սյուների վրա: Նկատենք, որ նախորդ շրջանի հայկական եկեղեցիների որմնասյուների, սյուների, կամարաղեղների վրա միայն սրբերի պատկերներ են նկարվել՝ հասակով մեկ կանգնած կամ մեդալիոնի մեջ՝ մինչև կուրծքը (օրինակ՝ Աղթամարի Սբ Խաչ, Անիի Տիգրան Հոնենցի Սբ Գրիգոր Լուսավորիչ, Ախթալայի Սբ Աստվածածին):

Հետաքրքիր ձևավորում ունի նաև կենտրոնական թաղի միջին հատվածը, որտեղ ծաղկանկար խորքի վրա փոքր, կտրատված եզրերով օվալաձև շրջանակներում աջից՝ Սբ Մեսրոպ Մաշտոցի և Սբ Սահակ Պարթևի, ձախից՝ Սբ Թադևոս և Սբ Բարդուղիմեոս առաքյալների փոքրադիր պատկերներն են, որոնց շուրջ, նմանատիպ շրջանակներով զարդանկարներ են: Հայ Եկեղեցու սրբերի և Հայաստանում քրիստոնեության առաջին քարոզիչների պատկերների նման խմբավորման ուրիշ օրինակ մեզ հայտնի չէ: Ուշագրավ է այն, որ բացի «Ահեղ դատաստան» տեսարանից, մյուսները բավականին փոքրածավալ հորինվածք ունեն: Պատկերագրական հիմնական կանոնը պահպանելով հանդերձ՝ երբեմն հորինվածքը ժանրային մեկնաբանություն է ստանում (օրինակ՝ ուղտերի պատկերը «Ծնունդ և մոգերի երկրպագություն» տեսարանում), երբեմն բոլորովին նոր տարբերակ է առաջարկվում («Աստվածածնի նինջը» պատկերում Մարիամի վրա գցած ծաղկավոր վերմակ է, մահճի շուրջ խմբված առաքյալների փոխարեն կանայք են), որոնցում դրսևորվում են հեղինակների ստեղծագործական երևակայությունն ու ավետարանական տեսարանների մեկնաբանման նոր մոտեցումները:

Ըստ վերջին շրջանի հետազոտությունների՝ Մեղրու Մեծ թաղի Սբ Աստվածածին եկեղեցում պահպանվել է նկարազարդման երեք շերտ. առաջինը՝ Ավագ խորանի հարավային որմնամույթի Պետրոս առաքյալի, երկրորդը՝ խորանի պատի Միքայել հրեշտակապետի (վերագրվում է Աստապատցի քահանա Աստվածատուրին), հյուսիսարևելյան սյան Սբ Գևորգի և հարավարևելյան սյան Սբ Մինասի պատկերներն են, երրորդ շերտի որմնանկարներն արվել են 1844-1848 թվականներին՝ Մանուկ Ստեփանոսցու կողմից:

Ի տարբերություն Սբ Հովհաննեսի, այստեղ նկարազարդ են միայն Ավագ խորանի գմբեթարդը, արևելյան թաղը, գմբեթակիր չորս «Т»-աձև սյուները, դրանք իրար կապող կամարները, առագաստները և հարավային պատը: Սպիտակ են ներկված բարձր, լուսավոր գմբեթը, արևմտյան թաղը, կողային նավերի պատերը, սյուների ստորին հատվածները, ինչի շնորհիվ ավելի է շեշտադրվում սյուժետային և դեկորատիվ ծաղիկ-տերևային մոտիվներով որմնանկարների տեղաբաշխումը՝ աղոթասրահի կենտրոնից դեպի Ավագ խորան: Ինչպես Սբ Հովհաննես եկեղեցում, այստեղ ևս խորանին հարող որմնասյուներից հարավայինի վրա Պետրոս առաքյալի, հյուսիսայինի վրա՝ Պողոս առաքյալի, իսկ արևելյան թաղի հարավային պատի վրա՝ ծաղկանկար կամարների տակ հռիփսիմյան չորս կույսերի, հյուսիսայինում՝ չորս ավետարանիչների պատկերներն են՝ անվան մակագրությամբ: Այս ընդհանրությունները օրինաչափ են նույն վայրում և ժամանակաշրջանում կառուցված եկեղեցիների հարդարանքի համար և դրսևորում են բնակավայրին բնորոշ պատկերագրական ու ոճական գծերը:

Սբ Աստվածածին եկեղեցում՝ բովանդակությամբ իրար շարունակություն կազմող ավանդական պատկերագրութամբ թեմատիկ տեսարաններն ու սրբերի պատկերները հիմնականում տեղադրված են սյուների չորս երեսների վրա, երկու շարքով, իրար տակ, և դրանց մեծ մասը նկարվել է 1844-1848 թվականներին, ինչը փաստում է յուրաքանչյուրի հիշատակային մակագրությունը: Իրար հետ են խմբավորված հեծյալ Սբ Մինասի պատկերն ու «Գրիգոր Լուսավորիչը արքայական ընտանիքի հետ» տեսարանը, նաև՝ «Ադամը և Եվան դրախտում» և «Երդմնազանցություն», նաև՝ «Մկրտություն» և «Ծնունդ» սյուժետային հորինվածքները: Թեմատիկ տեսարանները պատկերված են աղոթասրահի հարավարևելյան և հարավային պատերի վրա. ավանդատան դռան վերնամասում՝ «Աբրահամի զոհաբերությունը» (1846), հարավային պատին՝ ծաղկազարդ լայն եզրագոտիով ամփոփված «Ահեղ դատաստան» (1846) տեսարաններն են և մեծադիր «Սբ Ստեփանոս» (1848) պատկերը:

Ուշագրավ հորինվածք ունեն Հայ եկեղեցու պատմությանը վերաբերող «Գրիգոր Լուսավորիչը արքայական ընտանիքի հետ» տեսարանը և «Աստվածածնի նինջի» լայն եզրագոտու վրայի օվալաձև շրջանակներում ներկայացված Հայ եկեղեցու հայրապետների պատկերաշարը, որոնցում հեղինակը ստեղծագործական ազատ մոտեցում է դրսևորվում տեսարանի հոգևոր բովանդակության ու կերպարների մեկնաբանման մեջ: Բարդ հորինվածքով ու եռամաս կառուցվածքով «Ահեղ դատաստան» որմնանկարի վերնամասում «Բարեխոսություն» տեսարանն է, միջին մասում՝ առաքյալների դասի, Քրիստոսի երկրորդ գալուստը շեփորահարող հրեշտակների և մեռելների մեղքերը կշռող Միքայել հրեշտակապետի պատկերներն են, ստորին մասում՝ աջից՝ Դրախտն է՝ արդարների խմբով, ձախից՝ Դժոխքը: Վերջինս, ինչպես Սբ Հովհաննեսում, պատկերված է ծովային հրեշ Լևիթանի կերպարանքով, ում կրակի բոցերով բաց երախում սատանաների և մերկ մարդկանց փոքր չափերով կերպարանքներ են: Նկատվում է, որ հեղինակները ծանոթ են եվրոպական արվեստի այդ թեմայով աշխատանքներին, որոնց պատկերագրական և գեղարվեստական արտահայտչամիջոցներն օգտագործելով՝ ստեղծել են խորհրդանշական հարուստ բովանդակությամբ ու տպավորիչ որմնանկարներ:

Գունագեղ, դեկորատիվ ոճավորումով զարդանկարների առատ գործածության առումով Մեղրու եկեղեցիների հարդարանքին նմանություն ունեն Գողթն, Երնջակ, Նախճավան գավառների եկեղեցիների նկարազարդումները, որոնցում կիրառվում են նաև գմբեթի, ավագ խորանի պատի և սյուների վրա սակավաթիվ ֆիգուրատիվ պատկերների տեղադրման նույն սկզբունքները: Եկեղեցիների և դրանց հարդարանքի մասին այժմ պատկերացում կազմելու համար ստիպված հիմնվում ենք մինչև 1980-ական թվականները հրատարակված գրականության և պահպանված լուսանկարների վրա, քանի որ արդեն 1990-ականներին հոգևոր ու մշակութային ժառանգության հետքերը տարածաշրջանում ամբողջովին ոչնչացվել են:

17-րդ դարում այդ գավառների հայ բնակչությունը ունեցել է հոգևոր, մշակութային անմիջական

ՄԵՂՐԻԻ ՓՈՔՐ ԹԱՂԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ «ԱՀԵՂ ԴԱՏԱՍՏԱՆ» ՈՐՄՆԱՆԿԱՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու

«Ահեղ դատաստան»-ը քրիստոնեական արվեստի ամենաբարդ և նշանակալի պատկերագրական տեսարաններից մեկն է և իր ինքնատիպ լուծումն է գտել նաև հայկական եկեղեցական արվեստում: Հորինվածքային առումով բարդ ու բազմատարր թեմատիկ կառուցվածքը կերպարվեստում անցել է ձևավորման երկար ու բարդ ուղի՝ ենթարկվելով տարբեր ժամանակներում այդ ավետարանական սյուժեի հոգևոր-փիլիսոփայական մտքի ձևակերտմանը: 17-րդ դարում կառուցված Մեղրիի Փոքր թաղի Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու[1] ներքին որմնազարդումներից իր ուրույն գեղագիտական հատկանիշներով աչքի է ընկնում «Ահեղ դատաստան» մեծադիր որմնանկարչական հորինվածքը, որն ինչպես եկեղեցական սրահի ավետարանական մյուս տեսարանները կատարված է ծաղկազարդ կամարակապ պատկերադաշտում: Տեսարանն ըստ ամենայնի ներկայացնում է Քրիստոսի երկրորդ գալուստը և նրա արդար դատաստանը մարդկանց նկատմամբ: Եկեղեցական պատկերագրության ձևավորման հիմքում են Մաթևոսի Ավետարանի (ԺԶ 27, ԻԴ 25-31), Գործք Առաքելոցի (Ա.11), ինչպես նաև Հովհաննեսի Հայտնության (7-8, ԻԲ 12-13)[2] համապատասխան հիշատակությունները: «Վերջին դատաստան»-ի կամ «Ահեղ դատաստան»-ի պատկերագրությունը քրիստոնեական արվեստում լայն ընդունելություն է գտել 10-րդ դարից՝ պայմանավորված աշխարհի կործանման քրիստոնեական-հոռետեսական կանխագուշակումներով: Թեմայի պատկերումը լայն տարածում է գտել թե բյուզանդական[3], թե եվրոպական[4] արվեստներում[5]: Հայկական կոթողային արվեստում թեմայի պատկերման վաղ օրինակներից են Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու[6], Տաթևի Պողոս-Պետրոս եկեղեցու որմնանկարչական օրինակները[7]: Ս.Մնացականյանը կարծում էր, որ հայկական որմնանկարչության առաջին նմուշները ընդհանրապես հնագույններից են քրիստոնեական պատկերագրության մեջ[8]: Նույն ժամանակաշրջանի են նաև վրացական արվեստի համանուն պատկերները[9]: Մանրանկարչության մեջ այս թեման մուտք է գործել 13-14 դարերում[10]: Ս. Տեր-Ներսիսյանը հայկական մանրանկարչության մեջ «Վերջին դատաստան»-ի առաջին նմուշը համարում է 1262 թվականի Թորոս Ռոսլինի պատկերազարդած Ավետարանի օրինակը (ԱՄՆ, Բալթիմորի արվեստի թանգարանում): Բուն Հայաստանի ձեռագրում «Ահեղ դատաստան»-ի թեման որոշակի մեկնաբանություն է ստացել նաև մանրանկարիչ Ավագի ստեղծագործության մեջ: Սյուժեի նախահիմքի համաձայն Քրիստոսն իր դատաստանով բաժանելու է արդարներին մեղավորներից՝ հատուցելով յուրաքանչյուրին ըստ իր գործի, վարձատրելով իր ճշմարիտ հավատացյալներին, պատժելով չհավատացողներին և ապստամբներին: Ըստ որոշ ուսումնասիրողների այս տեսարանը հայկական մշակույթում հիմնականում հանդիպում է բյուզանդական պատկերագրությանը հատուկ հատկանիշներով, որի համաձայն Քրիստոսը ներկայացվում է ակնակուռ կամ չորեքկերպյան գահին բազմած

շփումներ, ուստի հնարավոր է, որ նույն վարպետները մասնակցել են տարածաշրջանի պատմամշակութային շենքերի կառուցմանը և նկարազարդմանը: Հայտնի է, որ եկեղեցիների մեծ մասի նկարազարդումներն իրականացրել են Նաղաշ Հովնաթանը, նրա որդիներ՝ Հակոբ ու Հարություն Հովնաթանյանները և վերջիններիս աշակերտները, ուստի ոճական և գեղարվեստական միասնական մոտեցումն անխուսափելի է: Այդուհանդերձ նկատվում են հարդարանքի ընդհանուր գծերն ու տարբերությունները: Գողթն, Երնջակ, Նախճավան գավառների, Պարսկահայքի եկեղեցիների (Ագուլիսի Սբ Թովմա և Սբ Քրիստափոր, Ապրակունիսի Սբ Կարապետ, Շոռոթի Սբ Հակոբ և Սբ Աստվածածին, Աստապատի Սբ Ստեփանոս, Ազնաբերդի Սբ Գրիգոր, Դարաշամբի Սբ Ստեփանոս և այլն) հարդարանքը բացառապես կազմված է նրբահյուս ու գունագեղ ծաղկանկարներից և հազվադեպ խորանի պատի և սյուների վրա նկարված առաքյալների, սրբերի միաֆիգուր պատկերներից:

Մեղրու և տարածաշրջանի եկեղեցիների որմնանկարների թեմատիկ ու ոճական ընդհանրությունները, գմբեթի, պատկերի, սյուների վրա սյուժետային նկարների, սրբերի պատկերների, առատորեն օգտագործվող դեկորատիվ զարդանկարների տեղադրման նոր մոտեցումները վկայում են պատկերագրական և գեղարվեստական տեղական ավանդույթի գոյությունը, ինչպես նաև գեղագիտական նոր ընկալումները, որոնք ձևավորել են ինքնատիպ նկարագիր ունեցող և հատկապես այդ վայրին բնորոշ արվեստ:

իբրև դատավոր[11]: Իսկ օրինակ Նոր Ջուղայի Սբ Մինաս և Սբ Ամենափրկիչ եկեղեցիների որմնանկարներում ներկայացված է Քրիստոսը ծիածանին վեհորեն բազմած[12]:

Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու «Ահեղ դատաստան» հորինվածքը կառուցված է պարզ հիմնապաստառ հանդիսացող հետնախորքի վրա պատկերագոտիների բաժանմամբ: Հորինվածքը ստեղծված է երևակայական միջավայրի պատկերավորմամբ: Հորինվածքում ընդգծված գլխավոր կերպարի՝ Հիսուսի հարևանությամբ, ազատ պատկերադաշտի երկու կողմում պատկերված են Տիրամայրն ու Հովհաննեսը՝ Բարեխոսության «Դեհիսիսի» տեսարանում[13]: «Դեհիսիսի» պատկերագրությունը հայ արվեստում, թե՛ մանրանկարչության և թե՛ որմնանկարչության մեջ լայն տարածում է գտել: Քրիստոսի երկու կողմից վերին գոտում պատկերված են հրեշտակները, իսկ երկրորդ պատկերագոտին զբաղեցնում են հորինվածքի աջ ու ձախ կողմում վեցական աթոռներին բազմած առաքյալները: Երրորդ պատկերագոտում բուն դատաստանի տեսարանն է՝ Միքայել հրեշտակապետի գլխավորությամբ հոգիներ կշռելու խորհրդաբանական տեսարանը[14]: Միքայելի թիկունքում երկու շարքով կանգնած են մեռյալները, որոնք դատելով լուսապսակների բացակայությունից՝ իրենց հոգու կշռման սպասման դիրքում են: Կերպարների հագուստների մշակումները գծազարդային են, հակադիր գունային համադրությունները նպաստում են պատկերաձևերի արտահայտչականությանը: Դիմային հատկանիշներն օժտված են անհատական մեկնաբանությամբ: Ներկապնակը զուսպ է, ենթարկվում է գծի տրամաբանությանը, դրանով թերևս նմանվելով Վասպուրականի մանրանկարչության դպրոցին հատուկ նկարելաոճին: Վասպուրականյան որմնանկարներում գրավիչ տարրերից մեկը գույնն է, մաքուր հարթություններով դրված հնչեղ գունաշարը հիմնականում կարմիր, կապույտ, շագանակագույն և կանաչ, որը ստեղծում է հուզական տպավորություն, անգամ անվարժ գծանկարված պատկերներին հաղորդելով հոգեմոտ տրամադրություն[15]: Բացի դա, Վասպուրականի մանրանկարչության գունային կառուցվածքի ամենաբնորոշ կողմերից մեկը տաք ու սառը գուներանգների համաչափ համադրությունն է՝ որոշակիորեն եզրագծված շագանակագույնով: Գունային այս համահնչունության եղանակն ամենայն հավանականությամբ բխում է հայկական ժողովրդական արվեստի հնամենի ավանդույթներից: Հորինվածքի ստորին աջ անկյունում կրակային Դժոխքն է, որտեղ երախը բաց հրեշային կերպարը ներկայացված է հավիտենական տանջանքների դատապարտված մեղավոր հոգիները խժռելու պատրաստ դիրքում: Լևիաթանի նման պատկերագրությունը հայտնի է արևմտաեվրոպական արվեստի տարբեր նմուշներից[16]: «Ահեղ դատաստան»-ի պատկերագրության պարտադիր տարրերից մեկը մեռյալների հարության տեսարանն է ըստ Հովհաննեսի Հայտնության (Ի 11-15): Թեման աշխուժացնում է որմնանկարի ստորին հատվածում մի մերկ ֆիգուր, որը փոխակերպված դուրս է գալիս գետնից կամ գերեզմանից: Այդ ընթացքը առավել շեշտված է օրինակ Նոր Ջուղայի Սբ Մինաս եկեղեցու համանուն տեսարանում: Բացակայում է դրախտի հատվածը: Արդար հոգիներն ըստ երևույթին բարձրանում են ամպային թունելով դեպի երկնային թագավորություն: Միջնադարյան արվեստում սովորաբար Միքայել հրեշտակապետը պատկերվել է երկու հիմնական տարբերակով՝ սրով կամ նիզակով զինված չար ուժերի դեմ պայքարի կամ կշեռքով հանգուցյալների հոգիների կշռման գործողության մեջ[17]: Հոգիների կշռումը կամ

Պսիխոստազիսը հանդիսանում է թեմայի հիմնական դրվագներից մեկը, հաճախ պատկերվել է նաև որպես առանձին տեսարան:

Մեղրիի Փոքր թաղի եկեղեցու պատկերագրությունը ոճական առումով տարբերվում է թե՛ եկեղեցու այլ ժամանակային շերտերի որմնազարդումներից և թե՛ Մեղրիի այլ եկեղեցիների որմնանկարների ոճից: Ժամանակի ընթացքում վնասված որմնանկարները ժամանակին ներկայացվել են որպես 17-րդ դարում կատարված աշխատանք[18]: Հետագա վերականգնումների արդյունքում պարզվել է, որ եկեղեցում առկա են ամենաքիչը երեք շրջանի որմնանկարչական շերտեր (1700, 1793 և 1866 թթ.)[19]: Քննարկված հորինվածքն իր գեղարվեստական առանձնահատկություններով, ինչպիսիք են հորինվածքի կառուցվածքը և պատկերատիպերը էապես տարբերվում է նույն եկեղեցում Աստվածատուր Աստապատցու ձեռամբ 1793 թ. կատարված չորս այլ որմնանկարներից (Պետրոս և Պողոս առաքյալների պատկերները ավագ խորանի հյուսիսային և հարավային մույթերին, Հովհաննես Մկրտչի պատկերն ավագ խորանի հյուսիսային, և Սուրբ Ստեփանոս նախավկայի պատկերն ավագ խորանի հարավային կողմերում)[20]: Ամպակույտի ձևից դատելով կարելի է կարծել, որ որմնանկարի հեղինակը ծանոթ է եղել արևմտաեվրոպական արվեստի համաժամանակյա միտումներին, ինչպես նաև հովնաթանյանական ստեղծագործությունների ոճական առանձնահատկություններին: Հաշվի առնելով, որ Նաղաշ Հովնաթանի հայրը (ըստ որոշ ուսումնասիրողների) եղել է Տեր Յոհանը՝ շոռոթեցի նկարիչ ու մանրանկարիչ, ապա հասկանալի է դառնում, որ մանրանկարչական որոշակի հնարքները պետք է որ ծանոթ լինեին ընտանիքի այլ նկարիչներին ևս: Հայտնի է նաև, որ նկարիչներ Հակոբը և Հարությունը ևս ծաղկել են ձեռագրեր:

Ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ, «Ահեղ դատաստան» որմնանկարում առկա են հովնաթանյանական դպրոցի հատկանիշներ՝ համեմված վասպուրականյան ձեռագրային արվեստի առանձնահատկություններով:

Ծանոթագրություններ

Եկեղեցու մասին տես Հասրաթյան Մ., Մեղրու շրջանի հուշարձանները, Երևան, Հայաստան, 1987, էջ 14:

Նոր Կտակարան, Արեւելահայերէն նոր թարգմանութիւն համեմատութեամբ յունարէն բնագրերի, Էջմիածին, 1975, էջ 49, 73, 666, 708:

Покровский Н., Страшный суд в памятниках византийского и русского искусства, Труды VI Археологического съезда в Одессе 1884 г., 3, Одесса, 1887, с. 285–381.

Մասնավորապես XII-XIII դարերում հարդարում էր ֆրանսիական տաճարների արևմտյան ճակատները: Нессельштраус Ц., Искусство Западной Европы в средние века (Очерки истории и теории изобразительных искусств) Москва, 1964, с. 182-187.

Այդ հուշարձաններում դժոխքին առընչվող թեմաները, այդ թվում նաև «Ահեղ Դատաստանի» տեսարանը վարպետները ներկայացնում էին արևմտյան պատին: Նույնը նաև հայկական հուշարձաններում էր, բացառություններից են Աղթամարի Սուրբ Խաչ և Պողոս-Պետրոս եկեղեցիների որմնանկարները: Thierry N., Les peintures de l'Eglise de la Sainte-Croix d'Aghtamar (915–921), The Second International Symposium on Armenian Art, Collection of reports, Vol. III, Yerevan, 1978, p. 182.

Der-Nersessian S., Aght'amar Church of the Holy Cross, Harvard, 1965, pp. 47–48; Thierry N., Les peintures de l'église de la Saint Croix d'Aghtamar, p. 187.

Der-Nersessian S., L'Art Arménien, Paris, 1977, pp. 93-96, Մանուկյան Ս., «Տաթեւի որմնանկարները (930 թ.) եւ արեւմտաքրիստոնէական վաղ միջնադարեան արուեստը», Բազմավէպ, թիւ 1-4, 2006, էջ 298-299, Մանուկյան Ս., «Միջնադարյան Հայաստանի կոթողային գեղանկարչությունը», Հայկական որմնանկարչություն, Գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, Երևան, 2019, էջ 37-38:

Մնացականյան Ս., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 216:

Амиранашвили Ш., История грузинского искусства, М., 1963, стр. 163.

Արվեստաբան Ի. Դրմաբյանը դա համարում է բավական ուշ: Տե՛ս այդ մասին Հակոբ Ջուղայեցու մանրանկարների պատկերագրությունը, Բանբեր Մատենադարանի, 10, Երևան, 1971, էջ 172:

Չուգասզյան Ս., Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի «Ահեղ Դատաստան» տեսարանը և դրա զուգահեռները հայ և համաշխարհային արվեստում, Բանբեր Մատենադարանի, 2021, 31, էջ 200:

Холл Д., Словарь сюжетов и символов в искусстве, Москва, 1996, с. 53.

Միջնադարյան արվեստում լայնորեն տարածում ստացած «Բարեխոսություն» (Դեիսուս)-ը՝ մարդկանց մեղքերի քավության համար խնդրելու թեման է: Հայ արվեստում այն ներկայացնող առաջին օրինակներից մեկը հանդիպում է 11-րդ դարի Տրապիզոնի Ավետարանում (Վենետիկ, 1400/108):

Հոգիների կշռումը անտիկ առասպելաբանության մեջ Մերկուրիուսի գործառույթներից մեկն էր, որը այս և մի քանի այլ առումներով, ս. Միքայելի հեթանոսական նախատիպն է, Холл Д., նշվ. աշխ. էջ 537:

Այս մասին տես Հակոբյան Հ., Վասպուրականի մանրանկարչությունը, Գիրք Բ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1982, էջ 61:

Մեղրիի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին 17-րդ դարում է կառուցվել, ապա որմնանկարներով է ծածկվել առնվազն երկու անգամ ՝ 1745 և 1793 թվականներին: Տե՛ս Ավետիսյան Ա., «Մեղրիի Անապաստանաց վանքի որմնանկարները», ԼՀԳ, 2019, N 3, էջ 220-230:

Hall J ., Dictionary of Subjects and Symbols in Art. New York, 1974, p. 208.

Եկեղեցու մասին տես Հասրաթյան Մ., Մեղրու շրջանի հուշարձանները, Երևան, Հայաստան, 1987, էջ 14:

Ավետիսյան Ա., Մեղրու Փոքր թաղի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարների 2017-2019 թթ. ուսումնասիրման և վերականգնման աշխատանքները, Հուշարձան տարեգիրք, ԺԵ, Հուշարձան հրատարակչություն, Երևան, 2020, էջ 9:

Ավետիսյան Ա., Աստվածատուր Աստապատցի. նոր անուն XVIII դարի հայ որմնանկարչության ասպարեզում, Պատմաբանասիրական հանդես, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2019, 2 (211), էջ 85:

ՈՐՄՆԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Մեղրիի Անապաստանաց վանքի որմնանկարները

ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու

Ներածություն

Մեղրիի Մեծ թաղի հյուսիսարևմտյան հատվածում է գտնվում դեռևս XIII դարից հիշատակված Անապաստանաց վանքը (Մեղրիի վանք)[1], որից մնացել են միայն XVII դարում կառուցված Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին և կիսաքանդ նախասրահ-գավիթը:

Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին Սյունիքում XVII դարում կառուցված հատուկենտ գմբեթավոր եկեղեցիներից է: Հորինվածքով այն գմբեթավոր բազիլիկ տիպի կառույց է՝ աղյուսաշեն գմբեթով, չորս գմբեթակիր մույթերով և ավագ խորանին կից երկու ավանդատներով[2]: Ճարտարապետության տեսանկյունից լուսաբանման կարիք չունեցող այս եկեղեցում առկա են բավականին ուշագրավ որմնանկարներ, որոնցից մի քանիսը երբևէ գիտական ուսումնասիրման առարկա չեն հանդիսացել:

Եկեղեցու ներսը որմնանկարվել է ամենաքիչը երկու անգամ՝ 1745 և 1793 թվականներին: 1745 թ. շերտից պահպանվել են անհայտ սրբի պատկերն ու ծաղկատերևային զարդամոտիվները ավագ խորանում, երկու սուրբ ձիավորների պատկերները հարավարևելյան մույթի հյուսիսային և հյուսիսարևելյան մույթի հարավային երեսներին, 1793 թ. շերտից՝ Միքայել հրեշտակապետի երկու պատկերները ավագ խորանի հյուսիսակողմյան և հարավակողմյան որմնամույթերի արևմտյան երեսներին:

Մույթերին պատկերված սուրբ ձիավորների երկու պատկերներն էլ բավական մաշված վիճակում են: Հյուսիսարևելյան մույթի ձիավորը **շ**ագանակագույն ձիով է, աջ ձեռքով բռնել է գավազան, ձախով՝ ձիու սանձը: Հագին մոխրաշագանակագույն զգեստ է: Պատկերի հետնախորքը երկնագույն է, շրջանակված է կապտավուն և շագանակագույն ծաղիկներով և տերևներով եզրագոտիով: Ստորին հատվածի սևաներկ արձանագրությունից կարդացվում են միայն «ՅԾ» տառերը («ՅԻԾԱՏԱԿԷ» բառից): Հարավարևելյան մույթի ձիավորի հագին նշմարվում է կարմրավուն թիկնոցը: Հեծել է մոխրագույն ձի, ձեռքին երկար նիզակ է: Նույնպիսի երկնագույն հետնախորք ու եզրագոտի առկա են նաև այստեղ:

Ավագ խորանի հյուսիսային կողմում դարձյալ խիստ մաշված վիճակում պահպանվել է ամբողջ հասակով պատկերված մի սրբի պատկեր**:** Այն երկար մոխրագույն մորուքով է, հագին՝ եպիսկոպոսական հանդերձներ՝ կարմրավուն խույր (թագ), շուրջառ, կապույտ եմիփորոն և մոխրագույն շապիկ: Որմնանկարը շրջանակված է կապույտ և շագանակագույն ծաղիկներ պարունակող նույն եզրագոտիով, որն առկա է սուրբ ձիավորների որմնանկարներում: Ստորին մասում պահպանվել են սևաներկ արձանագրության մնացորդները (հրապարակվում է առաջին անգամ)[3].

Վերծանությունը.

[ՅԻԾԱՏԱ]ԿԷ [Պ]ԱՏԿԵՐՍ Տ[Է]Ր ՄԿՐՏԻ[Չ] ԱԲԵ/
[ՂԱՅԻՆ] [Ռ]ԵՂՌ (1745 - Ա.Ա.) ԹՎԻՆ ՄԱՅԻՍԻ ...

Արձանագրությունից ներքև տեղ գտած պատկերը ներկայացնում է մի ծաղկեփունջ, որից էլ ներքև, արդեն բեմի հատակին կից, մակերեսը ծածկված է շախմատաձև դասավորված սև և սպիտակ վանդակներով: Նույնպիսի ծաղկեփնջային պատկեր և վանդակներով հատված էլ պատկերված է ավագ խորանի հանդիպակաց՝ հարավային կողմում:

Ավագ խորանում, որմնախորշերի երկու շարքերը բաժանող քիվի վրա պահպանվել են նաև զարդագոտու որոշ հատվածներ. կարմրավուն հետնախորքի վրա տեսնում ենք իրար հաջորդող մեծ երկնագույն լոտոս ծաղիկներ և դեպի վերջիններս թեքված երկարավուն, մանգաղաձև, սղոցաեզր տերևներ, որոնց կցված են ավելի փոքր չափսի երկնագույն ծաղիկներ: Այս զարդամոտիվների կիրառումը արվեստաբանության մեջ հայտնի է պայմանական «սազային ոճ» անվանումով[4] և հայ որմնանկարչության մեջ բնորոշ է հիմնականում Հովնաթանյան նկարիչներին: Մաղարդավանքի Սբ Ստեփանոս եկեղեցու արևմտյան ավանդատների կամարների և Էջմիածնի Մայր տաճարի «Տրդատ, Աշխեն և Խոսրովդուխտ» խմբանկարի զարդագոտիներում, որոնք վերագրվում են Նաղաշ Հովնաթանին, արդեն իսկ հանդիպում են սազ-տերևներն ու նրանց կցված ծաղիկները[5]: Հետագա տասնամյակներում Նաղաշի որդիների՝ Հակոբի և Հարությունի որմնանկարներում այս զարդամոտիվը որոշակի փոփոխություններ է կրում. որոշ դեպքերում տերևին կցված փոքր ծաղիկն առանձնանում է, ինչպես, օրինակ, Աբրակունիսի Սբ Կարապետ եկեղեցում, որոշ դեպքերում էլ տերևը «բաժակի» միջից է դուրս գալիս, ինչպես տեսնում ենք Էջմիածնի հին վեհարանում: Վերջին ձևին են պատկանում նաև Անապաստանաց վանքի վերոնշյալ որմնանկարի զարդամոտիվները, որտեղ հստակ երևում են սազտերևների «բաժակները»: Ժամանակային առումով ևս 1745 թվականը համապատասխանում է Հակոբ և Հարություն Հովնաթանյանների ստեղծագործության ակտիվ շրջանին, այնպես որ կարելի է ենթադրել, որ Անապաստանաց վանքի հին շերտի որմնանկարները ևս ստեղծել են նրանք[6]:

Անկախ 1745 թ. որմնանկարների հեղինակի ով լինելուց, կարող ենք փաստել, որ նույն հեղինակը նույն թվականին աշխատել է նաև Մեղրիի Մեծ թաղի Սբ Աստվածածին եկեղեցում, մասնավորապես նրա վրձնին է պատկանում ավագ խորանի հարավակողմյան որմնամույթի Պետրոս առաքյալի պատկերը: Այստեղ քիվին տեսնում ենք լոտոսներով և սազ-ծաղիկներով նույն զարդագոտին, որը Անապաստանաց վանքի ավագ խորանում է, իսկ Պողոս առաքյալի

պատկերը շրջանակված է նույն զարդագոտիով, ինչ Անապաստանաց վանքի սուրբ ձիավորների դեպքում:

Պատկերի ստորին հատվածում պահպանվել է մաշված սևաներկ արձանագրությունը. «[ՅԻ]Շ[Ա]Տ[Ա]ԿԷ ՊԱՏԿԵՐՍ ...ՈՐԴԻ ՕՎԱՆԷՍԻՆ/ ...ԻՆ ԹՎ[ԻՆ] ՌՃՂԴ (1745 - Ա.Ա.) ԻՆ...»:

Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարներից երկուսը, ինչպես նշեցինք, 1793 թ. գործեր են: Երկուսի հեղինակն էլ աստապատցի Աստվածատուր քահանան է, որի որմնանկարներն առկա են նաև Մեղրիի Մեծ թաղի Սբ Աստվածածին, Փոքր թաղի Սբ Հովհաննես Մկրտիչ և Կարճևան գյուղի Սբ Աստվածածին եկեղեցիներում[7]: Նկարչի անունը պահպանվել է միայն Կարճևանի եկեղեցում, սակայն պատկերների ոճը, գույների հարազատությունը, արձանագրությունների ձեռագիրը և թվագրությունն աներկբա փաստում են հեղինակի նույնության մասին:

Ավագ խորանի հյուսիսակողմյան որմնամույթին Միքայել հրեշտակապետը պատկերված է հանգուցյալի վրա կանգնած, վերջինիս հոգին խորհրդանշող փոքրիկ մարդկային ֆիգուրը աջ ձեռքում պահած[8]: Միքայելի զգեստն այստեղ կարմրավուն է, թևերը՝ մոխրագույն՝ ի հակադրություն հարավակողմյան որմնամույթի որմնանկարի: Վերին հատվածում պահպանվել է մաշված արձանագրությունը[9].

Վերծանությունը.

ՅԻՇԱՏԱԿԷ ՊԱ[Տ]ԿԵՐՍ ՓՈ /ՔՐ ԹԱՂՑԻ· Տ[Է]Ր ՅՈՀԱ /
ՆՆԷՍԻ ՈՐԴ[Ի] ՅՈՀԱՆՆԷՍ/ՎԱՐԴԱՊԷՏ ԹԻ[ԻՆ] ՌՄԽԲ (1793 -Ա.Ա.)

Ավագ խորանի հարավակողմյան որմնամույթին Միքայել հրեշտակապետը պատկերված է որպես մարդկանց հոգիները կշռող հրեշտակ, ձեռքին՝ երկարավուն լծակով կշեռք: Որմնանկարի հետնախորքը սպիտակ է, ստորին հատվածում՝ շախմատաձև սև և կարմիր վանդակներով: Միքայելի թևերը կարմիր են, լուսապսակն ու զգեստը՝ մոխրականաչավուն: Ծաղկատերևային նախշազարդերով եզրագոտին վերին հատվածում պսակվում է ձևավորված կամարով: Որմնանկարի ստորին հատվածում (հրեշտակի պատկերի և վանդակավոր հատվածի միջև) պահպանվել է մաշված սևաներկ արձանագրությունը[10].

Վերծանությունը.

.... /[Յ]ԻՇԱ[Տ]ԱԿԷ[Պ]ԱՏԿԵՐՍ ՓՈՔ[Ր] ԹԱՂՑԻ /
[ՀԱՆ]ԳՈՒՑԵԱԼ Տ[Է]Ր ՅՈՀԱՆՆԷՍԻ ՈՐԴԻ ՅՈՀԱՆՆԷՍ[ԻՆ] /
ԹԻ[ԻՆ] ՌՄԽԲ (1793 - Ա.Ա.)

Աստապատցու երկու որմնանկարներում էլ որպես շրջանակ՝ ծառայում է մոխրաերկնագույն զանգակի (?), կարմրավուն վարդի և կարմրավուն կակաչի հաջորդական մոտիվներից կազմված եզրագոտին (նկ. 5), որին հանդիպում ենք նաև Մեղրիի Փոքր թաղի Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու Պողոս և Պետրոս առաքյալների որմնանկարներում:

Ինչ վերաբերում է որմնանկարչական հիմնաշերտերին կամ հիմնասվաղներին, ապա եկեղեցու բոլոր որմնանկարներն արված են երկշերտ հիմքի վրա: Ստորին շերտը հողադարմանային հաստ հիմնաշերտ է, որը որոշ տեղերում հասնում է մինչև մի քանի սմ հաստության: Տեղական հողի և հարդի խառնուրդ այս շաղախը բավական հաճախ է պատահում նաև Մեղրիի հին բնակելի տներում: Վերին շերտը, որի վրա և արված է որմնանկարը, 1-2 մմ հաստության գիպսի և (կամ) կավի սպիտակավուն խառնուրդ է:

Անապաստանաց վանքի որմնանկարները ուշագրավ պատկեր են ներկայացնում XVIII դարի հայ որմնանկարչության համատեքստում:



Արվեստի բարձրարժեք նմուշներ չլինելով հանդերձ՝ դրանք, այնուամենայնիվ, որոշակիորեն լույս են սփռում ուսումնասիրության կարոտ XVIII դարի հայ որմնանկարչության վրա: Արժանահիշատակ է, որ եկեղեցու՝ 2017-2019 թթ. վերականգնման աշխատանքների ընթացքում (վերականգնող ճարտարապետ՝ Ստեփան Նալբանդյան) մաքրվեցին և ամրակայվեցին նաև որմնանկարները (խմբի ղեկավար՝ Մելինե Մկրտիչյան), ինչով, կարելի է ասել՝ կանխվեց դրանց հետագա քայքայումը:

Գրականություն

Աբրահամ կաթողիկոս Կրետացի. 1870, Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ, տպարան Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, Դ+129 էջ:

Ակինեան Ն., 1911, Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովնաթանեանք եւ իրենց բանաստեղծական եւ նկարչական աշխատութիւնք, Վիեննա, Մխիթարեան տպարան, 67 էջ:

Այվազյան Ա., 1998, Նախիջևանի որմնանկարչական արվեստը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 112 էջ:

Ավետիսյան Ա., 2019, Աստվածատուր Աստապատցի. նոր անուն XVIII դարի հայ որմնանկարչության ասպարեզում, Պատմաբանասիրական հանդես, № 2, էջ 78-92:

Գարեգին Ա. Կաթողիկոս, 1951, Էջմիածնի տաճարի նկարազարդումն ու ծաղկազարդումը ԺԷ-ԺԸ դարերում/ Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան», պրակ Ե, Անթիլիաս, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 63 էջ:

Լևոնյան Գ., 1938, Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», Երևան, № 2, էջ 24-29, № 4, էջ 51-55:

Հարությունյան Վ., 1992, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, «Լույս» հրատ., 631 էջ:

Հասրաթյան Մ., 1987, Մեղրու շրջանի հուշարձանները, Երևան, «Հայաստան», 72 էջ:

Հասրաթյան Մ., 1973, Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 190 էջ:

Ղազարյան Մ., 1974, Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 284 էջ:

Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան, 1893, Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, Թ, հրատ. նշված չէ, 563 էջ:

Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 13:

Մարտիկյան Ե., 1971, Հայկական կերպարվեստի պատմություն, XVII-XIX դդ., գիրք Ա, Երևան, «Հայաստան» հրատ., 220 էջ:

Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանց, 1904, Նկարագիր սուրբ Կարապետի Վանից Երնջակայ

Նկ. 4. Ս. Հովհաննես Մկրտիչ Եկեղեցու Միջանցքի հրեշտակապատի նկարների որմնանկարները, 1793 թ. (նկ.՝ հեղինակի, 2016 թ.)

եւ շրջակայից նորա, Տփխիս, տպարան Մովսէս Վարդանեանցի, Լ+608 էջ:

Չօպանեան Ա., 1910, Նաղաշ Յովնաթան աշուղը և Յովնաթան Յովնաթանյան նկարիչը, Փարիզ, հրատ. նշված չէ, 129 էջ:

Սահակ վարդապետ Աստուածատրեան, 1910, Պատկերացոյց հաւաքածոյ մասնաւոր հնութեանց Մայր աթոռոյ Սբ Էջմիածնի եւ շրջակայից, պրակ Ա, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Սբ թ Էջմիածնի, 52 էջ:

Սիմէօն կաթուղիկոս Երեւանցի, 1873, Ջամբռ, Վաղարշապատ, տպարան Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, Դ+299 էջ:

Ստեփաննոս Օրբէլեան, 1859, Պատմութիւն նահանգին Սիսական, հ. Բ, Փարիզ, Գործատուն Կ. Վ. Շահնազարեանց, 371 էջ:

Дрампян Р., 2016, Из истории армянского искусства. Сборник статей, Ереван, «Национальная галерея Армении», XXVIII+468 с.

Очерки по истории армянского изобразительного искусства, отв. ред. М. Айвазян, К. Глонти, Н. Степанян, Ереван, изд. АН Арм. ССР, 1979, 216 с.

Abdullahi Y., Embi M.R. 2015, Evolution of abstract vegetal ornaments in Islamic architecture /ArchNet-IJAR. International Journal of Architectural Research, Vol. 9, Issue 1, pp. 31-40.

Hall J. 1974, Dictionary of Subjects and Symbols in Art, New York, Harper & Row Publishers, XXIX+346 p.

Ծանոթագրություններ

1. XIII դ. վերջին Մեղրիի վանքը 20 միավորով հարկատու է եղել Տաթևի վանքին (Ստեփաննոս Օրբէլեան 1859, 271): Վանքի մասին համառոտ հիշատակում են նաև Աբրահամ Կրետացին և Ղևոնդ Ալիշանը (Աբրահամ կաթողիկոս Կրետացի 1870, 77, Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան 1893, 303):

2. Վանքի ճարտարապետության մասին տե՛ս Հասրաթյան 1973, 83-86, Հասրաթյան, 1987, 9-11, Հարությունյան 1992, 396:

3. Հոդվածում ներկայացված բոլոր արձանագրությունների լուսանկարները, գրչանկարներն ու վերծանությունները հեղինակինն են:

4. «Սազային ոճին» բնորոշ է երկարավուն, սղոցաեզր տերևների (կոչվում են սազտերևներ) առատ կիրառումը՝ որպես զարդարվեստի գերիշխող և հիմնական մոտիվ: Ծագել է XVI դարի առաջին կեսին Թավրիզում և հետագայում լայն տարածում ստացել պարսկական և օսմանյան արվեստում (Abdullahi, Embi 2015, 43):

5. Մաղարդավանքի որմնանկարները (1697 թ., տե՛ս Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան, 1893, 515-516): Նաղաշի վրձնին է վերագրել Արգամ Այվազյանը (Այվազյան, 1998, 31): Էջմիածնի Մայր տաճարի խմբանկարը առաջինը հիշատակել է Սահակ Աստվածատրյանը՝ նշելով, որ «Կը թուի՝ թէ ի վեր անդ յիշուած Ստեփաննոս և Յովնաթան նկարիչներից առաջ արդէն նկարուած էր» (Սահակ վարդապետ Աստուածատրեան, 1910, 11): Այն Նաղաշին են վերագրել Գարեգին Լևոնյանը, Մանյա Ղազարյանը և Ռուբեն Դրամբյանը (Լևոնյան 1938, № 2, 27, Ղազարյան 1974, 158-159, Дрампян 2016, 117): Արշակ Չոպանյանը, ինչպես Մայր տաճարի բոլոր որմնանկարները, նույնպես և այն վերագրում է Նաղաշի թոռանը՝ Հովնաթան Հովնաթանյանին (Չօպանեան, 1910, 28): Ներսես Ակինյանը տաճարի «արեւելեան խմբի» որմնանկարները, ներառյալ հիշյալ պատկերը, վերագրում է Հովնաթան Հովնաթանյանին (Ակինեան, 1911, 109, 111), նույնպես և Գարեգին Հովսեփյանը (հոդվածում «Նաղաշ Յովնաթան» ասելով մշտապես նկատի ունի Հովնաթան Հովնաթանյանին, տե՛ս Գարեգին Ա. Կաթողիկոս, 1951, 43): Եղիշե Մարտիկյանը խմբանկարը վերագրում է Նաղաշի որդուն՝ Հակոբ Հովնաթանյանին (Մարտիկյան 1971, 82-84):

6. Հակոբ և Հարություն Հովնաթանյանների որմնանկարչական գործունեության մասին քիչ բան է հայտնի: Փաստացի տեղեկությունները վերաբերում են միայն Աբրակունիսի Սբ Կարապետ եկեղեցու (Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանց, 1904, 6, 15, Լևոնյան 1938, № 4, 51, Մարտիկյան, 1971, 93-94, Ղազարյան 1974, 172-173, Այվազյան 1998, 37-38, 58, 63-65, 67), Էջմիածնի Ղազարապատ հյուրատան և «ամարաթների» (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 13, 4, 50, Լևոնյան, 1938, № 4, 52, Ղազարյան, 1974, 170-172) նկարազարդումներին: Նրանց են վերագրվում նաև Էջմիածնի Մայր տաճարի բեմառաջքի պատկերաշարը (Սիմէօն կաթուղիկոս Երեւանցի, 1873, 28, Ղազարյան, 1974, 161-163, Մարտիկյան, 1971, 90-93, Дрампян, 2016, 120-121), հին վեհարանի նկարազարդումները (Айвазян, Глонти, Степанян (отв. ред.) 1979, 108, Գարեգին Ա. Կաթողիկոս, 1951, 41, Дрампян, 2016, 152), նաև Ձնաբերդի Ս. Գրիգոր (Ղազարյան, 1974, 172-173, Այվազյան, 1998, 67, 74, 83-84) և Աստապատի Ս. Ստեփանոս (Այվազյան, 1998, 42, 48) եկեղեցիների որոշ որմնանկարներ: Մեր կարծիքով՝ Հակոբին ու Հարությունին են պատկանում նաև ձևով և ոճով միմյանց գրեթե կրկնող ծաղկատերևային զարդամոտիվներով Ռամիսի (Գողթն գավառ) Ս. Աստվածածին եկեղեցու (նկ. 3-Ը), Քանաքեռի Սբ Աստվածածին եկեղեցու (նկ. 3, Թ-ԺԱ) և Էջմիածնի Մայր տաճարի կաթողիկոսական նոր գահի (նկ. 3, ԺԲ-ԺԳ) նկարազարդումները:

7. Աստվածատուրի գործերից Կարճևանի եկեղեցու ավագ խորանում պահպանվել են Ս. Սարգսի և Ս. Գևորգի, ավագ խորանի հյուսիսակողմյան և հարավակողմյան որմնամույթերին՝ Միքայել հրեշտակապետի երկու պատկերները (մեկի թվականը եղծված է, մյուսը՝ 1793 թ.), Մեղրիի Փոքր թաղի եկեղեցու ավագ խորանում՝ Ս. Հովհաննես Մկրտչի և Ս. Ստեփանոսի պատկերները (երկուսն էլ 1793 թ.), ավագ խորանի հյուսիսակողմյան և հարավակողմյան որմնամույթերին՝ Պետրոս (1793 թ.) և Պողոս (անթվ.) առաքյալների պատկերները, Մեղրիի Մեծ թաղի եկեղեցու ավագ խորանում՝ Միքայել հրեշտակապետի (անթվ.), հյուսիսարևելյան մույթին՝ Ս. Գևորգի (թվականը եղծված) և հարավարևելյան մույթին՝ Ս. Մինասի պատկերները (վերջինը ենթադրաբար ենք վերագրել Աստվածատուրին): Հիշյալ որմնանկարների մասին մանրամասն՝ տե՛ս Ավետիսյան 2019, 78-90:

8. Միջնադարյան արվեստում Միքայել հրեշտակապետը պատկերվել է երկու հիմնական տարբերակներով՝ սրով և (կամ) նիզակով զինված, չար ուժերի դեմ պայքարող և հաղթող ռազմիկ (հիմքը՝ Յյտ. 12:7-9) և կշեռքով հանգուցյալների հոգիները կշռող ու նրանց իրական վաստակը որոշող հրեշտակ (Hall 1974, 208): Հոգիների կշռումը կամ «Պսիխոստազիսը» հանդիսանում է «Ահեղ դատաստան» տեսարանի հիմնական դրվագներից մեկը, պատկերվել է նաև որպես առանձին տեսարան: Կարելի է ասել, որ «Պսիխոստազիսից» էլ արդեն հետբյուզանդական շրջանում ծագել և XVII-XVIII դդ. տարածում է ստացել Միքայելի՝ հանգուցյալի հոգին հանող տարբերակը:

9. Ավետիսյան 2019, 84:

10. Ավետիսյան 2019, 84:

ՈՐՄՆԱՆԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Մեղրու Փոքր թաղի Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարների շերտերը, ժամանակաշրջանն ու հեղինակների խնդիրը

Մեղրի քաղաքի Փոքր թաղում՝ բավականին բարձրադիր տեղանքում, գտնվում է Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին՝ կառուցված ԺԷ դարում[1]: Եկեղեցին Սյունիքի ԺԷ-ԺԸ դարերի ճարտարապետությանը բնորոշ սովորական եռանավ բազիլիկ կառույց է՝ աղոթասրահը երեք նավերի բաժանող երկու զույգ «Т»-աձեւ մույթերով, ավագ խորանին կից երկու ավանդատներով, հարավային միակ մուտքով եւ տանիքի կենտրոնում տեղավորված աղյուսաշեն զանգակատուն-ռոտոնդայով[2]: Բացառիկ են, սակայն, եկեղեցու՝ գրեթե ողջ ներքին մակերեսը ծածկող որմնանկարները, որոնք նոր շրջանի հայ որմնանկարչության ամենահետաքրքիր նմուշներից են:

Եկեղեցում առկա են 1700, 1793 եւ 1866 թթ. արված երեք շերտ որմնանկարներ, որոնք ընդհանուր ներկայացնում են 20 դիպաշարային տեսարան, սրբերի եւ հրեշտակների (ներառյալ երկթեւ քերովբեներն ու ավագ խորանի վեցաթեւ սերովբեները) 41 պատկեր, նաեւ մեծ մակերես զբաղեցնող ծաղկատերեւային նկարազարդումներ:

Երեք շերտի որմնանկարների հեղինակներից եւ ոչ մեկի անունն արձանագրված չէ: Մեր կողմից նախկինում պարզվել է միայն 1793 թ. որմնանկարների հեղինակի՝ Աստվածատուր Աստապատցու[3] ինքնությունը:

Նկ. 6. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու 1793 թ. շերտ որմնանկարները. լուս՝ Ճեղինակի. 2017 թ.

Նկ. 7. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու 1866 թ. նկարազարդման առանձնամասը. լուս՝ Ճեղինակի. 2019 թ.

Նկ. 8. Ավագ խորանի եւ գմբեթարդի որմնանկարները. լուս՝ Ճեղինակի. 2019 թ.

Սույն հոդվածում կփորձենք նախ տարորոշել որմնանկարների առաջին եւ երրորդ շերտերը, ապա գոնե վարկածների շրջանակում պարզորոշել դրանց հեղինակների ինքնությունը:

1700 թ. շերտին են պատկանում դիպաշարային բոլոր 20 տեսարանները, գեղազարդային նկարազարդումներն ու սրբերի պատկերների մեծ մասը՝ Սբ Պարսամ Սքանչելագործ, Սբ Հովհան Ոսկեբերան, Սբ Բարսեղ Կեսարացի, Սբ Դավիթ թագավոր, Սբ Մեսրոպ եւ Սբ Սահակ, Սբ Թադեոս եւ Սբ Բարդուղիմեոս, Սբ Գրիգոր Լուսավորիչ, երկու ավետարանիչ եւ երեք սուրբ ճիավոր[4]: Այս շերտից միայն մեկ որմնանկար է թվագրված ՝ «Ավետում» տեսարանը, որտեղ ստորին հատվածում պահպանվել է «զճխթ» (1700 թ.) սեւաներկ արձանագրությունը[5]: Այդուհանդերձ, բոլոր դիպաշարային տեսարաններն ու նշված սրբերի պատկերները ոճական առումով հարում են այս որմնանկարին, արձանագրության ձեռագիրն էլ իր հերթին համընկնում է դիպաշարային տեսարանների որոշ մասի մեկնողական սեւաներկ արձանագրությունների ձեռագրի հետ:

1700 թ. որմնանկարների հեղինակին պարզելու հարցում միակ լուծումը կարող է լինել դրանց համեմատությունը տվյալ ժամանակաշրջանի այլ որմնանկարների հետ: Դիպաշարային տեսարաններն ու սրբերի պատկերները, սակայն, ոչ պատկերագրորեն, ոչ էլ ոճային առումով չեն համադրվում ԺԷ-ԺԸ դարերի եւ ոչ մի որմնանկարի հետ: Հետաքրքիր պատկեր է ստացվում գեղազարդային (դեկորատիվ) նկարազարդումների դեպքում, որոնք Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում զբաղեցնում են դիպաշարային տեսարաններից եւ մարդկային կերպարներից ազատ գրեթե ողջ ներքին մակերեսը՝ նավերի թաղային հատվածները, կամարների ստորին եւ ճակատային երեսներն ու արեւմտյան պատն ամբողջությամբ: Դրանք կարմիրի եւ կապույտի գերակշռող երանգներով արված պարսկական ոճի զարդանախշեր են, որոնց ձեւական եւ ոճային առումով ամենահարազատ օրինակները տեսնում ենք Ագուլիսի Սբ Թովմա տաճարում (այժմ՝ ոչնչացված): Ի տարբերություն Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու՝ Սբ Թովմա տաճարի որմնանկարները գրեթե ամբողջովին զարդանախշային են[6]: Բարեբախտաբար մեզ է հասել Սբ Թովմայի աղոթասրահը պատկերող մի քանի լուսանկար, որոնք հնարավորություն են տալիս որոշակի զուգահեռներ անցկացնել երկու եկեղեցիների աղոթասրահների գեղազարդային որմնանկարների միջեւ:

Լուսանկարներից ակնհայտ են ինչպես առանձին զարդանախշերի խիստ նմանությունն ու որոշ դեպքերում պարզ կրկնությունը, այնպես էլ զարդանախշային նույն հորինվածքների կիրառումը: Դիցուք վերցնենք երկու եկեղեցիների մեծ կամարների (Սբ Թովմա տաճարում դրանք գմբեթակիր չորս կամարներն են, Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում՝ կենտրոնական նավի լայնական

Նկ. 1. Ս. Հովհաննես Մկրտիչ Եկեղեցին ճարտարապետ. լուս. Ա. Ենգիբարյան. 2014 թ.

թաղակիր երկու կամարները) որմնանկարները. երկու դեպքում էլ դրանք ներկայացնում են չորս հիմնական գաղափար կրող զարդագոտիներ՝ կազմված սուր ծայրով դեպի վեր ուղղված հուլունքազարդից, քառատերեւներից, ութաթեւ երկարավուն զարդանախշից եւ կամարի կենտրոնում՝ երկսայր ձվածիր վարդյակ-կախազարդից կամ, ինչպես պարսիկ վարպետներն են անվանում՝ «թորանջից»: Նշված պատկերները միմյանցից բաժանվում են նկարագեղ ոլորուն ճյուղերով: Աննշան փոփոխություններով կրկնվում են նաեւ կամարների ճակատային հատվածների զարդագոտիները՝ ալիքանման ընթացող սղոցաձեւ տերեւներով ու ծաղիկներով, նույնպես եւ ալիքանման ընթացող տերեւային մեկ այլ զարդագոտի, որը Սբ Թովմա տաճարում հիմնականում տեղ է գտել կամարների երեսակներին, իսկ Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում՝ կենտրոնական նավի թաղային հատվածներում: Նույնը վերաբերում է պսակատեսք թեւերով խաչաձեւ հորինվածքներին (պայմանականորեն անվանել ենք «քառաթեւեր»), որոնք երկու եկեղեցիների թաղային հատվածների գեղարվեստական հարդարանքում որպես գլխավոր հորինվածք են հանդես գալիս, եւ որտեղ առհասարակ գործ ունենք պարզ կրկնօրինակի հետ (հմմտ. դրանց կենտրոնում տեղավորված ծաղկեփնջերն ու ծաղկամանները):

Նշվածներից առանձին օրինակները, անշուշտ, կարող էին տեղ գտնել եւ տարբեր հեղինակների որմնանկարներում՝ հաշվի առնելով ԺԷ-ԺԸ դարերում հայ կերպարվեստ ներմուծված եւ լայն տարածում գտած պարսկական գեղազարդային արվեստի զանազան տարրերը, սակայն երկու հուշարձաններում այսչափ զուգադիպությունները դժվար թե պայմանավորված լինեին զուտ պատահականությամբ, առավել եւս, որ նմանությունները չեն վերաբերում միայն զարդանախշերի պատկերագրական կողմին: Երկու հուշարձաններում էլ առկա են նաեւ զուտ ոճական նմանություններ, որոնց վառ օրինակ են ոճավորված տերեւների եւ ծաղիկների զուգորդումները: Վերջին դրվագն արդեն ոչ մի կասկած չի թողնում ոչ թե սոսկ միեւնույն որմնանկարչական դպրոցի, այլեւ միեւնույն հեղինակ(ներ)ի վրձնի առկայության հարցում:

Սբ Թովմա տաճարի որմնանկարները, դատելով լուսանկարներից, անշուշտ ավելի կատարյալ են: Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում գեղազարդային նկարազարդումներն ավելի հախուռն են եւ որոշ իմաստով՝ անկանոն: Որակական այս տարբերությունը թերեւս կարելի է բացատրել նաեւ Սբ Թովմայի վանքի կարգավիճակը հաշվի առնելով, ինչն անհամեմատ էր Մեղրու սովորական թաղային եկեղեցու հետ: Այդուհանդերձ չի կարելի բացառել նաեւ ժամանակաշրջանների հարցը՝ առ այն, որ Սբ Թովմա տաճարի որմնանկարներն ստեղծելիս վարպետն ավելի փորձառու է եղել:

Ինչ վերաբերում է երկու եկեղեցիների որմնանկարների հեղինակ(ներ)ի՝ պատկանելությանը, ապա երկու դեպքում էլ փաստական տեղեկություններ չեն պահպանվել: Չնայած դրան, օրինակ, Մ. Սարյանը Սբ Թովմա տաճարի որմնանկարները վերագրել է նկարիչների հռչակավոր Հովնաթանյան տոհմին[7], իսկ որոշ հետազոտողներ՝ նույն տոհմի ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկին՝ մեծ բանաստեղծ, տաղերգու եւ նկարիչ Նաղաշ Հովնաթանին (1661-1721 թթ.)[8]: Ինչեւէ, դրանք բոլորն էլ ընդամենը ենթադրություններ են, եւ պետք է նշել, որ Նաղաշ Հովնաթանի կենսագրության՝ որմնանկարչությանը վերաբերող միակ փաստական տեղեկությունն այն է, որ նա նկարազարդել է բազմաթիվ եկեղեցիներ[9]: Ինչ վերաբերում է Սբ Թովմա եւ Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցիների հետ նրա առնչությանը, ապա առաջինի հետ նրան կապում են 1680-ական թթ. Սբ Թովմա վանքում լինելու, այնտեղ ձեռագրեր ընդօրինակելու փաստը եւ նրա «Տաղ ի վերայ զանգակատան վանից Սուրբ առաքելոյն

Թովմայի, որ ի յԱգուլիս» բանաստեղծությունը, որտեղ խոսվում է «գաւթի» նկարազարդման մասին[10], երկրորդի հետ՝ որմնանկարների ստեղծման ժամանակն ու դիպաշարային որոշ որմնանկարների մեկնողական արձանագրությունների բանաստեղծական բնույթը[11]:

Եւ թեեւ մենք եւս Նաղաշ Հովնաթանին ենթադրաբար պետք է համարենք հիշյալ որմնանկարների հեղինակ, այդուհանդերձ այս ամենը Նաղաշին վերագրվող մյուս եկեղեցիների որմնանկարների համեմատ[12] առավել ծանրակշիռ հիմք է ստեղծում, եւ նրան վերագրվող որմնանկարներից ամենահավանականների շարքում Ագուլիսի Սբ Թովմա տաճարի որմնանկարների հետ միասին այսուհետ պետք է դասել նաեւ Մեղրու Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հին շերտի որմնանկարները:

Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում, ի դեմս երկրորդ որմնանկարչական շերտի, կարող ենք նշել չորս որմնանկար՝ բոլորն էլ արված հին՝ 1700 թ. շերտի վրա: Դրանք են Սբ Պետրոս եւ Սբ. Պողոս առաքյալների պատկերներն Ավագ խորանի հյուսիսակողմյան ու հարավակողմյան որմնամույթերի արեւմտյան երեսներին, Սբ Հովհաննես Մկրտչի պատկերն Ավագ խորանի հյուսիսային եւ Սբ Ստեփանոս նախավկայի պատկերը Ավագ խորանի հարավային կողմերում (բացառությամբ Սբ Պողոսի պատկերի՝ մնացյալ երեքն ունեն թվական՝ 1793): Որմնանկարների գունապնակը, զարդանախշերն ու արձանագրությունների ձեռագիրը նույնական են քահանա եւ նկարիչ Աստվածատուր Աստապատցու ձեռագրին, որը նկարազարդել է նաեւ Սյունիքի Կարճեւան գյուղի Սբ Աստվածածին (1793 թ.), Մեղրու Անապաստանաց վանքի Սբ Հովհաննես Մկրտիչ (երկրորդ շերտ, 1793 թ.) եւ Մեծ թաղի Սբ Աստվածածին (երկրորդ շերտ, ԺԸ դարի վերջ) եկեղեցիները[13]:

Վերջապես, որմնանկարների երրորդ՝ 1866 թ. շերտը թվագրելու համար հիմք ենք ընդունել հյուսիսային պատի «Ահեղ դատաստան» որմնանկարի (նկ. 2, թիվ 17) ստորին մասում պահպանված երկտող սեւաներկ արձանագրությունը.

Ի ՅԻՇԱՏԱԿ ՅՈՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՅՈՀԱՆՆԷՍ ՆԵՐՍԷՍ ԵՒ ԱԲԵՏՆԱԳՈՎ ԽԱՉԻ[Կ]ՕՎՔՍ ՁԵԲԴԱԼՈՒ ՊԱՏԳԵՐԻ ԱՄԵՆԱՅՆ ԾԱՂԿԵՑՆԵԼՈՅ ԱՅՍ / ՄԱՍԻՆ ԾԱԽՍ ԱՐԻՆՔ ԵՒ ԸՆՁԱԵՑԻՄՔ ԵԿԵՂԵՑՈՅՍ 210. ՄԱՆԷԹ: Ի 1866 ԱՄԻ:

Երրորդ շերտին պատկանող որմնանկարների հստակ տարբերակման խնդրի բարդությունն այն է, որ 1866 թ. ոչ միայն արվել են նորերը, այլեւ վերանկարվել ու թարմացվել են հին՝ 1700 թ. բազմաթիվ որմնանկարներ: Այս կապակցությամբ 1866 թ. արված որմնանկարներից առայժմ հաստատապես կարող ենք նշել միայն Ավագ խորանի միջնամասի եւ գմբեթարդի որմնանկարները, որոնց մակերեսը նկատելիորեն (մոտ 0, 5 սմ) ավելի առաջ եկած է ստորին հատվածում գտնվող 1793 թ. (Սբ Հովհաննես Մկրտիչ եւ Սբ Ստեփանոս) շերտի հետ համեմատ: Այլ խոսքով՝ Ավագ խորանի միջնամասի եւ գմբեթարդի որմնանկարները, այն է՝ աղավնակերպ Սբ Հոգու, երեք սերովբեների (գմբեթարդ, նկ. 2, թիվ 3), անհայտ սրբի (հարավային կողմ, նկ. 2, թիվ 4) պատկերներն ու ոլորուն ճյուղերով ծաղկատերեւային զարդանախշերը (նկ. 9), ստեղծվել են ավելի ուշ արված որմնանկարչական հիմնաշերտի վրա, քան Ավագ խորանի մյուս որմնանկարները, ուստի դրանք կարելի է համարել ամբողջովին 1866 թ. գործեր, եւ դրանց հատկանիշներով էլ, մասնավորապես անհայտ սրբի դիմագծերով, ձեռքերի ձեւերով եւ այլն (նկ. 10), կարելի է պատկերացում կազմել մյուս՝ հին շերտերին պատկանող որմնանկարներում 1866 թ. արված միջամտությունների մասին: Հետաքրքիր ոճական առանձնահատկություն են հատկապես անհայտ սրբի դեղնավուն զգեստի կաթիլաձեւ ծալքերը, որոնք տեսնում ենք 1700 թ. բազմաթիվ որմնանկարներում: Տարբերվում է նաեւ պատկերը եզերող զարդագոտին, որը նկարիչը թեեւ փորձել է համահունչ դարձնել 1700 թ. որմնանկարների զարդագոտիներին, սակայն տարբերությունն ակնհայտ է[14]:

Ավագ խորանի զարդանախշերի դեպքում թե՛ պատկերային եւ թե՛ ոճական առումով գործ ունենք աղոթասրահի թաղային հատվածների զարդանախշերից բավականին տարբերվողների հետ: Կապույտ ոլորուն ճյուղերն այստեղ ավարտվում են «բաժակներից» դուրս եկող երեք ծաղկից կազմված հորինվածքներով: Ազատ տարածքները լրացված են դարձյալ եռածաղիկ զարդանախշերով, որոնք ձեւով հիշեցնում են 1700 թ. շերտի ծաղկատերեւ պատկերները: Նույնը վերաբերում է Ավագ խորանի լուսամուտից աջ եւ ձախ գտնվող «քառաթեւերին», որոնք թեեւ իրենց ընդհանուր հորինվածքով նման են 1700 թ. շերտի «քառաթեւերին», սակայն հուլունքազարդերի ու կենտրոնական ձվածիրի նախշերով տարբերվում են դրանցից: Կարելի է ենթադրել, որ նշված զարդատարրերի ներմուծմամբ 1866 թ. նկարազարդման հեղինակը պարզապես փորձել է որոշակի կապ ապահովել աղոթասրահի եւ Ավագ խորանի հարդարանքների միջեւ:

Որմնանկարների հեղինակների տարբերակման հարցում կիրառելի է նաեւ արձանագրությունների համեմատությունը: Դիպաշարային տեսարաններին եւ սրբերի պատկերներին ուղեկցող մեկնողական արձանագրություններում հյուսիսային պատի վերոնշյալ արձանագրության ձեռագրին են հարում միայն գլխավոր նավի թաղային հատվածի՝ չորս ավետարանիչների (նկ. 2, թիվ 23) արձանագրությունները: Սակայն կարծում ենք՝ ինչպես այս եւ հանդիպակաց կողմում պատկերված չորս կույսերի որմնանկարները (նկ. 2, թիվ 38, նկ. 9), նույնպես եւ 1700 թ. շերտին պատկանող բազմաթիվ որմնանկարներ 1866 թ. քայքայված լինելու պատճառով պարզապես վերանկարվել են: Ասվածի ապացույց է մի հետաքրքիր դրվագ, որ նկատվեց կույսերի պատկերներում 2018 թ. վերականգնողական աշխատանքների ընթացքում: Պատկերաշարի մոտավորապես վերին կեսի որոշ գույներ քայքայվել կամ գունափոխվել են (կարմրավունը վերածվել է դեղնամոխրագույնի, վարդագույնը գրեթե չեզոքացել է, օքրայագույնն ավելի բաց երանգ է ստացել, երկնագույնն ավելի է մգացել եւ այլն): Մեր ենթադրությամբ, ի տարբերություն հին՝ հանքային ծագում ունեցող ներկանյութերի, եկեղեցու 1866 թ. նկարազարդման ժամանակ օգտագործվել են հանքային եւ օրգանական ներկանյութերի խառնուրդներ, վերջիններն էլ 1990-2000-ական թթ. անձրեւաջրերի եւ տանիքից ներթափանցած շաղախի պարունակած աղերի ազդեցությունից քայքայվել կամ գունափոխվել են[15]:

Ինչ վերաբերում է «Ահեղ դատաստան» որմնանկարի թվագրմանը, որի ստորին հատվածում, ինչպես նշեցինք, զետեղված է 1866 թ. նորոգության արձանագրությունը, ապա հակված ենք այն համարել 1700 թ. գործ: Ճիշտ է՝ պատկերված անձանցից որոշների դիմագծերը ոճական առումով համընկնում են Ավագ խորանի վերոնշյալ որմնանկարին, որմնանկարի եզրագոտին էլ Ավագ խորանի անհայտ սրբի պատկերի նույն եզրագոտին է, սակայն պետք չէ մոռանալ, որ հյուսիսային պատը, որի վրա պատկերված է որմնանկարը, թեք անհարթությանը հարող իր դիրքի պատճառով եկեղեցու ամենախոնավ պատն է, եւ սույն որմնանկարն էլ դարերի ընթացքում

պետք է որ բավականին քայքայված լինի, եւ հենց այս պատճառով է միջամտությունը եղել ավելի շատ՝ համեմատած մյուս դիպաշարային տեսարանների հետ:

Ինչ վերաբերում է 1866 թ. որմնանկարների հեղինակի հարցին, ապա որոշակի հուշում է պարունակում գլխավոր նավի արեւելակողմյան թաղակիր կամարին գրված «Տ[է] Ր ԱՀ(Ճ)» սեւաներկ արձանագրությունը (ձեռագիրը լիովին համապատասխանում է նկ. 7-ի ձեռագրին), որ հավանաբար որմնանկարչի անվան հապավումն է: Հետաքրքիր է նաեւ նույն թաղի հարավային իջվածքին գրված «Ս», «Ա», «Է» եւ/կամ «Ի» տառերից կազմված կցագիրը, որը ենթադրաբար նկարչի օգնականի կամ երկրորդ նկարչի անվան սկզբնատառերն են (նկ. 10):

Տվյալ ժամանակաշրջանի հայ որմնանկարչության համապատկերում հայտնի է միայն աստապատցի նկարիչ Հակոբ Տեր-Աբրահամյանի անունը, որը որոշակիորեն կհամապատասխաներ «ՏՐ ԱՀ(Ճ)» արձանագրությանը (Տ|Է|ր Ա|բրահամեան| Հ(Ճ) |ակոբ|): Նախիջեւանի հուշարձանների հետազոտող Արգամ Այվազյանը Տեր-Աբրահամյանին է վերագրում Աստապատի Սբ Ստեփանոս (Կարմիր վանք), Ջնաբերդի Սբ Գրիգոր եւ Աբրակունիսի Սբ Կարապետ եւ Սբ Գեւորգ եկեղեցիների ուշ շրջանի որմնանկարները[16], չնայած որ նշված եկեղեցիների եւ ոչ մի արձանագրությունում կամ որեւէ այլ աղբյուրում Տեր-Աբրահամյանի անունը հիշատակված չէ որպես որմնանկարների հեղինակ: Նշված եկեղեցիներից մեզ հասած հատուկենտ լուսանկարները եւս իրենց որակական առումով թույլ չեն տալիս զուգահեռներ անցկացնել Մեղրու Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարների հետ:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ, բացառությամբ Ավագ խորանի միջնամասի եւ գմբեթարդի որմնանկարների, 1866 թ. գլխավորապես իրականացվել է 1700 թ. քայքայված որմնանկարների վերանկարում, որի ընթացքում թարմացվել են խամրած գույները, եւ բացառված չէ, որ որոշ դեպքերում էլ կատարված լինեն մասնակի ձեւափոխումներ՝ դիմագծերի, զգեստների եւ այլ մանրամասների հատվածներում:

Ծանոթագրություններ

1. Տեղացիների շրջանում առավել հայտնի է որպես Սբ Սարգիս եկեղեցի:

2. Եկեղեցու ճարտարապետության մասին տե՛ս Մ. Հասրաթյան, Մեղրու շրջանի հուշարձանները, Երեւան, 1987, էջ 14:

3. Տե՛ս Ա. Ավետիսյան, Աստվածատուր Աստապատցի. նոր անուն XVIII դարի հայ որմնանկարչության ասպարեզում, ՊԲՀ, 2019, թիվ 2, էջ 85-87:

4. Սրբերից մի քանիսի ինքնությունը հնարավոր եղավ պարզել եկեղեցու որմնանկարների՝ 2018 թ. վերականգնողական աշխատանքների ընթացքում, երբ ուշ շրջանի յուղաներկի շերտը հեռացվեց, եւ բացվեցին բնօրինակ շերտի արձանագրությունները (տե՛ս Ա. Ավետիսյան, Մեղրու Փոքր թաղի Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարների 2017-2019 թթ. ուսումնասիրման եւ վերականգնման աշխատանքները, «Հուշարձան» տարեգիրք, ԺԵ., 2020, էջ 19-20:

5. Թերեւս վրիպակի պատճառով հազարականների «Ռ»-ն բաց է թողնված:

6. Բացառություն են կազմում արեւմտյան շքամուտքի վերնամասի՝ Հայր Աստծու, Տիրամոր եւ Մարիամ Մագդաղենացու պատկերներն ու Ավագ խորանի պատկերակալի (իկոնոստաս) նկարազարդումները (տե՛ս Մ. Փափազեանց, Հնութիւնք վանօրէից, Գողթան գաւառ, գիրք Դ.,

Նկ. 3 «Ավետում» որմնանկարի սեւաներկ արձանագրությունը, լուս.՝ հեղինակի, 2017 թ.

Նկ. 4 Ագուլիսի Ս. Թովմա (ձախից, լուս.՝ Մատթեոս Փափազյանցի, 1891 թ.) եւ Մեղրու Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ (աջից, լուս.՝ հեղինակի, 2019 թ.) եկեղեցիների որմնանկարները

Նկ. 10 Ավագ խորանի անհայտ սրբի որմնանկարը (1866 թ.) ու առանձին մանրամասները լուս.՝ հեղինակի, 2019 թ.

Նկ. 9 Չորս կույսերի պատկերաշարի գունափոխված հատված (կետագծից վեր), լուս.՝ հեղինակի, 2019 թ.

ՈՐՄՆԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Վաղարշապատ, 1891, էջ 38-39, լուս. հմր 349):

7. Տե՛ս Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, գիրք Ա., Երեւան, 1966, էջ 141:

8. Տե՛ս Ե. Մարտիկյան, Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Ա., XVII-XIX դդ., Երեւան, 1971, էջ 59. Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը ԺԷ.-ԺԸ. դդ., Երեւան, 1974, էջ 150. Ա. Այվազյան, Նախիջեւանի պատմաճարտարապետական հուշարձանները, Երեւան, 1978, էջ 13. նույնի՝ Ագուլիս. պատմամշակութային հուշարձաններ, Երեւան, 1984, էջ 28. Նախիջեւանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները, Երեւան, 1986, էջ 22. Նախիջեւանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, Երեւան, 1987, էջ 31. Նախիջեւանի որմնանկարչական արվեստը, Երեւան, 1998, էջ 19:

9. Դա իմանում ենք Նաղաշի որդի Հակոբի՝ հոր մահվանը նվիրված ողբերգի «Ուր է շնորհալից վարպետն իմաստուն, որ միշտ զարդարէր բազում սրբոց տուն...» տողերից (տե՛ս Նաղաշ Հովնաթան, Տաղեր, Երեւան, 1983, էջ 225):

10. Տե՛ս անդ, էջ 208:

11. Այդպիսիք են, օրինակ, «Ծնունդ» եւ «Հարություն» տեսարանների ստորին հատվածներում գրված արձանագրությունները (վերջինն ի հայտ եկավ յուղաներկի շերտի տակից 2018 թ. վերականգնողական աշխատանքների ընթացքում (տե՛ս Ա. Ավետիսյան, Մեղրու Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարների՝ 2017-2019 թթ. ուսումնասիրման եւ վերականգնման աշխատանքները, էջ 19-20):

12. Բացի Սբ Թովմա տաճարի որմնանկարներից՝ տարբեր ժամանակներում անհիմն կամ մասամբ հիմնավոր կերպով Նաղաշին են վերագրվել նաեւ Երեւանի Սբ Պողոս-Պետրոս, Կաթողիկե, Սբ Զորավոր եկեղեցիների, Մաղարդավանքի (Դարաշամբ, Իրան) Սբ Ստեփանոս եկեղեցու, Գողթն եւ Երնջակ գավառների մի շարք եկեղեցիների, ինչպես նաեւ Էջմիածնի Մայր տաճարի (հին շերտ) որմնանկարները (տե՛ս Գ. Լեւոնյան, Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», 1938, թիվ 2, էջ 25. Մ. Մկրտչյան, Նաղաշ Հովնաթան, Երեւան, 1957, էջ 58. Ե. Մարտիկյան, նշ. աշխ., էջ 57-64. Մ. Ղազարյան, նշ. աշխ., էջ 150-152, 158-160. Ա. Այվազյան, Նախիջեւանի որմնանկարչական արվեստը, էջ 19-37):

13. Նկարչի մասին մանրամասն տե՛ս Ա. Ավետիսյան, Աստվածատուր Աստապատցի, էջ 78-92:

14. 1866 թ., ըստ երեւույթին, նախատեսվել է մեկ այլ սրբի պատկեր զետեղել հանդիպակաց՝ հյուսիսային կողմում (Սբ Հովհաննես Մկրտչի որմնանկարի վերնամասում), սակայն ինչ-ինչ պատճառներով այն կամ չի իրականացվել, կամ չի պահպանվել (ներկայումս երեւում են միայն եզրագծերը):

15. Ա. Ավետիսյան, Մեղրու Փոքր թաղի Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարների 2017-2019 թթ. ուսումնասիրման եւ վերականգնման աշխատանքները, էջ 16-17: Ի դեպ, կույսերից Սբ Հռիփսիմեի եւ Ծողակաթի զգեստների կարմրավունն իր յուրահատուկ վառ երանգով 1700 թ. շերտի դիպաշարային տեսարաններում եւ սրբերի պատկերներում ամենահաճախ հանդիպողներից է, նույնը վերաբերում է նաեւ կապտավունին, մոխրականաչավունին եւ դեղնավունին: Նշված չորս գույներն ենք տեսնում 1700 թ. շերտի որմնանկարների անձանց զգեստների մեծ մասում, ընդ որում՝ մեծամասամբ նաեւ վերոնշյալ կաթիլաձեւ ծալքերով, որոնք, անշուշտ, վկայում են 1866 թ. որմնանկարների հեղինակի հավելումների մասին: Կարեւոր ենք համարում նշել, որ եթե հետագա հետազոտությունների ընթացքում 1700 եւ 1866 թթ. կիրառված ներկանյութերի բաղադրությունը հանգամանալից ուսումնասիրվի (ինչը 2017-2019 թթ. չարվեց ժամանակային խնդրի պատճառով), կարելի կլինի հստակ որոշել, թե հին որմնանկարներից որոնք են վերանկարվել 1866 թ. եւ ինչ չափով, եւ չի բացառվում, որ բացահայտվեն ամբողջությամբ 1866 թ. արված այլ որմնանկարներ եւս, որոնք ներկայումս համարվում են 1700 թ. գործեր:

ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ



Նկ. 5 Ս. Թովմա (Ա., Գ., Ե., Է., Թ.,) եւ Ս. Հովհաննես Մկրտիչ (Բ., Դ., Զ., Ը., Ժ.,) եկեղեցիների որմնանկարների համեմատական տախտակ. Ա-Ա. Այվազյան, Նախիջեւան, գիրք հուշարձանաց, Երեւան, 1990, լուս. 59, դրվագ, Գ., Է., Թ.-դրվագներ Մ. Փափազյանցի վերոբերյալ լուսանկարից (տե՛ս նկ. 4), Ե.-Ա. Այվազյան, Նախիջեւանի որմնանկարչական ժառանգությունը, լուս. 13 դրվագ, Բ., Դ., Զ., Ը., Ժ.- դրվագներ մեր լուսանկարներից



Կարճևանի Սուրբ Աստվածածին եկեղեցու որմնանկարները, որոնց հեղինակն է Աստվածատուր Աստապատցին

XVII-XIX դդ. հայ որմնանկարչությունը նախորդ դարաշրջանների համեմատ ամենաքիչն է ուսումնասիրվել: Այս շրջանի որմնանկարչական հուշարձանների մեծ մասի հեղինակները մինչ օրս մնում են անհայտ, իսկ այն քչերը, որոնց անունները բախտի բերմամբ հասել են մեզ՝ գիտական որևէ հետազոտության չեն ենթարկվել: Այդ բացառիկ անուններից է XVIII դարավերջին ստեղծագործած նկարիչ Աստվածատուր քահանա Աստապատցին:

Աստվածատուր քահանան անհայտ անուն է հայ կերպարվեստի պատմության մեջ: Բացի հոգևորական լինելու փաստից, նրա կյանքի մասին որևէ այլ տեղեկություն մեզ չի հասել: Ի դեմս նրա ստեղծագործությունների՝ կարող ենք խոսել չորս եկեղեցիներում արված որմնանկարների մասին, որոնցից մեկում՝ Սյունիքի Կարճևան գյուղի Սբ Աստվածածին եկեղեցում պահպանվել է նաև նրա ստորագրությունը, իսկ մյուս երեքում արված որոշ որմնանկարներ վստահաբար կարող ենք վերագրել նրան. դրանք են Մեղրիի Անապաստանաց վանքի Սբ Հովհաննես Մկրտիչ, Փոքր թաղի Սբ Հովհաննես Մկրտիչ և Մեծ թաղի Սբ Աստվածածին եկեղեցիների որմնանկարները:

Կարճևանի Սբ Աստվածածին եկեղեցին մի անշուք եռանավ բազիլիկ է՝ կառուցված XVIII դարում: Խորհրդային տարիներին որպես խոտի պահեստ ծառայած այս կառույցը 1990-ական թթ. գտնվում էր անմխիթար վիճակում: 2009 թ. գյուղի բնակիչների նախաձեռնությամբ, առանց մասնագետների ներգրավման և թույլտվության, սկսվում է Սբ Աստվածածին եկեղեցու «վերականգնումը»: Ինքնագործունեության արդյունքում պատերը, բացառությամբ որոշ հատվածների, ներքուստ պատվում են գաջով, ինչի արդյունքում որմնանկարները մեծապես տուժում են: Ավագ խորանում այժմ խիստ վատ վիճակում պահպանվել են Սբ Գևորգի և Սբ Սարգսի որմնանկարները, խորանի վերին հատվածի զարդամոտիվային շրջանակների հատվածները, ավագ խորանի հյուսիսակողմյան ու հարավակողմյան որմնամույթերի Միքայել հրեշտակապետի երկու պատկերները, նաև նախշազարդեր պարունակող որմնանկարի մի հատված՝ հյուսիս-արևելյան մույթին:

Ավագ խորանը որմնանկարված է եղել ամենաքիչը երկու գոտիներով, որոնք իրարից բաժանվում են ծաղկային պարզ հաջորդականությամբ եզրագոտիով: Ստորին գոտուց մեզ են հասել միայն երկու որմնանկարներ՝ Սբ Գևորգը հյուսիսային կողմում և Սբ Սարգիսը՝ հարավայինում: Սբ Գևորգը պատկերված է

ՈՐՄՆԱՆԿԱՐՈՒԹՅՈՒՆ

ձին հեծած, լուսապսակով և սաղավարտով, հագին՝ մոխրագույն թեփուկավոր զրահ ու թիկնոց: Ձին ծառս է լինում, իսկ ձիավորը նիզակը բռնած երկու ձեռքով՝ փորձում է խոցել ստորին հատվածում պատկերված չորքոտանի թևավոր հրեշին: Սբ Գևորգն ամբողջովին մոխրագույն է, ձին՝ շագանակագույն, ընդհանուր պատկերի ետնախորքը՝ նարնջագույն: Որմնանկարի վերին հատվածում պահպանվել է սևաներկ արձանագրություն՝ «... ԱՌՐ Ս[ՈՒՐ]Բ ԳԷՈՐՔ»[1]:

Սբ Սարգսի որմնանկարը խիստ վնասված է հասել մեզ. պահպանվել են ձիավորի գլխի հատվածը, ձիու մի քանի ուրվագծեր, նարնջագույն հետնախորքի որոշ մնացորդներ ու ծաղկային եզրագոտին: Վերին հատվածում պահպանվել է նաև սևաներկ արձանագրությունը՝ «Ս[ՈՒՐ]Բ ՍԱՐԳ[ԻՍ]»:

Ավագ խորանի վերին գոտին սպիտակ ծաղկային մոտիվներ պարունակող շրջանակներով բաժանված է եղել տասներկու հատվածների, վեցական՝ լուսամուտից աջ ու ձախ: Աջակողմյան նկարազարդումներից ներկայումս պահպանվել են միայն շրջանակների որոշ հատվածներ: Ձախակողմյան առաջին և երրորդ պատկերները սպիտակ ներկով արված ծաղկատերևային նախշազարդեր են, իսկ երկրորդում հատվածաբար պահպանվել է նկարչի անունը կրող խիստ արժեքավոր սևաներկ հետևյալ արձանագրությունը.

ՎԱՆՑԻ. ՄՈՒ[ԱԴ]Ի ՈՐ[ԴԻ] ... ՀԱ / ԿԻՆ և ՋԱՆԻՆ . ԴԱՐՑԵԱԼ ՀԱՅ / ՐԱՊԵՏԻՆ . և ԻՒՐ Ո[Ր]ԴԻ ՕՎԱՆԷՍԻՆ / ՈՐՈ ՅԻՇԱՏԱԿՆ ՕՐՀՆՈՒԹ[ԵԱՄ]Բ / ԵՂԻՑԻ ԹԻ[ԻՆ] ՌՄԽԲ ԻՆ (1793) / ԱՍՏԱՊԱՏՑԻ Տ[Է]Ր Ա[ՍՏՈՒԱ]ԾԱ[Ծ]ՏՈՒՐ / ՔԱՀԱՆԱՅՍ ՈՐ ՔԱՇԵՑԻ ԻՄ ՁԵՌՕՔՍ / ... [ՊԱ]ՏԿԵՐՍ:

Խորանի հյուսիսակողմյան և հարավակողմյան որմնամույթերի արևմտյան երեսներին պատկերված են Միքայել հրեշտակապետի երկու որմնանկարները՝ երկու տարբեր կերպարներով. հյուսիսակողմյան ն որմնամույթին՝ որպես մարդկանց հոգիները կշռող հրեշտակ:

Հյուսիսակողմյան որմնանկարում Միքայելը կանգնած է հանգուցյալի վրա և աջ ձեռքով բռնել է վերջինիս հոգին խորհրդանշող փոքրածավալ մարդկային կերպարի մազերից: Նրա վերնազգեստը շագանակագույն է, ներքին շերտավոր զգեստը, լուսապսակը, թևերն ու զգեստը՝ մոխրագույն: Վնասված է որմնանկարի վերին հատվածը, որտեղ եղել է արձանագրություն:

Հարավկողմյան որմնանկարի վերին կեսը խիստ մաշված է, և միայն վեր տարածած թևերի ուրվագծերն ու ձեռքի կշեռքի հազիվ նշմարվող լծակը և թելերն են հուշում պատկերվածի ով լինելու մասին: Միքայելի հագին մոխրագույն վերնազգեստ է, որի տակից մինչև գետին իջնում է ծալքավոր ներքին զգեստը:

Պատկերի ետնախորքը նարնջագույն է, ստորին հատվածում՝ շախմատաձև դասավորված սև վանդակներ: Որմնանկարի վերին հատվածում նշմարվում է մի քանի տողով գրված արձանագրություն, որից ընդամենը որոշ տառեր են մնացել:

Վերծանությունը.

.... / .... / ... ԵՂ[ԻՑ]Ի ԹԻ[ԻՆ] ՌՄԽԲ (1793)

Միքայել հրեշտակապետի այս պատկերատիպերը, ինչպես կտեսնենք հաջորդիվ, կենտրոնական տեղ են զբաղեցնում Աստապատցու որմնանկարներում:

Ուշագրավ է հատկապես Միքայելի՝ հանգուցյալի հոգին հանող տարբերակը, որը խիստ հազվադեպ է պատահում հայ արվեստում, ուստի հարկ է փոքր-ինչ հանգամանալից անդրադառնալ այդ պատկերատիպերին:

Միջնադարյան արվեստում Միքայել հրեշտակապետը պատկերվում է հիմնականում երկու տարբերակով՝ որպես չար ուժերի դեմ պայքարող և հաղթող ռազմիկ (հիմքը՝ Յյտ. 12:7–9)՝ զինված սրով ու (կամ) նիզակով, և որպես կշեռքով հանգուցյալների հոգիները կշռող ու նրանց վաստակը որոշող հրեշտակ[2]: Երկրորդ պատկերատիպը, որ կոչվում է «Պսիխոստազիս» (հուն. «փսիխոստազիա»՝ հոգիների կշռում), «Ահեղ դատաստան» տեսարանի հիմնական դրվագներից մեկն է, սակայն պատկերվում է նաև որպես առանձին տեսարան: Կարելի է ասել, որ «Պսիխոստազիսից» էլ արդեն հետբյուզանդական շրջանում ծագել և XVII–XVIII դդ. տարածում է գտել Միքայելի՝ հանգուցյալի հոգին հանող տարբերակը: Այս դեպքում տեսարանի ստորին հատվածում պատկերվում էր հոգին տանջվելով ավանդող մեղսավորը, իսկ նրա վրա կանգնած՝ Միքայել հրեշտակապետը, ով, որպես կանոն, աջ ձեռքում սուր ուներ, ձախ ձեռքում՝ մեղսավորի հոգին խորհրդանշող մարդկային փոքրիկ ֆիգուր: Վերջինս երբեմն պատկերվում է հետևից ծխացող հետք թողնելով, ինչով, թերևս, շեշտվում է հանգուցյալի՝ մեղսավոր լինելու հանգամանքը: Երբեմն հանգուցյալի կողքին պատկերվում են սատանան, չարքեր և այլն, կարող է պատկերվել նաև ժապավեն՝ վրան գրված՝ «Մարդ՛կ, տեսե՛ք պարզված սուրը, իսկ ովքեր որ պիղծ են ու ծույլ՝ հոգեվարքի ձևը» կամ համանման այլ խոսքեր:

Դժվար է ասել՝ ինչ օրինակներից է օգտվել Աստապատցին այս պատկերները ստեղծելիս: Նշենք միայն, որ նոր շրջանի հայ արվեստում հայտնի վաղագույն օրինակը Քյոթահիայում 1719 թ. պատրաստված հախճապակյա ափսեի երեսի պատկերն է (գտնվում է Լոնդոնի Վիկտորիա և Ալբերտ թանգարանում)[3], վերջին օրինակը՝ Կամարիս գյուղի (Կոտայքի մարզ) Սբ Հովհաննես եկեղեցու մուտքի բարավորի բարձրաքանդակը (XIX դ. երկրորդ կես):

Սբ Աստվածածին եկեղեցում որմնանկարի մի հատված է պահպանվել նաև հյուսիսարևելյան մույթի հարավային երեսին, որը ներկայացնում է նույնպիսի նախշազարդեր, ինչպիսիք տեսնում ենք ավագ խորանի վերին գոտում: Մույթի նույն երեսին՝ նախշազարդերից քիչ ներքև, արձանագրության դատարկ տողեր են, որոնք առկա են նաև հարավարևելյան մույթի հյուսիսային երեսին:

Ծանոթագրություններ

Արձանագրությունները հրապարակվում են առաջին անգամ:

J. Hall. Dictionary of Subjects and Symbols in Art. New York, 1974, p. 208.

Ա. Այվազյան. Քյոթահիահայ հախճապակեգործության մի կարևոր հավաքածո, Երևան, 2014, նկ. 107:

ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մեղրու Սուրբ Հովհաննես եկեղեցու (Անապաստանաց վանք) կամ Մեղրո վանքի որմնանկարները

Նկ. 2. Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու 1745 թ. որմնանկարները (նկ.՝ հեղինակի, 2016 թ.). Ա - հյուսիսարևելյան մույթի հարավային երեսի սուրբ ձիավորի պատկերը, Բ - հարավարևելյան մույթի հյուսիսային երեսի սուրբ ձիավորի պատկերը, Գ - ավագ խորանի անհայտ սրբի պատկերը

Ա Բ Գ

Մեղրո Փոքր թաղի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարները





Մեղրի քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու որմնանկարները

Կարճևանի Սուրբ Աստվածածին եկեղեցու որմնանկարները

Նկ. 2. Կարճևանի Ս. Աստվածածին եկեղեցու ավագ խորանի հյուսիսակողմյան (ձախից) և հարավակողմյան (աջից) որմնամույթերի որմնանկարները, 1793 թ. (լուս. 2017 թ.):

Կարճևանի Ս. Աստվածածին եկեղեցու ավագ խորանի Ս. Գևորգի (ձախից) և Ս. Սարգսի (աջից) որմնանկարները, 1793 թ. (լուս.՝ 2017 թ.):



«Կեցցե՛ Հայաստան, կեցցե՛ Հայաստան».

Մեղրու մեծ զավակ Փարամազի վերջին խոսքն էր 1915 թ. հունիսի 2-ին Կոստանդնուպոլսի սուլթան Բայազետի հրապարակում՝ կախաղահանության պահին

Փարամազ (Մատթեոս Սարգիսյան), 1863 թ. ծնվել է Մեղրիում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում: 1878-1883 թվականներին սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1884 թվականից զբաղվել է ուսուցչությամբ Նախիջևանում, ապա տեղափոխվել է Ճահուկ, այնուհետև՝ Արդաբիլ: 1897 թվականին իր ստեղծած ֆիդայիների խմբով անցել է Վան, սակայն ձերբակալվել է: Դատի ժամանակ արտասանած ճառում խիստ քննադատության է ենթարկել հայկական կոտորածները կազմակերպած թուրքական կառավարությանը: Դատարանի կողմից դատապարտվել է մահվան: Բայց Վանի ռուսական փոխհյուպատոսի միջնորդությամբ ազատվել է կալանքից և ուղարկվել Կովկաս: 1903 թվականին, երբ ռուսական իշխանությունները սկսել են իրագործել 1903 թվականի հունիսի 12-ի հայկական եկեղեցական կալվածքների բռնագրավման մասին օրենքը՝ Փարամազը կազմակերպել է Կովկասի փոխարքա Գոլիցինի ահաբեկումը: 1905-1906 թվականների հայ-թաթարական բախումների ժամանակ Փարամազը հայերին և Կովկասի թաթարներին կոչ է արել վերջ տալ ցարական կառավարության և թուրք լրտեսների կազմակերպած կոտորածներին: 1908 թվականին երիտթուրքերի հեղաշրջումից հետո անցել է Թուրքիա և Արևմտյան Հայաստան, քարոզել Օսմանյան կայսրությունում ապրող ժողովուրդների միջև բարեկամություն հաստատելու գաղափարը: Հետագայում անվստահություն է հայտնել երիտթուրքերի նկատմամբ, նրանց անվանել «հայոց դահիճներ»՝ կանխատեսելով նրանց հայաջինջ քաղաքականությունը: Հեղինակել է պիեսներ, հայկական մամուլում հանդես եկել հոդվածներով: 1914 թվականի հուլիսի 14-ին թուրքական իշխանությունների կողմից հնչակյանների ձերբակալությունների ժամանակ բանտարկվել է նաև Փարամազը և ամիսներ տևած դատավարությունից հետո 19 հոգու հետ կախաղան բարձացվել Կ. Պոլսում:

2001 թվականին Մեղրիում կանգնեցված հուշարձանը, որ ցնորական կրակոցներ է արձակել

Միջնադարյան Հայաստանի նշանավոր ամրոցներից մեկը՝ Մեղրու բերդը

Հիմն Մեղրիի

Ապրել պայքարել ես դու միշտ
Եկել դարերից իմ Մեղրի,
Տանջվել ես դու հանուն կյանքի,
Կերտել ուղին ապագայի:

Կրկներգ.
Մեղրեցիներ վեհ լեռների,
Եղեք ձեր հողին արժանի,
Սյունյաց երկիրն այս գեղանի՝
Ձեզնով է միշտ կենդանի:

Սիրում եմ երկինքը քո ջինջ,
Արևդ պայծառ է քո միշտ
Խոսքի, մրգի, երգի հայրենիք՝
Չքնաղ երկիր իմ Մեղրի:

Կրկներգ.
Մեղրեցիներ վեհ լեռների,
Եղեք ձեր հողին արժանի,
Սյունյաց երկիրն այս գեղանի՝
Ձեզնով է միշտ կենդանի:

ԽՈՍՔ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ՝
ԱՍՏՂԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ